ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վերլուծական տեղեկագիր

№ 13

Երևան – 2019

YEREVAN STATE UNIVERSITY
CENTER FOR CIVILIZATION AND CULTURAL STUDIES

Analytical Bulletin

№ 13

Yerevan 2019

ISSN 1829-4502

Հրատարակվում է ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Համարի գլխավոր խմբագիր՝ Դավիթ Հովհաննիսյան

Խմբագրական կազմ՝ Աննա Գևորգյան, Շուշան Կյուրեղյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան

Խմբագրական խորհուրդ՝

Դավիթ Հովհաննիսյան	բ.գ.թ., պրոֆեսոր, Արտակարգ և լիազոր դեսպան (նախագահ)
Արամ Սիմոնյան	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ,
Ռուբեն Սաֆրաստյան	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Արման Կիրակոսյան	պ.գ.դ., պրոֆեսոր, Արտակարգ և լիազոր դեսպան
Ռուբեն Շուգարյան	պ.գ.թ., Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց, Թաֆթս համալսարան (ԱՄՆ)
Աննա Օհանյան	քաղ.գ.դ. քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների պրոֆեսոր, Սթոնհիլ Քոլեջ (ԱՄՆ)
Սերգեյ Մինասյան	քաղ.գ.դ.
Հայկ Քոչարյան	պ.գ.թ., դոցենտ

© Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, 2019
© Երևանի պետական համալսարան, 2019

ISSN 1829-4502

Published by Scientific Council of Center for Civilization and Cultural Studies

Volume Editor-in-chief: David Hovhannisyan

Editorial Staff:
Anna Gevorgyan, Shushan Kyureghyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan

Editorial Board:

David Hovhannisyan	Professor and Ambassador Extraordinary and Plenipotentiary
Aram Simonyan	Doctor Professor, Corresponding Member of the Academy of Science of Armenia
Ruben Safrastyan	Doctor Professor, Member of Academy of Science of Armenia
Arman Kirakosyan	Doctor Professor and Ambassador Extraordinary and Plenipotentiary
Rouben Shougarian	Doctor, Fletcher School of Law and Diplomacy, Tufts University (USA)
Anna Ohanian	PhD in Political Science, Richard B. Finnegan Distinguished Professor of Political Science and International Relations, Stonehill College (USA)
Sergey Minasyan	Doctor of Political Science
Hayk Kocharyan	Doctor of History

© Center for Civilization and Cultural Studies, 2019
© Yerevan State University, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան, Միքայել Հովհաննիսյան
ՎԱՀՀԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 7-24

Աննա Գևորգյան
ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՐ.
ԱՅԱԹՈԼԼԱՀ ԽՈՄԵՅՆԻԻ ՋԱՆՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼ
ԱՇԽԱՐՀԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻՆ 25-36

Տաթևիկ Մկրտչյան,Հայկ Քոչարյան
ՊԱՆԿԻՍԻԻ ԿԻՐՃԸ՝ ՑԱՆՑԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ 37-92

Շուշան Կյուրեղյան
ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 93-116

Անուշ Բրուտյան
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ՝ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ
ԹԻՐԱԽ. ՆԱՎԹԱՄՈՒՂՆԵՐԻ ԵՎ
ԳԱԶԱՄՈՒՂՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ 117-132

Անդրանիկ Հարությունյան
ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» 133-156

Արա Մաթևոսյան
ՍԱՈՒԴԱԿԱՆ ԿՐՈՆԱՒՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ
«2030 ՏԵՍԼԱԿԱՆԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 157-178

CONTENTS

Davit Hovhannisyan, Mikayel Hovhannisyan
THE TRANSFORMATIONS OF WAHHABISM IN THE CONTEXT OF THE NEW POLICY OF SAUDI ARABIA 7-24

Anna Gevorgyan
ONE REVOLUTION FOR THE WHOLE WORLD: THE EFFORTS OF AYATOLLAH KHOMEINI TO UNITE THE MUSLIMS OF THE WORLD 25-36

Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
PANKISI GORGE IN THE CONTEXT OF TERRORIST NETWORK: NEW CHALLENGES 37-92

Shushan Kyureghyan
COMPARATIVE ANALYSIS OF TERRORIST LISTS 93-116

Brutian Anush
CRITICAL INFRASTRUCTURE OBJECTS AS A TARGET FOR TERRORIST ATTACKS: PIPELINES CASE 117-132

Andranik Harutyunyan
THE IMPORTANCE OF THE STRAIT OF HORMUZ IN THE CONTEXT OF “THREE SEA SYSTEM” 133-156

Ara Matevosyan
THE REACTIONS OF THE SAUDI RELIGIOUS SCHOLARS TO THE "SAUDI VISION 2030" 157-178

ՎԱՀՀԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ[1]

Դավիթ Հովհաննիսյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
dhovhannisyan@ysu.am

Միքայել Հովհաննիսյան
ԵՊՀ Արաբագիտության ամբիոն
mhov@ysu.am

Բանալի բառեր՝ *վահհաբականություն, Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբ, Սաուդյան Արաբիա, ահաբեկչություն, գաղափարախոսություն, ցանցայնացում*

1970-ական թվականներից համաշխարհային գործընթացներում աստիճանաբար ավելի ու ավելի ակնհայտորեն դրսևորվող այսպես կոչված վահաբականությունը մինչև վերջերս այս խնդրին անդրադարձած առանց բացառության բոլոր հետազոտողների կողմից ավանդաբար բխեցվում էր Սաուդյան Արաբիայի պետական քաղաքականության գաղափարական հիմնավորումից: Այս մոտեցումն առավել ընդգծված կերպով

[1] Սույն հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի 18T-5I380 «Իսլամական ծայրահեղականությունը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարտահրավերները» գիտական թեմայի ֆինանսավորման շրջանակում:

դրսևորվեց 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումից հետո:

Սակայն վերջին տաս տարիների ընթացքում այս հարցի վերաբերյալ հնչեցին նաև այլ տեսակետներ: 8 տարի առաջ Նայմեխենում կայացած գիտաժողովի ընթացքում ես զարմանքով արձանագրեցի, որ հոլանդացի գործընկերներից մեկը, որը նոր էր վերադարձել Էռ-Ռիադից, իր զեկուցման մեջ նշեց, որ Սաուդյան Թագավորության քաղաքականության մեջ ներկայումս առաջնային են ժողովրդավարական միտումները, իսկ վահաբական գաղափարախոսությունը մղվում է հետին պլան:

Հետագայում ևս բավականին հեղինակավոր մի քանի աղբյուրներից նման մոտեցումներ հնչեցին[2]: Այս նոր միտումն առաջացնում է մի քանի կարևոր հարցադրում, որոնցից առաջնային են, թերևս, հետևյալները.

ա) վահաբականություն և գաղափարախոսություն, թե՞ վահաբականություն իմա՝ գաղափարախոսություն,

բ)վահաբականություն և Սաուդյան Արաբիա, թե՞ վահաբականություն իմա՝ Սաուդյան Արաբիա

գ) և, վերջապես, արդյո՞ք ներկայում, ասելով վահաբականություն, մենք նկատի ունենք հստակ բնութագրվող և բոլոր հետազոտողների համար նույն իմաստն ունեցող երևույթ, թե՞ այս եզրույթն ունի մի շարք իմաստներ և նշանակություններ:

Հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այս երևույթի ստեղծման ակունքներին:

---

[2] Տես, օրինակ՝ J. Otterbeck.Wahhabi ideology of social control versus a new publicness in Saudi Arabia. https://www.researchgate.net/publication/257695153/_Wahhabi_ideology_of_social_control_versus_a_new_publicness_in_Saudi_Arabia, (մուտք՝ 15.08.2019), Мелихов И.А. Эволюция ваххабитского фактора в Саудовской Аравии. https://cyberleninka.ru/article/n/evolyutsiya-vahhabitskogo-faktora-v-saudovskoy-aravii, (մուտք՝ 10.09.2018):

Նախ նշենք, որ «վահաբականություն» անվանումը կիրառվում է միայն այն պատճառով, որ ուրիշ ավելի ճշգրիտ եզրույթ դժվար է առանձնացնել այս բավականին ամորֆ և բազմաբնույթ երևույթը բնութագրելու համար:

Այս եզրույթն առաջացել է դիտարկվող սուննիական հանաֆիական կրոնաիրավական ուղղության հիմքի վրա ստեղծված և տեղայնացված, այսինքն՝ կոնկրետ պայմաններին և քաղաքակրթական ու մշակութային առանձնահատկություններին հարմարեցված հոսանքի հիմնադիր Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի (1703-1791) անունից: Այս կրոնական և քաղաքական գործիչը 18-րդ դարի սկզբին Արաբական թերակղզու Նաջդ շրջանում նախաձեռնեց իսլամի, իր տեսանկյունից, մաքրմանը և վերակենդանացմանը նվիրված կրոնական շարժում:

Ներկայի Սաուդյան Արաբիայի տարածքը այդ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության կազմում էր, սակայն 18-րդ դարում այդ պետությունը ծանր և խորացող ճգնաժամի մեջ էր, ուստի վերջինի ազդեցությունը և վերահսկողությունը Արաբական թերակղզու էմիրությունների նկատմամբ շատ հարաբերական և սահմանափակ էր: Էմիրությունները և ցեղային միավորումներն անընդհատ իրար հետ կռվի և քաշքշուկի մեջ էին և հարձակումներ էին կատարում մեկը մյուսի վրա նույնկերպ, ինչպես նախաիսլամական ժամանակաշրջանում էր: Տնտեսապես այս տարածաշրջանը չափազանց հետամնաց էր և արտաքին ուժերի համար որևէ գրավչություն չուներ[3]:

[3] Արաբական թերակղզու և Սաուդյան Արաբիայի այդ ժամանակաշրջանի լավագույն պատկերը տալիս է Ա.Վասիլևը իր ֆունդամենտալ աշխատության մեջ՝ А. М. Васильев. История Саудовской Аравии (1745 - 1973). М., 1982 (մի շարք վերահրատարակումներ են եղել, ինչպես նաև թարգմանություններ արաբերեն, թուրքերեն և հիմնական եվրոպական լեզուների): Հետագայում

Սրբավայրերը՝ Մեքքան և Մադինան, ավանդաբար գտնվում էին Եգիպտոսի ազդեցության ներքո, որոնք կազմակերպում էին ուխտագնացությունները, ապահովում պաշտպանությունը, հետևում շինությունների վիճակին և այլն:

Կրոնական իրավիճակը Արաբիայի կենտրոնում և հարավում չափազանց խայտաբղետ էր: Օմանում ամրապնդվել էին իբադիյականները, Եմենում՝ զեյդիականները, Հիջազում և Նաջդում՝ չափազանց ուժեղ էր մի շարք սուֆիական տարիկաթների ազդեցությունը, որոնց շեյխերի գերեզմանները դարձել էին սրբավայրեր, և բազմաթիվ ուխտավորներ գալիս էին այցելելու և խոնարհվելու դրանց առջև:

Օսմանյան կայսրության թուլացման հետ նախկին ապակենտրոնացված իրավիճակը աստիճանաբար փոխարինվում է մեկ դրոշի, մեկ գաղափարի ներքո միավորվելու միտումներով: Հարկ է նաև նշել հատկապես այս շրջանների արաբական բնակչության ատելությունը Օսմանյան կայսրության և թուրք զավթիչների նկատմամբ, ինչը լրացուցիչ խթան հանդիսացավ օտարի ազդեցությունից ազատվելու և սեփական անկախությունը կերտելու համար:

Այս միջավայրում է սկսում իր գործունեությունը Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբը, որի ընտանիքը պատկանում էր շատ ազդեցիկ Բանու Թամիմ ցեղին: Պապը Նաջդի մուֆթին էր, իսկ հայրը՝ Ույայնայի կադին[4]: Գերդաստանի գրեթե բոլոր տղամարդիկ ալիմներ և ֆակիհներ էին: Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբը նույնպես մանուկ տարիքից ուսումնասիրում է Ղուրանի, հադիսների, շարիաթի և ֆիկհի ոլորտների մեջ մտնող

բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել այս թեմային, սակայն այդ բոլոր հետազոտությունների հիմքը եղել է նշված մենագրությունը:

[4] Կադի ՝ դատավոր շարիաթական դատարանում, այսինքն՝ կրոնահիրավական գիտությունների մասնագետ, ալիմ:

գիտությունները, դառնում *հաֆիզ* (այսինքն՝ անգիր սովորում Ղուրանը), հադիսների և ֆիկհի գիտակ: Նա խորանում է սուննիական մազհաբներից ամենապահպանողականի՝ հանբալիականի մեջ:

Հանբալիական մազհաբը ձևավորվել էր այն ժամանակաշրջանում, երբ լայն տարածում և մեծ ազդեցություն սկսեցին ձեռք բերել ռացիոնալիստական մութազիլիականությունը և միստիկական սուֆիականությունը, որոնք նոր մոտեցումներ առաջարկեցին աստծո և գոյի հետ կապված հարցերում, հավատի և կրոնի մեջ ներմուծեցին նախորդողներից բոլորովին տարբեր մոտեցումներ: Հանբալիական մազհաբը այդ ամենը հայտարարեց վնասակար նորարարություններ (*բիդա*) և արգելեց: Այս մազհաբին պատկանող ալիմների հիմնական գաղափարն այն էր, որ իսլամն ունի երկու անհերքելի և հավիտենական աղբյուր: Դրանք են Ալլահի ուղիղ խոսքը՝ Ղուրանը, որը հայտնվել է մարդկությանն իր ընտրած մարգարեի միջոցով, ինչպես նաև այդ մարգարեի սուննան, որը հաղորդվում է հադիսների միջոցով և պարունակում է Մուհամադի խոսքն ու գործը: Սուննան միայն լրացնում է Ղուրանի տեքստը և չի կարող հակասել վերջինիս:

Հանբալիական մազհաբի հետագա զարգացումը կապված է Իբն Թայմիյայի (1236-1328թթ.) անվան հետ, որն իր ամբողջ կյանքի ընթացքում ենթարկվել էր հալածանքների ու երեք անգամ ձերբակալվել էր իր հայացքների համար, սակայն դրանցից չեր հրաժարվել: Իբն Բատուտան, որը Դամասկոսում ներկա է գտվել Իբն Թայմիյայի քարոզին, գտնում էր, որ վերջինս հոգևոր խանգարումներ ունի: Իբն Թայմիյան բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է, նաև արձակել է մեծ քանակությամբ ֆեթվաներ, որոնցից մեկով թույլ է տալիս

ապստամբություն անարդար իշխանավորների դեմ և անառակ կառավարչի սպանություն: Մեղադրվել է Ալլահին մարդու կերպարանք տալու, նրա հատկությունները, որոնց մասին ասվում է Ղուրանում (լսել, նայել, բռնել և այլն) տառացիորեն հասկանալու (*թաշբիհ*) և սուննիական մյուս երեք մազհաբների մոտեցումներից տարբերվող տեսակետներ հայտնելու մեջ: Պայքարել է սուֆիների, փիլիսոփաների և «նորարարների» դեմ:

Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբը մանրամասն ուսումնասիրել է Իբն Թայմիայի և նրա աշակերտների գրքերը և ֆեթվաները: Իր բազմաթիվ ճամփորդությունների ժամանակ հանդիպել և դասեր է առել հանբալիական մազհաբը ներկայացնող տարբեր ալիմներից: Վերադառնալով Նաջդ՝ նա սկսում է իր քարոզը իր տեսակետից իսլամի հետ բոլոր անհամատեղելի երևույթների դեմ, ինչի համար խնդիրներ է ունենում տեղի բնակչության հետ[5]: Այդ տարիներին նա գրում է իր հիմնական աշխատությունը՝ «*Քիթաբ ալ-թաուհիդ*»-ը («Մատյան միաստվածության»), որի հիմնական գաղափարը բացարձակ, առանց որևէ շեղումների մոնոթեիզմի՝ միաստվածության հաստատումն է: Ալլահը միակն է և գտնվում է երկնքում՝ իր գահի վրա: Նրա կամքն, իշխանությունը և հզորությունն են միակ ուժն աշխարհում, և միայն նրան է պարտավոր հնազանդվել և երկրպագել հավատացյալը: Մահացածների, այդ թվում՝ Մուհամմադ մարգարեի, իրենց սրբությամբ համբավ ձեռք բերած շեյխերի գերեզմանների և դամբարանների այցելությունը նրանց առջև խոնարհվելու և Ալլահի առջև միջնորդություն հայցելու նպատակով անհավատության (*քուֆր*) դրսևորում է:

[5] Հարկ է նշել, որ տեղի բնակչությունը այդ ժամանակաշրջանում բավականին հեռացել էր Ղուրանում քարոզվող միաստվածության սկզբունքներից: Այս մասին մանրամասն տե՛ս՝ Ա. Վասիլևի նշված աշխատության 1-ին և 2-րդ գլուխները:

Թալիսմաններ և հմայագրեր կրելը անհավատություն է, Ալլահի առջև միջնորդություն խնդրելը անհավատություն է և բազմաթիվ այլ նման արգելքներ, որոնց խախտման համար պատիժը պետք է լինի արդեն այստեղ՝ երկրային կյանքում: Անհավատ էին հռչակվում բոլոր նրանք, ովքեր «*բիդ՛ա*»-ի մեջ էին մեղադրվում՝ շիաները, սուֆիները և այլոք:

Իր թշնամիներից նա ի վերջո ստիպված է լինում փախչել ադ-Դիրի՛յա, որտեղի էմիրն էր Մուհամմադ իբն Սաուդը (1710-1765): Այս երկու անձնավորությունների հանդիպումը բախտորոշ նշանակություն ունեցավ ամբողջ Միջին Արևելքի տարածաշրջանի համար:

Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի քարոզը, որը դատապարտում էր Մուհամմադ մարգարեի ումմայում (Մադինայի կրոնական համայնքը, որը ղեկավարվում էր Ալլահի խոսքով և նրա մարգարեով, ընկալվում էր որպես իդեալական հասարակության օրինակ, որին պարտադիր պետք է հետևել) հաստատված նորմերից և կանոններից հրաժարված Օսմանյան կայսրության վերնախավին, որը թութուն էր ծխում, գինի խմում, մետաքսե զգեստներ հագնում և ոսկե զարդեր կրում: Բացի այդ, սուֆիական եղբայրությունները՝ տարիկաթները, ստանում էին օսմանյան իշխանությունների օժանդակությունը և օգտվում էին նրանց հովանավորությունից, ինչը նպաստում էր նրանց տարածմանը նաև Արաբական թերակղզում: Նա դատապարտում էր նաև Հիջազի և Նաջդի բնակիչներին *թաուհիդից* (միաստվածություն) հրաժարվելու, գերեզմանները, այդ թվում՝ նաև Մուհամմադ մարգարեի դամբարանը սրբավայրեր և ուխտավայրեր դարձնելու, անբարոյականության, սնահավատության և այլ մեղքեր գործելու համար:

Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի ձևակերպած *ակիդայի* (իր կրոնական ուղղության հիմնական դրույթների հակիրճ ձևակերպած դավանաբանություն) կարևորությունը և կիրառականությունը շատ լավ հասկացավ Մուհամմադ իբն Սաուդը, որի ձեռքում այն վերափոխվեց, միֆոլոգեմները փոխակերպվեցին իդեոլոգեմների: *Ակիդան* դարձավ գաղափարախոսություն և օգտագործվեց որպես գաղափարական զենք Սաուդների մրցակիցների և թշնամիների դեմ պայքարում և հանդիսացավ այն առանցքը, որի շուրջ հետագայում ձևավորվեց Սաուդյան Արաբիայի թագավորությունը: Հասկանալի է, որ նման գենեզիսը այս կրոնաքաղաքական գաղափարախոսությունը վերափոխում էր պետականի:

Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբն իր քարոզներում կոչ էր անում վերադառնալ *սալաֆների* (նախնիների) հավատին, այդ իսկ պատճառով նրա և նրա հետևորդների ուսմունքն անվանվեց նաև սալաֆիականություն: Այս եզրույթը նույնպես չափազանց աղոտ է և դժվար բնութագրվող, քանի որ սալաֆների թվին էին պատկանում նաև մյուս մազհաբների վաղ շրջանի իմամները՝ Իբն Աբբասը, Անաս իբն Մալիքը, Աբու Հանիֆան, Հասան ալ-Բասրին, ալ-Բուխարին, Մուսլիմը և բազմաթիվ այլ զինակիցներ և հաջորդող երկու սերունդներին պատկանող հավատացյալներ[6]: Ահա ինչպես է նկարագրում այսպես կոչված վահաբականության կրոնագաղափարական շրջանակներում կիրառվող տերմինաբանության հետ կապված բարդությունները այս խնդիրների գիտակ Ա. Մուսալլին. «Սալաֆիականությունը չափազանց դիվերսիֆիկացված և բարդ գաղափարական ու

[6] Իմրան իբն Հուսայնից հաղորդվող հադիսում մարգարեն ասում է. «Իմ ումմայի լավագույն մարդիկ այս սերունդից են, հետո՝ դրան հաջորդող, այնուհետև՝ դրան հաջորդողը» (Մուսլիմ, 2535):

կրոնական առումներով մոտիվացված ուղղություն է և այն կառուցված չէ մեկ միավորված խոսույթի (դիսկուրսի) կամ հեղինակությունների խմբի կողմից: Որպես կանոն, բոլոր վահաբականները սալաֆիական են, բայց ոչ բոլոր սալաֆիականներն են վահաբական: Իսլամիզմը նույնպես մեկ այլ բարդ ուղղություն է, որն ընդգրկում է մեղմ և ծայրահեղական շարժումներ, սակայն այն էկվիվալենտ չէ վահաբականությանը: Չնայած որ իսլամիզմը, վահաբականությունը, սալաֆիականությունը կիսում են որոշ աստվածաբանական և ինտելեկտուալ դոկտրիններ, դրանք աստվածաբանական և քաղաքական առումներով շատ տարբեր են»[7]:

Վաղ շրջանի վահաբականությունն իսլամի հիմնական երկու աղբյուրների տառացի ընկալման պարտադրանքից բացի ուներ նաև, ինչպես վերը նշվել է, քաղաքական բաղադրիչ: Այն, նախևառաջ կապված էր միջցեղային բախումների մեջ թուլացած էմիրությունների և ցեղային դաշինքների միավորմանը, ուստի ուներ նաև ընդգծված հակաօսմանյան ուղղվածություն: Օսմանյան սուլթաններին Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբը անվանում էր «կեղծ խալիֆներ» և մեղադրում էր նրանց իսլամն աղավաղելու և վնասակար նորարարություններով փչացնելու մեջ:

Սաուդների ընտանիքի առաջնորդությամբ պետականության ստեղծումը կտրուկ բարձրացրեց վահաբականության գաղափարական և քաղաքական նշանակությունը: Այն օգտագործվում էր Նաջդում և Հիջազում միանձնյա իշխանություն ձեռք բերելու համար ծավալված պայքարում Սաուդների ընտանիքի հակառակորդների դեմ, որոնք մեղադրվում էին, շեյխի

[7] Ahmad Moussalli, Wahhabism, Salafism and Islamism: Who Is The Enemy?, January, 2009. Conflicts Forum Monograph, Beirut - London – Washington, http://conflicts forum.org/briefings/Wahhabism-Salafism-and-Islamism.pdf, (մուտք՝ 10.07.2019).

տեսանկյունից, հավատացյալի համար անթույլատրելի արարքների և անընդունելի կրոնական հայացքների մեջ:

Արդեն 20-րդ դարում, երբ նավթային հարուստ պաշարները հնարավորություն ստեղծեցին Սաուդյան Արաբիայի Թագավորության ղեկավարների համար իրենց կրոնագաղափարական և քաղաքական ազդեցությունը ծավալել ոչ միայն Միջին Արևելքում, այլ նաև այս տարածաշրջանից դուրս, վահաբականության դերն էլ ավելի կարևորվեց: Այն ակտիվորեն կիրառվեց թագավորության ազդեցությունը արաբական և մուսուլմանական աշխարհներում ընդլայնելու և խորացնելու համար:

Սակայն այս ուղղության նախահարձակ բնույթը, որի թիրախն էին հանդիսանում սկզբնական շրջանում հիմնականում, իրենց տեսակետից «սխալ» մուսուլմանները, աստիճանաբար որպես հակառակորդ և թշնամի սկսեց դիտարկել նաև բոլոր այլադավաններին:

Վահաբականության կրոնագաղափարական հիմնադրույթների տեղափոխումը քաղաքական քարոզչության դաշտ «սառը պատերազմի» ավարտից հետո ընդունեց քաղաքական տեխնոլոգիայի բնույթ և իր ագրեսիվ էությունը դրսևորեց ոչ միայն վահաբական քարոզիչների գործունեությանը օժանդակելով, բոլոր հնարավոր երկրներում այս քարոզչությանը ծառայող մզկիթների և մեդրեսեների ստեղծման ֆինանսավորմամբ, այլ նաև ծայրահեղական խմբերի կազմակերպմամբ, նրանց զինմամբ և ուղղորդմամբ: Ահաբեկչությունը՝ որպես քաղաքական նպատակներին հասնելու միջոց, լայնորեն կիրառվեց աշխարհի բոլոր ծայրերում: Այս հանգամանքը հայտնվեց լայն շրջանակների ուշադրության

կենտրոնում հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո[8]:

Չնայած բազմաթիվ փաստերի և վկայությունների, որոնք ապացուցում էին Սաուդյան Արաբիայի կողմից միջազգային իսլամական ահաբեկչության ֆինանսավորման և օժանդակման հանգամանքը, այս երկրի իշխանությունները ներկայում ևս շարունակում են իրականացնել իրենց ծրագրերը: Այդ մասին է խոսում, օրինակ, Մեծ Բրիտանիայում 2017 թ.-ին այս պետության կառավարության կողմից «Հենրի Ջեկսոն» ընկերությանը պատվիրած և հրապարակված մի վերլուծություն, որում մասնավորապես, ասվում է հետևյալը. «Սաուդյան Արաբիան է հանդիսանում Բրիտանիայում էքստրեմիզմի ամենամեծ ֆինանսավորողը»[9]:

Զեկույցի հեղինակները, շատ լավ գիտակցելով, որ իրենց կողմից արված առաջարկությունները բավարար չեն այս իրավիճակը որոշ չափով կարգավորելու համար, պնդում են, որ կառավարությունը պետք է արգելի մզկիթների, մեդրեսեների և այլ տեսակի կրոնական կառույցների ֆինանսավորումը արտասահմանյան երկրներից:

Վահաբականության տարածման համար Սաուդյան Արաբիայի Թագավորության իշխանությունները [10] ծախսում են

---

[8] Christopher M. Blanchard. The Islamic Traditions of Wahhabism and Salafiyya. Updated January 24, 2008, FA, Order Code RS21695, https://fas.org/sgp/crs/misc/RS21695.pdf, (մուտք՝ 15.09.2019):

[9] Saudi Arabia largest funder of extremism in UK, report finds, 5 July, 2017, https://www.irishtimes.com/news/world/uk/saudi-arabia-largest-funder-of-extremism-in-uk-report-finds-1.3144020, (մուտք՝ 15.08.2019).

[10] Matthew Levitt, Charitable Organizations and Terrorist Financing: A War on Terror Status-Check, March 19, 2004, https://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/charitable-organizations-and-terrorist-financing-a-war-on-terror-status-che, (մուտք՝ 15.09.2019), Terrorist Finance: Action Request for Senior Level Engagement on

միլիարդավոր դոլարներ: Խնդրին նվիրված բազմաթիվ զեկույցներից մեկում մանրամասն ներկայացվում են այն ծրագրերը, որոնք իրականացվում են, ինչպես հեղինակներն են նշում, «սաուդական աղանդի ուսմունքը տարածելու համար»[11]: Օրինակ, սաուդական ֆինանսավորմամբ Բանգլադեշում կառուցվում է 560 մզկիթ, ինչն առաջացրել է ոչ միայն աշխարհիկ հայացքներ ունեցող մարդկանց և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների, այլ նաև սուննի մեծամասնության տարբեր ճյուղերի պատկանող հավատացյալների մտահոգությունը. նրանց անհանգստացնում է այն հանգամանքը, որ այդ մզկիթները դառնում են վահաբական քարոզչության և կրոնական անհանդուրժողականության և էքստրեմիզմի տարածման կենտրոններ[12]:

Նման վկայությունների թիվը շատ է: Առանձնահատուկ անհանգստություն է առաջացնում այն հանգամանքը, որ չափազանց դժվար է հայտնաբերել հատկապես ծայրահեղական խմբերի ֆինանսավորման աղբյուրները և քարոզչության ու ահաբեկչական գործողությունների վրա ծախսվող գումարների ընդհանուր ծավալը: Այս գործն ավելի է բարդանում այն պատճառով, որ նման նպատակների համար են ուղղվում նաև զաքաթի հավաքման հատուկ ցանցերի միջոցով ակումուլացվող գումարները:

Terrorism Finance, 30 December, 2009, https://wikileaks.org/plusd/cables/09STATE131801_a.html, (մուտք՝ 15.09.2019), Christopher M. Blanchard and Alfred B. Prados, Saudi Arabia: Terrorist Financing Issues Updated September 14, 2007, CRS Report for Congress, https://fas.org/sgp/crs/terror/RL32499.pdf, (մուտք՝ 15.09.2019), Does Saudi Arabia Fund Terrorism? *Middle East Quarterly,* Spring 2006, pp. 63-64, https://www.meforum.org/934/does-saudi-arabia-fund-terrorism, (մուտք՝ 15.09.2019).

[11] How Saudi Arabia exports Wahhabism, 29 April, 2017, https://international.la-croix.com/news/how-saudi-arabia-exports-wahhabism/5095, (մուտք՝ 18.09.2019).

[12] Նույն տեղում:

Այս ամենով հանդերձ՝ հարկ է նշել, որ հատկապես վերջին 20-25 տարիների ընթացքում Սաուդյան Արաբիայի այդ նպատակներին հասնելու ջանքերը առանձին հաջողություններ չեն գրանցել: Նրանք, օրինակ, չկարողացան ամրապնդվել նախկին Խորհրդային Միության մուսուլմանական բնակչություն ունեցող հանրապետություններում: Չնայած գործադրված ջանքերին և ծախսված գումարներին՝ վահաբականությունը Եգիպտոսում իր ազդեցությամբ զիջեց Մուսուլման Եղբայրներին: Պարսից ծոցի երկրներում նույնպես Սաուդյան Արաբիայի կրոնագաղափարական և քաղաքական քարոզչությունը չպսակվեց հաջողությամբ:

Բավականին ծանր հետևանքներ ունեցավ վահաբականության ներթափանցումը Ռուսաստանի Դաշնության սահմաններից ներս Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ որոշ տարածքներում ի հայտ եկան անջատողական տրամադրություններ: Հատկապես ծանր իրավիճակ ստեղծվեց Հյուսիսային Կովկասում: Սակայն չնայած տարբեր միջոցներով և ձևերով կատարված ներդրումներին, Սաուդյան Արաբիայի ջանքերն այստեղ էլ իրական արդյունքներ չտվեցին: Ռուսաստանը լուրջ բարդություններով և խնդիրներով, սակայն կարողացավ ի վերջո իրավիճակը վերցնել իր հսկողության տակ:

Բնական է, որ նման անհաջողություններից հետո թագավորության նոր սերնդին պատկանող վերնախավը ստիպված եղավ վերաիմաստավորել պետության քաղաքականությունն այս ոլորտում: Ճիշտ է Ա. Մելեխովի հետևյալ դիտարկումը. «Սաուդական թագավորության, որը վահաբական շարժման պատմական արդյունքն է և իր հպատակների թվում ունի այս աստվածաբանական ուսմունքի մեծաքանակ կողմնակիցներ, ներկայիս գործելակերպը վկայում է

վահաբականության ընկալման հարցում սկզբունքային տրանսֆորմացիաների, սաուդցիների ձգտման մասին համակերպվելու քաղաքակրթական գործընթացներին և հեռարկվելու առավել օդիոզ մոտեցումներից»[13]:

Սակայն հարց է առաջանում, թե որքանո՞վ է դա հնարավոր և ի՞նչ կորուստների կարող է հանգեցնել բավականին կտրուկ փոփոխությունների իրականացումը կրոնագաղափարական ոլորտի նման սկզբունքային և նուրբ ոլորտում: Այն խնդիրները, որոնց ներկայումս բախվում է Սաուդյան Արաբիան, վկայում են այն մասին, որ թե երկրի ներսում, և թե՛ նրա սահմաններից դուրս այս նոր քաղաքական գիծը հանդիպում է դիմադրության:

Երկրի ներսում այդ դիմադրության իրականացման ներուժն ունեն այն շրջանակները, որոնք թագաժառանգ Մուհամմադ իբն Սալմանի կողմից նախաձեռնած փոփոխությունների հետևանքով կորցնում են իրենց դերն ու ազդեցությունը երկրում: Դրանք, նախևառաջ, վահաբական կրոնահիրավական ուսմունքի գիտակ ալիմները և ֆակիհներն են, որոնց առավել հեղինակավոր մասը պաշտոններ է զբաղեցնում կրոնի և բարոյականության վահաբական նորմերը պաշտպանող և տարածող բազմաթիվ պետական կոմիտեներում և նման այլ կառույցներում: Բացի այս խմբից, ընդդիմություն են նաև այն ազդեցիկ անձնավորությունները, որոնց մի մասը պատկանում է թագավորական ընտանիքին և որոնց նկատմամբ թագաժառանգը կիրառեց հակակոռուպցիոն պայքարի տրամաբանությունից բխող պատժիչ և սահմանափակող միջոցներ:

[13] Мелихов И.А. Эволюция ваххабитского фактора в Саудовской Аравии, стр. 67-81, https://cyberleninka.ru/article/n/evolyutsiya-vahhabitskogo-faktora-v-saudovskoy-aravii, (մուտք՝ 10.08.2019).

Հարկ է նաև հաշվի առնել, որ վահաբականությունը կարևոր դերակատարություն ուներ և ներկայումս էլ ունի պետության հովանու տակ արաբական ցեղերի միասնականությունը ապահովելու գործում: Այս հանգամանքը հատկապես կարևոր է հաշվի առնել՝ նկատի ունենալով այն փաստը, որ Սաուդյան Արաբիայի բնակչությունը բավականին խայտաբղետ է կրոնական և էթնիկական պատկանելության տեսակետից:

Վահաբականությունը խնդիրներ ունի նաև ցանցայնացման հետ: Ցանցային համակարգերի ստեղծումն իր առավել էֆեկտիվ տարբերակում, բացի արժեքային առումով ընկալելի և ընդունելի տեքստից, պահանջում է նաև ազատ ելք և մուտք՝ առանց որևէ ստորադասման: Սակայն վահաբականությունը՝ իր արմատներն ու հենարանը ունենալով Սաուդյան Արաբիայում, ձևավորվելով այդ պետության իշխանությունների շահերի սպասարկման համար, դատապարտված է հիերարխիկ կառուցվածք ունենալու, ինչն անհնար է դարձնում ազատ ցանցային կոմունիկացիան:

Վերը շարադրած դիտարկումները հնարավորություն են տալիս պատասխանել այն հարցերին, որոնք ձևակերպվել էին սույն հոդվածի սկզբում:

1. Վահաբականությունը հավատացյալների համար անշուշտ շարունակում է մնալ կրոնական ուսմունք, վարդապետություն: Սակայն դեռ իր ստեղծման ժամանակաշրջանում այն ծառայեց նաև որպես գաղափարական հիմք Սաուդների ընտանիքի դրոշի ներքո ցեղերի միավորման համար: Հատկապես աֆղանական պատերազմի և Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակի ազդեցությամբ վահաբականության՝ որպես գաղափարախոսության իդեոլոգեմները սկսեցին կիրառվել որպես քարոզչական գործիքներ՝ վերածելով այս կրոնագաղափարախոսությունը քաղաքական տեխնոլոգիայի:

2. Օրինաչափ է վահաբականությունն իր բոլոր գոյություն ունեցող վարկածներով հանդերձ, նույնացնել Սաուդյան Արաբիայի Թագավորության հետ, քանի որ այս պետությունն է իր բոլոր հնարավորություններն օգտագործում այն քարոզելու և տարածելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանցայնացման փորձերը անհաջողությամբ պսակվեցին, Սաուդյան Արաբիան մնում է միակ կենտրոնը, որը պատասխանատու է վահաբականության հետ կապված և վերջինիս կրոնագաղափարական դրույթներից բխող գործողությունների համար:

3. Վերջապես, երրորդ, ամենաբարդ հարցը: Անշուշտ, սաուդական և, ընդհանուր առմամբ, վահաբական կրոնական գործիչների տեսակետից այն ներկայացնում է կուռ և հստակ վարդապետություն, որի հիմնադրույթները շարադրված են վահաբականության հիմնադրի և նրա հետևորդների աշխատություններում: Սակայն այս կրոնական ուսմունքի գաղափարականացումը և քաղաքական ծրագրերի իրականացման նպատակով քաղաքական տեխնոլոգիայի վերածելը զգալի իմաստափոխությունների ենթարկեց այն միֆոլոգեմները, որոնցից այն ծնվել էր: Վահաբականությունը շարունակում է ենթարկվել փոփոխությունների և ավելի ու ավելի է հեռանում իր իրական ակունքներից: Միաժամանակ, այն մնում է որպես կարևոր գաղափարական և քարոզչական զենք, որը տարբեր աստիճանի հաջողությամբ կիրառում է սաուդական վերնախավը ոչ միայն իր աշխարհաքաղաքական ծրագրերի իրականացման համար, արտաքին քաղաքականության և տնտեսության ոլորտներում, այլ նաև ներքին քաղաքականության մեջ:

THE TRANSFORMATIONS OF WAHHABISM IN THE CONTEXT OF THE NEW POLICY OF SAUDI ARABIA

Abstract

Davit Hovhannisyan
Center for Civilization and Cultural Studies,YSU
dhovhannisyan@ysu.am

Mikayel Hovhannisyan
Department of Arabic Studies, YSU
mhov@ysu.am

Key words` *Wahhabism, Muhammad ibn Abd-al Wahhab, Saudi Arabia, terrorism, ideology, network*

The Wahhabism was perceived as an offspring of the Saudi Arabia from the very beginning of its growing role in the foreign relations. In the last ten years, however, there have been emerged different viewpoints concerning the relations of Wahhabism and the state in which it had been raised. Some of those ideas detach the Wahhabism from the state and speak about Saudi Arabia as a kingdom which has chosen the path of democracy. These viewpoints give birth to several questions, some of which are discussed in the article. In particular, the article gives answer to the following questions: a) Can we say Wahhabism and ideology or Wahhabism means ideology? b) Can we say Wahhabism and Saudi Arabia or Wahhabism means Saudi Arabia? and c) Do we have the word Wahhabism as a term with exact meaning or does it have several definitions?

ТРАНСФОРМАЦИЯ ВАХХАБИЗМА В КОНТЕКСТЕ ОБНОВЛЕННОЙ ПОЛИТИКИ САУДОВСКОЙ АРАВИИ

Аннотация

Давит Ованнисян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
dhovhannisyan@ysu.am

Микаэл Ованнисян
Кафедра Арабистики, ЕГУ
mhov@ysu.am

Ключевые слова: *ваххабизм, Мухаммад ибн Абд аль-Ваххаб, Саудовская Аравия, терроризм, идеология, сетевые структуры.*

В международных отношениях все больше возрастает роль ваххабизма, зародившегося на территории/в Саудовской Аравии. Несмотря на это, в течение последних десяти лет возникли различные точки зрения по поводу соотношения самого ваххабизма и государства. Согласно некоторым идеям ваххабизм отчужден/отделен от государства, которое (в свою очередь) избрало демократический путь. Именно эти различия послужили основой для ряда вопросов, некоторых из которых и рассматриваются в данной статье. В статье даются ответы на следующие вопросы: 1. Можем ли мы рассматривать ваххабизм и идеологию или это одно и то же; 2. Возможно ли отождествлять ваххабизм и Саудовскую Аравию или же нет; 3. Можно ли утверждать, что сегодня, говоря ваххабизм, мы подразумеваем явление с определенным и четким описанием, которое имеет один и тот же смысл для всех исследователей или же существует целый ряд значений и толкований этого термина?

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՐ. ԱՅԱԹՈԼԼԱՀ ԽՈՄԵՅՆԻԻ ՋԱՆՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼ ԱՇԽԱՐՀԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻՆ[1]

Աննա Գևորգյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
anna.gevorgyan@ysu.am

Բանալի բառեր՝ *հեղափոխություն, այաթոլլահ Խոմեյնի, շիա, սուննի, Վելայաթե ֆաղիհ, միասնականություն*

«Նրանք, որ փորձում են սեպ խրել շիա-սուննի հարաբերություններում, ոչ սուննի են, ոչ էլ շիա, գերտերությունների գործակալներ են ու իսլամի թշնամիներ»:
Այաթոլլահ Խոմեյնի

Իրանում 1978-1979 թթ. տեղի ունեցած Իսլամական հեղափոխության գաղափարախոս ու ռահվիրա այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնիի նպատակներից մեկը ողջ աշխարհի մուսուլմանների համախմբումն էր այդ հեղափոխության հովանու ներքո՝ ումմայի՝ որպես իսալամական կարևոր միֆոլոգեմի արդիականացմամբ: Հեղափոխության փիլիսոփայության հիմքում դրված «Վելայաթե Ֆաղիհ» հասկացությունը, որ ենթադրում էր կրոնագետ-իրավագետների կողմից կառավարվող արդար

[1] Սույն հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի 18T-5I380 «Իսլամական ծայրահեղականությունը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարտահրավերները» գիտական թեմայի ֆինանսավորման շրջանակում:

պետական համակարգի կառուցում ումմայի գաղափարի տրամաբանությամբ, ունիվերսալ դեղատոմս էր համարվում բոլոր մուսուլմանների համար: Ու քանի որ արդար կառավարմամբ իշխանություն ձևավորելու հեռահար նպատակը արդար աշխարհակարգ հիմնելն էր, այաթոլլահ Խոմեյնին իր առաքելությունն էր համարում իր ուղերձը բոլոր մուսուլմաններին հասցնելն ու հեռահար այդ նպատակի իրագործման ժամանակաշրջանը հնարավորինս մոտեցնելը:

Հոդվածում կքննարկենք խոսույթային ու դիվանագիտական մակարդակում արված այն քայլերը, որ ձեռնարկել է այաթոլլահ Խոմեյնին մուսուլմաններին համախմբելու իր հեռահար նպատակին հասնելու համար:

Խոմեյնին համարում էր, որ Իսլամական հեղափոխությունը ստեղծել է բոլոր նախադրյալները, որպեսզի Իրանն ու «ումմայի մաս կազմող եղբայրական ազգությունները» միավորվեն և այդ պատճառով է, որ միջազգային ուժերը փորձում են ամեն կերպ վիժեցնել այդ գործընթացը[2]: Իր գաղափարախոսության առանցքային դրույթներից մեկը Խոմեյնին դարձնում է միասնականության գաղափարը: Միասնականությունը, սակայն, բազմաշերտ հասկացություն է դառնում Խոմեյնու ժամանակաշրջանի համար. Իրանի հեղափոխության առաջնորդը խնդիր ուներ համաիրանական միասնականության գաղափարի ամրապնդման, միևնույն ժամանակ իր գաղափարախոսության հիմքում էին համաշիական միասնականության դաշտ ձևավորելու համար տարրերը: Հեղափոխության իսլամական անվանումն ու իսլամական արժեքների առաջնայնացումը հնարավորություն էր

[2] Խոմեյնին շիա-սուննի միասնության մասին, https://www.youtube.com/watch?v=oTELP6UDW-g (մուտք՝ 10.10.2019):

տալիս նաև խոսել համամուսուլմանական միասնականության մասին:

Մուսուլմանների միասնականության ու այդ միասնականության խաթարումը որպես ումմայի համար սպառնալիք դիտարկվում է դեռևս Ղուրանի տեքստում, իսկ այնուհետև նաև բազում թաֆսիրներում: Ղուրանի 8-րդ սուրայի 48-րդ այան ասում է՝ «...Եվ մի՛ վիճեք, այլապես կկորցնեք ձեր սիրտը և ձեր ուժը կանհետանա»: Հետագայում բազում մուսուլմաններ տեսաբաններ ու Ղուրանի թաֆսիրների մեկնաբաններ անդրադարձել են մուսուլմանների՝ միասնականության այլընտրանքի բացակայության խնդրին:

Ումմայի միասնականության ու ումմայի անդամների՝ միասնական պայքարի անհրաժեշտության մասին այաթոլլահ Խոմեյնին խոսում էր դեռևս մինչև Իսլամական հեղափոխությունը. վաթսունականներին Իրանի շահի վարած պրո-ամերիկյան քաղաքականության դեմ խոսելիս ու գործելիս: 1964 թ.-ին, օրինակ, երբ Իրանի Մաջլեսը վավերացնում է Վիեննայի կոնվենցիան՝ այդպիսով մի շարք փոփոխություններ կատարելով երկրի դատական համակարգում, այաթոլլահ Խոմեյնին այս քայլը դատապարտող ուղերձ է հղում ոչ միայն Իրանի հասարակությանը, այլև բոլոր մուսուլմաններին: Կարևոր իր այդ ուղերձում իրանական բանակին, քաղաքական գործիչներին, առևտրականներին ու ողջ հասարակությանն ուղղված նախազգուշացնող տողերի կողքին ասվում է. «Իրանի Ուլեմներ, իսլամի մարջաներ, ես զգուշացնում եմ ձեզ վտանգի մասին, կրոնական կենտրոնների դասախոսներ, ուսանողներ, Նաջաֆ, Ղոմ, Թեհրան, Մաշհադ, Շիրազ, ես զգուշացնում եմ ձեզ վտանգի մասին: Մուսուլման մարդիկ, մուսուլման ժողովուրդների

առաջնորդներ, մուսուլման ժողովուրդների նախագահներ ու թագավորներ, եկե՛ք մեզ օգնության, Իրանի շահ, փրկի՛ր քեզ»[3]:

Այս ահազանգը հնչեցվում էր ողջ իսլամական աշխարհի համար՝ պնդելով, որ այն, ինչ տեղի է ունենում Իրանում՝ «սպիտակ հեղափոխության» անվան տակ, այլ բան չէ, քան ոտնձգություններ իսլամի ու իսլամական արժեքների հանդեպ: Իր դասախոսությունների ընթացքում Խոմեյնին ավելի ու ավելի շեշտադրում էր այն հանգամանքը, որ հասարակության մեջ առկա բոլոր ախտերն ու խնդիրները ծագում են այն պատճառով, որ օտարերկրյա գործակալների ազդեցությամբ հասարակությունը հեռացել է իսլամական ակունքներից և որ լուծումը կարող է լինել միայն իսլամական կրոնագետների առաջնորդությամբ կառավարումը: Ու թեև իրանական հասարակության խնդիրների մասին այաթոլլահ Խոմեյնին հաճախ դիմում էր նաև Իրանի սահմաններից դուրս գտնվող կրոնագետներին ու մուսուլմաններին, միաժամանակ, սակայն, նրանց կողմից աջակցություն ակնկալում էր միայն բարոյական ու գաղափարական մակարդակում:

Հատկանշական է, որ Եգիպտոսի կառավարության հետ կապեր ունենալու ու օտարերկրյա ուժերին Իրանի ներքին գործերին խառնելու, Եգիպտոսի ղեկավար Նասերից գումար ստանալու մեղադրանքի համատեքստում, Իրանի շահը մի կեղծ «դիվանագետ» է ուղարկում Խոմեյնու հետ հանդիպման: Դիվանագետն այդ ներկայանում է որպես Գամալ Աբդ Ալ-Նասերի սուրհանդակ ու շնորհակալություն հայտնում նրա ջանքերի համար Իսրայելի դեմ պայքարում և փոխանցում Աբդ Ալ-Նասերի պատրաստակամությունը օգնելու այաթոլլահին՝ բոլոր հնարավոր

[3] Baqer Moin, “Khomeini: Life of the Ayatollah”, London, 2009 (Republished version), pp.82-83.

միջոցներով՝ ներառյալ նյութական ու զենք-զինամթերքի տեսքով: Սուրհանդակի փոխանցմամբ՝ Աբդ ալ-Նասերի համար կարևոր է օգնել այաթոլլահին հաղթանակ տանել իր պայքարում: Խոմեյնին, սակայն, պատասխանում է՝ «Ներկա պայքարը ներքին խնդիր է մեր երկրի համար: Հաջողության հասնելու համար մենք կարիք չունենք արտաքին օգնության կամ միջամտության: Փոխանցե՛ք իմ ողջույնները նախագահ Աբդ Ալ-Նասերին: Եվ տեղեկացրե՛ք, որ եթե ցանկանում է օգնել մեզ մեր պայքարում ընդդեմ Իսրայելի, թող հեռարձակի մեր նորություններն ու ուղերձներն աշխարհով մեկ: Ահա այն ամենն, ինչ կարող եք անել մեզ համար և մենք որևէ այլ ակնկալիք չունենք ձեզնից»[4]: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ Խոմեյնին կարող էր կռահել դիվանագետի կեղծ լինելն ու կեղծ օրակարգը, սակայն նրա կենսագիրներն այս դրվագը ներկայացնում են որպես փաստ այն մոտեցման, որ այաթոլլահը բոլոր հնարավոր միջոցներով ընդդիմանում էր օտարերկրյա միջամտություններին՝ ոչ միայն այն դեպքում, երբ նրանք շահի կողմնակիցներն էին, այլ նաև այն դեպքում, երբ պատրաստակամություն էին հայտնում օգնել իրեն ու իր նախաձեռնած շարժմանը:

Պետք է ընդգծել նաև, որ օտարերկրյա միջամտություններին դեմ ու հանուն երկրի ինքնիշխանության նրա ելույթները նրան միայն կրոնական առաջնորդից վերածում են արդեն նաև քաղաքական գործչի, որը քաղաքական օրակարգ է առաջ քաշում ու քաղաքական մեղադրանքներ հնչեցնում գործող իշխանության նկատմամբ:

[4] A. Dehnovi, *Qiyam-e Khunin-e Panzdah-e Khordad-e* 42 *beh Ravayat-e Asnad,* Tehran, 1360/1981, հղված՝ Baqer Moin, “Khomeini: Life of the Ayatollah”, London, 2009 (Republished version), pp. 82-83.

Այաթոլլաի Խոմեյնիի բռնագաղթը Թուրքիա, իսկ այնուհետև Փարիզ, նրան դարձնում է իսլամական հալածյալի մարմնացում: Այդ կերպարից օգտվելով՝ նա իսլամական քարոզներ է կարդում ու դրանք տարածում ժամանակակից տեխնիկական միջոցներով: Այդ ուղերձներում Խոմեյնին շարունակում է խոսել իսլամական համերաշխության, իսլամական ումմայի վերակազմավորման ու իսլամական կառավարման անհրաժեշտության մասին:

Իսլամական հեղափոխության հաղթանակից ու Իսլամական հեղափոխության արժեքների հիման վրա Իսլամական Հանրապետություն ստեղծելուց հետո, այաթոլլաի Խոմեյնին ու նրա աջակիցները մուսուլմանական միասնականության ու իսլամական ումմայի գաղափարը ներառում են նաև երկրի սահմանադրության մեջ: 1979 թ. դեկտեմբերին հանրաքվեով ընդունված երկրի սահմանադրության 11-րդ հոդվածը[5]փաստում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունն իր քաղաքականությունը խարսխելու է իսլամական ումմայի միասնության ու համագործակցության վրա և շարունակելու է իր ջանքերը մինչև որ կհաստատվի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնություն իսլամական աշխարհում[6]**:**

Միասնականության ավելի լայն համատեքստն էլ Խոմեյնին խարսխում էր աշխարհի բաժանման մասին իր պատկերացումների վրա: Ըստ այդ պատկերացումների՝ աշխարհը բաժանվում էր բռնարարների ու բռնաճնշվածների: Բռնարարների շարքում էին ժամանակի գերտերություններ ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը, իսկ նրանց տիրապետության տակ ընկած երրորդ աշխարհի պետությունները բռնաճնշվածների շարքում էին: Այս

[5] Այս հոդվածը նույնությամբ պահպանվել է նաև 1989 թ.-ի սահմանադրական փոփոխություններից հետո:

[6] ԻԻՀ Սահմանադրություն, հասանելի է՝ https://rc.majlis.ir/fa/content/iran_constitution, (մուտք՝ 03.10.2019):

բռնաճնշվածների մեջ էլ, սակայն, ըստ Խոմեյնիի կան բռնարարների աջակիցներ. նրանք, որ ի հեճուկս իրենց երկրների ու հասարակությունների շահերի, աջակցում են գերտերությունների քաղաքականությանը: Այաթոլլահը սրանց թվում էր դասում Իրանի շահին, Թուրքիայի ու Մերձավոր Արևելքի արաբական երկրների մի շարք ղեկավարների: Այս հանգամանքով էր Խոմեյնին պայմանավորում մուսուլման բնակչություն ունեցող երկրների մեծ մասի անհաջողություններն ու հասարակությունների կրած զրկանքները:

Իսլամական ումման, սակայն, որի մասին խոսում էր Խոմեյնին, միասնական ղեկավարման առաջնորդությամբ չէ, որ պիտի հաջողության հասներ: Ըստ այաթոլլահի՝ յուրաքանչյուր երկրում, որտեղ կա մուսուլման բնակչություն, պետք է հաստատվի կրոնագետների կառավարում[7], որի արդյունքում նույնատիպ կառավարմամբ մուսուլմանական երկրները հնարավորություն կունենան ավելի սերտ համագործակցության քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտներում[8]: Այլ կերպ ասած՝ Խոմեյնու առաջ քաշած «ումմա իսմայիլիան» իսլամական գլոբոլիզացիոն պրոյեկտի օրինակ էր, որտեղ իսլամական արժեքների հիման վրա ստեղծված օրենքներն ու կանոնները հնարավորություն էին տալու ստանդարտիզացիայի ու ունիֆիկացիայի միջոցով հասնել միասնական իսլամական աշխարհի գոյությանը:

Այս մոտեցումն իր հովանու ներքո էր ջանում հավաքել ոչ միայն շիա, այլև սուննի մուսուլմաններին: Սուննի իսլամական մտածողների գաղափարներում նույնպես կային աղերսներ այն

---

[7] "سید روح‌الله خمینی"ولایت فقیه, Բեյրութ, 1970 թ.:

[8] Shireen T. Hunter, “Iran and the spread of The Islamic Revolution”, *Third World Quarterly*, Vol. 10, No. 2, Islam & Politics (Apr., 1988), pp. 730-749.

արժեքների, որ տարածում էր այաթոլլաի Խոմեյնին, և նրա համար դժվար չէր դրանք ներկայացնել համաիսլամական լույսի ներքո: Այսպիսի մոտեցումներ կային, օրինակ, Սայիդ Կուտբի գործերում, որի աշխատությունները նշանակալի ազդեցություն ունեին Իրանի հեղափոխականների ու նախահեղափոխական իսլամիստական խոսույթի ձևավորման վրա: Խարսխված լինելով քաղաքականության մեջ Իսլամի խաղացած կենտրոնական դերի գաղափարի վրա՝ Խոմեյնիի գաղափարախոսությունն աղերսներ ուներ սուննի մտածողների գաղափարների հետ: Խոմեյնու մոտեցումն առ այն, որ «Իսլամը քաղաքական է և ուրիշ ոչինչ», այլ բան չէր, քան այն, ինչի մասին բարձրաձայնում էին սուննի իսլամիստները[9]:

Ընդգծելու համար շիա-սուննի միասնության գաղափարը Խոմեյնին իր ուղերձներում հաճախ անդրադառնում էր այն խնդրին, որ իսլամական համայնքի մեջ տարաձայնություններն ուղղորդվում ու սնվում են գերտերությունների կողմից: «Ես հուսով եմ, որ գիտակցելով, որ բոլոր մուսուլմանները եղբայրներ են, բոլոր իսլամական երկրները հաղթանակ կտանեն գերտերությունների դեմ պայքարում և հաջողության կհասնեն իսլամական կարգեր հաստատելու գործում»[10]:

Խոմեյնու համոզմամբ՝ կոռումպացված տարրերի պսեվդո-գաղափարախոսությունների արդյունքում է որ գոյություն ունի շիա-սուննի տարանջատումն իսլամական աշխարհում և որ դրա

---

[9]Shadi Hamid and Sharan Grewal, "What Iran's 1979 Revolution meant for the Muslim Brotherhood", https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2019/01/24/what-irans-1979-revolution-meant-for-the-muslim-brotherhood/ (մուտք՝ 12.09.2019).

[10] "صحیفه امام، مجموعه آثار امام خمینی"جلد 6صفحات 271"سخنرانی در جمع علما و اقاشر مختلف مردم (ریشه اختلافات داخلی)", հասանելի՝ https://farsi.rouhollah.ir/library/sahifeh-imam-khomeini/vol/6/title/114, (մուտք՝ 20.09.2019):

դեմ պայքարում լավագույն միջոցը իսլամական գիտելիքի տիրապետումն է ու իսլամական օրենքներով առաջնորդվելը:

Խոմեյնին իր ուղերձներում զգուշացնում էր, որ գերտերությունների նպատակը ոչ մեկ, ոչ էլ մեկ այլ իսլամական ուղղությանն աջակցելը չէ, այլ, դրանց միջև տարաձայնություններ սերմանելով, բոլորին տապալելը: «Հիշե՛ք, մենք բոլորս մուսուլման ենք, մենք բոլորս հավատում ենք «թաուհիդին» և Ղուրանին և պիտի ջանանք պաշտպանել թաուհիդն ու Ղուրանը», կարդում ենք նրա ուղերձներում[11]:

Որոշ սուննիական միավորումներ ու առաջնորդներ խնդիր չէին տեսնում համաձայնելու Խոմեյնու տեսակետների հետ, մյուսները՝ այս գաղափարների տարածման մեջ վտանգ էին տեսնում: Որոշ դեպքերում, սակայն, սուննի իսլամիստները շատ ավելի ընդհանրություններ էին տեսնում Խոմեյնու գաղափարախոսության, քան սուննի սեկյուլարիստների մոտեցումների մեջ: Մյուս կողմից, զարմանալի չէ, որ հենց Իրանի Իսլամական հեղափոխությունը դրդեց սուննի իսլամական շարժումներին ավելի ու ավելի ջանասիրաբար ձգտել ընդգրկվել քաղաքականության մեջ: Թեև 1980-ականներին իսլամիստական շարժումն արդեն ձևավորվում էր սուննի հասարակություններում, Իրանի հեղափոխությունը ցույց տվեց քաղաքականապես ակտիվ սուննի մուսուլմաններին, որ իրենց կրոնը օտարացած չէ քաղաքական գործընթացներից և որ ընտրություններում ու կառավարման մեջ մասնակցությունը չի հակասում Աստծո օրենքին[12]:

[11] Նույն տեղում:

[12] Toby Matthiesen,"The Iranian Revolution and Sunni Political Islam"pp.36-39 in "New analysis of Shia politics", POMEPS studies 28, December, 2017, available at https://pomeps.org/wp-content/uploads/2017/12/POMEPS_Studies_28_New Analysis_Web.pdf, (մուտք՝ 15.10.2019):

Միասնության գաղափարը շեշտելու համար Խոմեյնին օգտագործում էր բոլոր հնարավոր առիթները: Սալման Ռուշդիի «Սատանայական տողերի» հետ կապված դիպվածը նույնպես Խոմեյնին համարեց լավ հնարավորություն աշխարհի մուսուլմաններին համախմբելու ընդհանուր թշնամու դեմ: Խոմեյնին հրապարակեց աննախադեպ մի ֆեթվա, որ մահվան էր դատապարտում ոչ մուսուլման մեկին, որ ապրում է ոչ մուսուլմանական երկրում[13]:

Իսլամական այս միասնության մասին կոչերին արձագանքում էին հատկապես շիա բնակչությամբ երկրները: Սիրիայում ու Լիբանանում հատկապես, այս գաղափարները տարածում էին ստանում ու իրենց մարմնավորումը գտնում տարբեր շարժումների, կազմակերպությունների ու միավորումների տեսքով: Հետագայում այս գաղափարների արձագանքներն իրենց միս ու արյունը ստացան նաև արաբական մյուս երկրներում և հատկապես Եմենում:

Հատկապես Լիբանանում ազդեցության գոտի ստեղծելու հարցը հենց սկզբից կարևոր նշանակություն ուներ ոչ միայն Իսլամական հեղափոխության միջազգայնացման տեսանկյունից, այլ նաև ներիրանական քաղաքական տարաձայնությունների համատեքստում: Իրան-Լիբանան պատմական կապերն ու Լիբանանի ռազմավարական դիրքը տարածաշրջանում այս երկիրը դարձնում էին Իրանի իսլամական գաղափարների տարածման բնական հարթակ: Այաթոլլահ Մոնթազերին այս իմաստով Խոմեյնիի ամենամոլեռանդ աջակիցն էր: Նրա խոսքով՝ «մեր հեղափոխությունը իսլամական է, իսկ իսլամը սահմաններ չի ճանաչում»: Այս հարթակն արդյունավետ օգտագործելու

[13] M. M. Slaughter, “The Salman Rushdie Affair: Apostasy, Honor, and Freedom of Speech”, *Virginia Law Review* Vol. 79, No. 1 (Feb., 1993), pp. 153-204:

համար Իսլամական հեղափոխության առաջամարտիկներն օգտագործում էին համատեղ անցյալի դիսկուրսն իրենց նկրտումները պատմական հիմքերի վրա դնելու նպատակով: Երբ Իրանի պաշտպանության նախարար, Լիբանան աքսորված Չամրանը վերադառնում է Իրան, նա իր ուղերձում նշում է, որ «վերադառնում է Ջաբալ Ամիլից, որի ժողովուրդը Իսլամի հազար չորս հարյուր տարվա պատմության ողջ ընթացքում բռնաճնշումների է ենթարկվել»[14]:

Նույն կերպ՝ այաթոլլահ Մոնթազերին, որ կազմակերպում էր իրանցի կամավորականների տեղափոխումը Սիրիա և Լիբանան՝ Իսրայելի դեմ մարտերում աջակցելու տեղացիներին, այդ գործողությունները նկարագրում էր որպես Ջաբալ Ամիլ տեղափոխություն, «որտեղից սկսել է իրենց քաղաքակրթությունը»:

Արաբական երկրների շիաներին օգնելու այս քաղաքականությունն ու գաղափարախոսությունը, նույն այդ երկրների ղեկավարները հաճախ օգտագործում էին վարկաբեկելու համար զինված իսլամական խմբերին: Նրանց մեղադրում էին Իրանի հետ կապեր ունենալու ու այդպիսով երկրի իքնիշխանության դեմ ոտնձգություններ անելու մեջ:

Այսպիսով, այաթոլլահ Խոմեյնիի ջանքերը՝ միավորելու աշխարհի մուսուլմաններին, թեև իրենց հիմնական նպատակին չհասան, բայց գաղափարական կարևոր հենք հանդիսացան հատկապես շիայական բնակչությամբ երկրներում իսլամական հեղափոխության առանցքի շուրջ ծնված նոր երկխոսությունների, միաժամանակ նաև նոր տարաբաժանումների համար:

[14] Shireen T. Hunter, “Iran and the spread of The Islamic Revolution”, *Third World Quarterly*, Vol. 10, No. 2, Islam & Politics (Apr., 1988), pp. 730-749.

ONE REVOLUTION FOR THE WHOLE WORLD: THE EFFORTS OF AYATOLLAH KHOMEINI TO UNITE THE MUSLIMS OF THE WORLD

Abstract

Anna Gevorgyan
Center for Civilization and Cultural Studies, YSU
anna.gevorgyan@ysu.am

Key words: *revolution, ayatollah Khomeini, Shia, Sunni,"Velayate Faqih", unity*

One the main goals of the ayatollah Ruhollah Khomeini after the Islamic Revolution in Iran was the unity of all Muslims of the world in the framework of that revolution. The theory of "Velayate Faqih" that was in the cornerstone of the revolutions philosophy was perceived as a universal prescription for all the Muslims both Shia and Sunni in order to have just government and unity among the Muslims. The article examines the discourse and diplomatic steps of ayatollah Khomeini in order to reach the abovementioned unity.

ОДНА РЕВОЛЮЦИЯ ДЛЯ ВСЕГО МИРА: УСИЛИЯ АЯТОЛЛЫ ХОМЕЙНИ ОБЪЕДИНИТЬ МУСУЛЬМАН МИРА

Аннотация

Анна Геворгян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
anna.gevorgyan@ysu.am

Ключевые слова: *революция, аятолла Хомейни, шииты, сунниты, «Велаяте факих», единство*

Одной из главных целей аятоллы Рухоллы Хомейни после исламской революции в Иране было единство всех мусульман мира в рамках этой революции. Теория «Велаяте факих», которая лежала в основе философии революции, была воспринята как универсальный рецепт для всех мусульман, как шиитов, так и суннитов, чтобы иметь справедливое правительство и единство мусульман. В статье рассматриваются дискурс и дипломатические шаги аятоллы Хомейни для достижения указанного единства.

ՊԱՆԿԻՍԻԻ ԿԻՐՃԸ՝ ՑԱՆՑԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ[1]

Տաթևիկ Մկրտչյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
tmkrtchyan@ysu.am

Հայկ Քոչարյան
ԵՊՀ Արաբագիտության ամբիոն
hkocharyan@ysu.am

Բանալի բառեր՝ *Պանկիսիի կիրճ, ցանցային ահաբեկչություն, «ահաբեկչության ապահով հանգրվան», ահաբեկչության օջախ, կիստեր, վահաբականություն*:

Պանկիսիի կիրճը (տեղական վայնախական անվանումը՝ *Pengiz*) Կովկասյան լեռներում Վրաստանի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող Ախմեթա նահանգն է, որը վրաց-չեչենական հարավային սահմանին է գտնվում, իսկ արևելքից սահմանակից է Դաղստանին: Այն ձգվում է Բորբալո լեռից մինչև Ալազանիի հովիտը մոտ 30 կմ երկարությամբ, իսկ Թբիլիսիից հեռու է 150-160 կմ: Վրաստանի էթնիկ և կրոնական բազմազանության մեջ Պանկիսիում բնակվող կիստերը, որոնք վայնախների էթնիկ ընտանիքին են պատկանում, ինչպես ինգուշները և չեչենները,

[1] Սույն հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի 18T-5I380 «Իսլամական ծայրահեղականությունը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարտահրավերները» գիտական թեմայի ֆինանսավորման շրջանակում:

կարևոր փոքրամասնություն են Վրաստանի մուսուլմանական համայնքում: Մուսուլմանական համայնքը 2014թ մարդահամարի տվյալներով՝ 2016թ. Վրաստանի վիճակագրական ծառայության պաշտոնական փաստաթղթում Վրաստանի բնակչության մոտ 11 (10,7) տոկոսն է կազմում, իսկ կիստերի թվաքանակը նշվում է մոտ 6000 (5700) մարդ[2]: Կիստերը Վրաստանի քաղաքացիներ են դարձել դեռևս առաջին անկախ Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության ժամանակ (1918-1921թթ): Ավելի ուշ նաև սկսում են կրել վրացական ազգանուններ, իսկ այսօր գրեթե բոլորն ունեն և՛ չեչենական, և՛ վրացական անուններ, և բոլորն էլ տիրապետում են նաև վրացերենին[3]:

Պանկիսիի կիրճը՝ որպես ահաբեկչության հետ առնչություն ունեցող աշխարհագրական տարածք ներկայացնելու կամ կիրճը որպես ահաբեկչական «ապահով հանգրվան» դիտարկելու և առկա նախադրյալները վեր հանելու համար անհրաժեշտ է պատմական համառոտ ակնարկի տեսքով ցույց տալ, թե ովքեր են բնակվում, ինչպիսի կրոնական, սոցիալ-տնտեսական, մշակութային իրադրություն է կիրճում, ինչպես նաև ներկայացնել այստեղ տարվող քաղաքականությունը և իրադրությունը հատկապես Վրաստանի անկախությունից հետո:

Պանկիսիի կիրճին առնչվող հետազոտություններում այն տարբեր անվանումներով և ձևակերպումներով է բնորոշվում՝ որպես «ահաբեկիչների կենտրոն», «ահաբեկիչների

[2] National Statistics Office of Georgia (Geostat). (2016). 2014 General Population Census, Main Results. http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf (մուտք՝ 15.10.2019)
[3]Zviadadze, S. (2016). Islam, Politics, and Identity in Pankisi. The Caucasus Institute for Peace, Democracy and Development, https://www.academia.edu/31144741/Islam_Politics_and_Identity_in_Pankisi_in_Georgian. հղված՝ Mariam Amashukeli, En/Countering Stigma of Terrorism: The Case of Pankisi, Research report, Eastern Partnership Civil Society Facility, Tbilisi 2018, p.3. http://fellows.eapcivilsociety.eu/wp-content/uploads/2018/07/Research-Report-2018_Mariam-Amashukeli.pdf, (մուտք՝ 12.10.2019)

անվտանգության գոտի», «ջիհադականների օջախ» նաև «իսլամական ռազմական անդամակցության և անդամագրման միկրոկոսմ», «շագանակագույն վայր կամ անկայունության գրպանիկ», «Հարվարդ ահաբեկիչների կերտման/դաստիարակման համար» (Harvard of terrorist upbringing), երբեմն նաև ներկայացվում է, որպես օտար գրոհայինների և ծայրահեղականների անընդհատ հոսք ունեցող մի հանգրվան, երբ իրականում առկա չէ նշանակալի տեղական ծայրահեղականացում/ռադիկալացում և այլն: Հետաքրքիր է, որ վրացական ներքին փորձագիտական շրջանակները Պանկիսիի կիրճը համարում են «ներկրված կոնֆլիկտի» օրինակ[4]: Իսկ տեղի բնակչության շրջանում անցկացված դաշտային հետազոտությունների մի մասի արդյունքներով[5] «ահաբեկչությունը՝ որպես խարան» Պանկիսիի կիրճի կիստ բնակչության կարևորագույն մարտահրավերներից է, որը նրանց պարտադրվում է և՛ ներպետական, և՛ համաշխարհային մակարդակում: Ըստ տվյալ հետազոտությունների՝ հատկապես 2000-ական թթ.-ից սկսած Պանկիսիի կիրճը որպես «ահաբեկչության հանգրվան» լինելու խոսույթի գերակայությանը մեծապես նպաստել են և՛ տեղական մամուլի, և՛ իշխանությունների կողմից Պանկիսիում տիրող իրավիճակի «գնահատականները». «սուֆիզմի ճգնաժամը և սերունդների

[4] Ghia Nodia, Georgia: Dimensions of Insecurity, Chapter 1 in Statehood and Security: Georgia after the Rose Rvolution, eds. Robert Legvold and Bruno Coppieters, 2005, pp. 39-82, see pp. 59-60, https://www.amacad.org/sites/default/files/academy/multimedia/pdfs/publications/books/Nodia.pdf, (մուտք՝ 05.09.2019):

[5] Mariam Amashukeli, Understanding why youth fight in the Middle East. the case of Pankisi, Research report, Center for Social Sciences, Tbilisi Peace and Security Section, UN Women, New York, July 2019, https://www.ecoi.net/en/file/local/2020220/Understanding-why-youth-fight-in-the-Middle-East-en.pdf, (մուտք՝ 12.10.2019); Mariam Amashukeli, En/Countering Stigma of Terrorism: The Case of Pankisi, Research report, Eastern Partnership Civil Society Facility, Tbilisi, 2018, http://fellows.eapcivilsociety.eu/wp-content/uploads/2018/07/Research-Report-2018_Mariam-Amashukeli.pdf, (մուտք՝ 12.10.2019):

միջև առաջացած անդունդը», զուգահեռաբար սալաֆիական իսլամի՝ որպես իսլամի ռադիկալ ուղղության տարածման հանգամանքը, որն էլ պանկիսցիների՝ Սիրիա և Իրաք մեկնելու պատճառներից էր: Ահա այս ամենն ավելի էր խորացնում այս շրջանի ընդհանրական ընկալումը՝ որպես «ահաբեկչության օջախի կամ հանգրվանի»: Պանկիսցիների շրջանում այս թեմայով արված հետազոտություններում բնակչության մի ստվար զանգված վեր է հանել լրջագույն խնդիրներ և մարտահրավերներ, որոնց լուծման ճանապարհների փնտրտուքներում են Պանկիսիի կիրճի բնակչությունը[6]:

Մեթոդաբանության տեսանկյունից Պանկիսիի կիրճի իրավիճակի վերլուծության համար կիրառելի է երկու տարբեր տեսության դրույթներ և բաղադրիչներ: Առաջինը՝ քաղաքացիական պատերազմների և դրանց հաջորդած իրավիճակների շղթայական հետևանքների տարածման և երկրորդը՝ ահաբեկչության ապահով հանգրվանների տեսություններն են: Առաջին տեսության շրջանակներում քննարկվում են հետևյալ բաղադրիչները՝ *փախստականները, ահաբեկչությունը, հարևանային ներխուժումները, անջատողականությունը ծնում է անջատողականություն* (*secession breeding secessionism), բնակչության ծայրահեղականացում և տնտեսական կորուստներ*[7]:

Երկրորդ մոտեցումը հիմնված է այն բաղադրիչների վրա, որոնք վեր են հանում ահաբեկչության ապահով հանգրվանների առաջացման հանգամանքները: Այս տեսության և մոտեցման հիմնական տարրերն են՝ *աշխարհագրական*

[6]Այս մարտահրավերների մասին մանրամասն կերպով ներկայացվում է ստորև:
[7] Daniel L. Byman and Kenneth M. Pollack, Things Fall Apart, Containing the Spillover from an Iraqi Civil War, 2007, Brookings Institution Press, May 7, 2007.

տվյալները/բնութագիրը, թույլ կառավարումը, կոռուպցիայի «պատմությունը», բռնության և դրա նկատմամբ վերաբերմունքի «պատմությունը» և հիարկե սոցիալական խնդիրների առկայությունը և հատկապես աղքատությունը[8]:

Առանձին ուսումնասիրման թեմա է նաև պետական կառույցների կողմից հակաահաբեկչության քաղաքականության հարցում իրականացվող քայլերը և դրանց արդյունավետության՝ իսլամական ահաբեկչությանը պետական մակարդակում դիմագրավելու տեսանկյունից և այլն: Կարևոր քայլ է այդ ուղղությամբ Վրաստանի կողմից 2019թ ընդունված Հակաահաբեկչության ազգային անվտանգության ռազմավարությունը[9], որի գործողությունների ժամկետը 2019-2021թթ.: Այս ռազմավարության արդյունավետությունը կարելի է գնահատել ավելի ուշ՝ երբ հնարավոր կլինի վերլուծել՝ համադրելով փաստաթղթի բովանդակությունն ու Պանկիսիի կիրճում տիրող/ստեղծված իրադրությունը:

Հետաքրքրական է, որ մինչ հետազոտողները այս կամ այն մոտեցմամբ են մեկնաբանում որևէ կոնֆլիկտային իրադրություն, Պանկիսիի կիրճի իրադրությունը վերլուծելիս երկու մոտեցման չափանիշներն ու տարրերն էլ առկա են և հավասարապես կիրառելի: Հոդվածի շրջանակում ներկայացվելու է Պանկիսիի կիրճը՝ որպես «ահաբեկչության հանգրվան» լինելու խոսույթի ձևավորման և իրական կյանքում ընկալման և վերածման ժամանակագրական համառոտ պատմությունն այս երկու տեսությունների բաղադրիչները քննարկելու միջոցով: Միևնույն ժամանակ կարևոր է տարանջատել արտաքին

[8] Cristiana C. Brafman Kittner, The Role of Safe Havens in Islamist Terrorism, *Terrorism and political violence*, Volume 19, Issue 3/ 19:03, 2007.

[9] National Strategy of Georgia on Fight Against Terrorism, 2019, https://ssg.gov.ge/uploads /pr/25.01.19/National%20CT%20Strategy%20of%20Georgia.pdf (մուտք՝ 18.09.2019):

աշխարհաքաղաքական ֆակտորները և ակտորների քաղաքականությունը, որոնք նպաստում էին Պանկիսիի կիրճում ծայրահեղականության տարածմանը, ներքին նախադրյալներից՝ սոցիալ-տնտեսական, կրոնական և մշակութային գործոններից, որոնք նպաստում էին և բարձրացնում էին ծայրահեղականության գրավչությունը հատկապես երիտասարդ սերնդի շրջանում:

Հոդվածում նախ ներկայացվելու է Վրաստանի անկախությունից ի վեր՝ 1991թ. մինչ 2019թ. Պանկիսիի կիրճի շուրջ ծավալված իրադարձությունների համառոտ ժամանակագրությունը, հետո՝ Պանկիսիի կիրճի ներքին իրադրությունը և դրա ազդեցությունը ծայրահեղականացման գործընթացում, երկու տեսությունների բաղադրիչների համադրումը Պանկիսիի իրադրության համատեքստում և նաև այս գործընթացներում ներգրավված արտաքին խաղացողների դերակատարությունը:

Պանկիսիի կիրճը 1991թ Վրաստանի անկախության հռչակումից հետո. համառոտ ժամանակագրություն

Պանկիսիի շրջանում սոցիալ-քաղաքական բնութագիրը արմատականորեն փոխվեց 1990-ականների սկզբներից, երբ Վրաստանում ընթանում էին անկախության առաջին տարիների կայացման դժվարություններով և տնտեսական ու քաղաքական բազում վայրիվերումներով լի իրադարձությունները: Պանկիսիի կիրճում ժամանակագրորեն տեղի ունեցող իրադարձություններով էլ պայմանավորված այս կամ այն փուլում սկսում է ձեռք բերել ավելի մեծ կարևորություն հատկապես հակաահաբեկչության համատեքստում:

1991-1994թթ կարելի է համեմատաբար «հանգիստ» ժամանակաշրջան համարել, երբ պետությունը չուներ լիակատար

հսկողություն և ազդեցություն այս շրջանի վրա, միևնույն ժամանակ ներգրավված էր քաղաքացիական պատերազմական իրավիճակներում Հարավային Օսիայում և Աբխազիայում. տեղական կառավարման կառույցները գրեթե չէին գործում և օրենքի կիրառման հնարավորությունները գրեթե բացակայում էին ինչպես երկրի այլ շրջաններում, այնպես էլ Պանկիսիի շրջանում, սակայն կարծես իներցիայով այս շրջանը շարունակում էր պահպանել իր «ինքնակառավարումը»[10]: Պետական կառավարման թույլ լինելը կամ տվյալ դեպքում պետական կառավարումից դուրս մնացած նման «տարանցիկ» հնարավորություններով աշխարհագրական տարածքը առավել մեծ վտանգներ կարող էր առաջացնել ոչ միայն տվյալ պետության, այլև տարածաշրջանի և նաև համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարի տեսանկյունից:

Պանկիսիի կիրճի նկատմամբ ահաբեկչության հետ առնչվող հետաքրքրությունն առաջացավ հատկապես ռուս-չեչենական պատերազմներից (առաջինը՝ 1994-1996թ, երկրորդը՝ 1999-2000թթ.) հետո ստեղծված իրադրությամբ պայմանավորված:

1994-1996թ առաջին Չեչենական պատերազմը փոխեց իրադրությունը Պանկիսիում: Նախ 1994թ. սկսեցին վերադառնալ այն չեչենները, որոնք Սովետական միության փլուզումից հետո լքել էին երկիրը: Այս ժամանակահատվածում առնվազն բոլոր նախադրյալներն առկա էին զենք զինամթերքի անօրինական առուվաճառքի ստեղծման համար, ինչպես նաև կիրճը սկսում է

[10] Akaki Dvali, Instability in Georgia: A New Proliferation Threat?, August 1, 2003, Nuclear Threat Initiative, https://www.nti.org/analysis/articles/instability-georgia/, (մուտք՝ 15.08.2019), Jaba Devdariani and Blanka Hancilova, Georgia's Pankisi Gorge, Russian, US, and European Connections, CEPS Policy Brief, No23, June 2003, p. 4, http://georgica.tsu.edu.ge/files/05-Security/Devdariani%20&%20Hancilova-2002.PDF, (մուտք՝ 18.10.2019).

նարկոթրաֆիքինգի համար տարանցիկ գոտի հանդիսանալ[11]: Թմրանյութերի առևտրային ճանապարհը անցնում էր Պանկիսիի կիրճով հասնում Հարավային Օսիա, իսկ ավելի ուշ՝ Թուրքիայով Եվրոպա[12]: Իրականում առաջին ռուս-չեչենական պատերազմից հետո համեմատաբար խաղաղ շրջան է համարվում մինչև 1999թ.: Տվյալ փուլում որոշակի կայունության նշաններ կային Վրաստանում, հակակոռուպցիոն որոշակի քայլեր էին ձեռնարկվում և հաջողություններ գրանցվում: Սակայն մինչև երկրորդ ռուս-չեչենական պատերազմի սկսվելն արդեն ստեղծվել էին այնպիսի նախադրյալներ, որոնք նպաստեցին հետագայում ահաբեկչական խմբավորումների և ցանցային գործունեության ծավալման համար «հանգրվան» դառնալուն: Նման նախադրյալներից էր նախ և առաջ Պանկիսիի կիրճի «մեկուսացման» գործընթացը պետական կառույցների ոչ լիարժեք գործելու պայմաններում հենց կիրճի բնակչության կողմից նրանց նկատմամբ ապատիան, կրիմինալ շրջանակների և կոռումպացված ոստիկանական համակարգի համագործակցության մոդելի կիրառումը կիրճում և այլն[13]: Այս ամենը շատ պարարտ հող էր հետագայում տեղի բնակչությանը անդամագրելու, ներգրավելու և հետագայում նաև ցանցային ահաբեկչական խմբավորումներում կարևորագույն դերակատարություններ ստանձնելու տեսանկյունից:

---

[11] Համաշխարհային կրիմինալ ցանցերը այդ ժամանակահատվածում արդեն հետևյալ երթուղին ունեին՝ Աֆղանստանից Դաղստանով և Հյուսիսային Կովկասի այլ պետություններով դեպի Վրաստան:

[12] Jaba Devdariani and Blanka Hancilova, Georgia’s Pankisi Gorge, Russian, US, and European Connections, CEPS Policy Brief, No23, June 2003, p. 4, http://georgica.tsu.edu.ge /files/05-Security/Devdariani%20&%20Hancilova-2002.PDF, (մուտք՝ 18.10.2019:

[13] Jaba Devdariani and Blanka Hancilova, Georgia’s Pankisi Gorge, Russian, US, and European Connections, CEPS Policy Brief, No23, June 2003, p. 4, http://georgica.tsu.edu.ge /files/05-Security/Devdariani%20&%20Hancilova-2002.PDF, (մուտք՝ 18.10.2019:

Լարվածության ուժգնացում է նկատվում **1999-2000թթ երկրորդ Չեչենական պատերազմի տարիներին:** 2000-ական թվականներից հետաքրքրությունն այդ տարածքի նկատմամբ ավելանում է նաև տարբեր ահաբեկչական ցանցերի, ահաբեկչական գործողությունները ֆինանսավորող երկրների, ինչես նաև գլոբալ ահաբեկչության դեմ պայքար մղող կարևորագույն երկրի՝ ԱՄՆ-ի և նաև ԵՄ-ի գործողությունների համատեքստում: 2000-ական թվականներին էր, որ Պանկիսիի կիրճը առաջին անգամ դառնում է միջազգային հանրության ուշադրության ուղեծրում. 2001թ սեպտեմբերի 11-ի Նյու Յորքյան ահաբեկչությունից հետո, երբ հայտարարվում է Ահաբեկչության դեմ պատերազմի մասին, ԱՄՆ անվտանգության քարտուղար Քոլին Փաուելը ՄԱԿ-ում հիշատակում է Պանկիսիի կիրճի և ալ-Կաիդայի առնչությունների մասին[14]. հատկապես 2011թ հետո, երբ կային հետախուզական տվյալներ, որ այստեղ են հայտնվել ալ-Կաիդայի հետ առնչություններ ունեցող Աբու Աթիյան կամ Աբու Մուսա ալ-Զարկաուին, կամ էլ Աբու Հաֆս ալ-Ուրդանին[15], որը ըստ որոշ տվյալների՝ Պանկիսիի կիրճում զորավարժանքներ էր իրականացնում Օսամա բեն Լադենի հրահանգով[16]: Արդյունքում՝ այն դառնում է նաև **Operation Enduring Freedom**-ի 7

[14] Transcript of Powell's U.N. presentation, part 9, Ties to al-Qaeda, https://edition.cnn.com/2003/US/02/05/sprj.irq.powell.transcript.09/index.html, (մուտք՝ 16.10.2019):

[15] Russia finds more terrorists in the Pankisi gorge, North Caucasus Weekly, Volume: 5, Issue: 46, https://jamestown.org/program/russia-finds-more-terrorists-in-the-pankisi-gorge-2/, Andrew McGregor, Ricin Fever: Abu Musab al-Zarqawi in the Pankisi Gorge, Terrorism Monitor Volume: 2 Issue: 24, 5, May, 2005 https://jamestown.org/program/ricin-fever-abu-musab-al-zarqawi-in-the-pankisi-gorge/, (մուտք՝ 22.10.2019):

[16] Micheal Cecire, “How extreme are the extremists? Pankisi Gorge as a case study”, Foreign Policy Institute, July 2015, https://www.fpri.org/article/2015/07/how-extreme-are-the-extremists-pankisi-gorge-as-a-case-study/, (մուտք՝ 25.09.2019): Jaba Devdariani, Georgia: Military phase of Pankisi operation ends with mixed results, Report UNA Georgia, 27, Sep. 2002, https://reliefweb.int/report/georgia/georgian-russian-tension-rise (մուտք՝ 25.09.2019):

կոնֆլիկտներից մեկը[17]: Իսկ Ռուսական կողմի մշտական մտահոգություններն ավելի ակնառու էին դառնում, երբ Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը Պանկիսիի կիրճը նույնիսկ անվանում է «մինի Աֆղանստան Ռուսաստանի շեմին»[18], իսկ բիոլոգիական զենքի հետ կապված տարբեր վարկածների[19] համատեքստում կիրճը համարում էր «շատ հայտնի ուղղություն բիոլոգիական զենք կիրառող ահաբեկիչների համար»[20]:

Շատ կարևոր իրադարձություններ էին տեղի ունենում վրացական պետության և Պանկիսիի տարածքում ահաբեկչական խմբավորումների դեմ իրականացվող պայքարի շրջանակում վրացական պետության քայլերի տեսանկյունից, որը մի կողմից փորձում էր վերահսկել ահաբեկչական զարգացումների հնարավորությունը, մյուս կողմից հանգեցնում էր տեղի բնակչության՝ պանկիսցիների, միգրանտների և տեղի վրացիների միջև բախումներին. կար մի ժամանակահատված, որ լրագրողների համար նույնիսկ փակ տարածք էր համարվում Պանկիսիի կիրճը[21]: Վերլուծական շրջանակներում Պանկիսիի կիրճը նույնիսկ համարվել է որպես Վրաստան պետության

---

[17] Այդ կոնֆլիկտները հետևյալն էին՝ պատերազմը Աֆղանստանում, կոնֆլիկտները՝ Ֆիլիպիններում, Հյուսիսարևելյան Աֆրիկայի թերակղզին, Պանկիսիի կիրճը, Տրանսսահարան, Կարիբյան կղզիները, կենտրոնական Ամերիկան և Դրոզստանը:

[18] Այս մասին տես՝ https://inosmi.ru/untitled/20020228/140209.html

[19] Akaki Dvali, Instability in Georgia: A New Proliferation Threat?, August 1, 2003, Nuclear Threat Initiative, https://www.nti.org/analysis/articles/instability-georgia/, (մուտք՝ 15.08.2019):

[20] Նույն տեղում:

[21] Այս մասին մանրամասները տես՝ Shorena Kurtsikidze and Vakhtang Chikovani, Georgia's Pankisi Gorge: An Ethnographic Survey, Spring 2002, Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies Working Paper Series, pp. 4-6, http://nazysguesthouse.com/wp-content/uploads/2013/04/2002_03-kist.pdf, (մուտք՝ 17.09.2019):

ձախողումներից և այն խորհրդանիշներից մեկը[22]: Կար տեսակետ, որ մի որոշ ժամանակահատված կարծես քաղաքական որոշում է եղել թողնել տարածաշրջանը՝ ինքնակառավարման[23]: Նույնիսկ նշվում է, որ մասնավոր զրույցներում Վրաստանի քաղաքական գործիչներն իրենց ոչ ակտիվ գործողությունները բացատրում էին, որ Պանկիսիի կիրճում կտրուկ գործողությունները և իրադրության կարգավորումը/վերահսկումը կարող էր հանգեցնել Վրաստանի կողմից Չեչենական պատերազմում ներքաշվելուն, և կարծես ամենաճիշտ հնարավոր լուծումը եղել է Վրաստանի մյուս նահանգներից Պանկիսին մեկուսացնելը[24]:

Խնդիրը նրանում էր, որ սկզբնական շրջանում դժվար էր կանխատեսել, թե ինչ ազդեցություն կարող են ունենալ ռուս-չեչենական պատերազմներից հետո ստեղծված իրավիճակները թե՛ երկրում բնակչության ռադիկալացման տեսանկյունից, թե՛ հենց Վրաստանում ահաբեկչության իրականացման առումով: Սակայն հենց սկզբից էլ պարզ էր, որ Վրաստանի համար թե պարզապես փախստականների, թե՛ նաև տարբեր ցանցային «ահաբեկչական» միավորների մուտքը ոչ միայն ներքին ձևափոխումների և խնդիրների էին հանգեցնելու այլև խնդիրներ էին առաջացնելու հատկապես Ռուսաստանի հետ հարաբերություններում և մասնավորապես հարևանային ներխուժումների և ոչ ուղղակիորեն բնակչության ռադիկալացման տեսանկյուններից: Իսկ ավելի ուշ՝ արդեն 2001թ սեպտեմբերի 11-ի հարձակումներից հետո, Վրաստանը սկսում է նաև ԱՄՆ-ի հետ

[22] Ghia Nodia, Georgia: Dimensions of Insecurity, Chapter 1 in Statehood and Security: Georgia after the Rose Rvolution, eds. Robert Legvold and Bruno Coppieters, 2005, pp. 39-82, see pp. 60, https://www.amacad.org/sites/default/files/academy/multimedia /pdfs/publications/books/Nodia.pdf, (մուտք՝ 05.09.2019):

[23] Նույն տեղում:

[24] Նույն տեղում՝ էջ 59-60:

սերտ համագործակցություն՝ հանդիսանալով հակաահաբեկչության պայքարում տարածաշրջանային դաշնակից, և բնական է, որ այս ամենն իր ազդեցությունը պետք է թողներ Թուրքիայի՝ տարածաշրջանային կարևոր խաղացողի հետ հարաբերություններում:

Հասկանալի է, որ 2001թ.-ից հետո վրացական իշխանությունների կողմից մինչ այդ եղած չեչեն գրոհայինների՝ Վրաստանի տարածքում լինելու շուրջ ժխտողական վերաբերմունքը սկսում է փոխվել[25]: Արդեն 2002թ համարվում է «բեկումնային տարի», երբ ամերիկյան ներգրավվածությունը հակաահաբեկչական պայքարում դառնում է անխուսափելի, որը կներկայացվի ստորև ամերիկյան ներգրավվածության հատվածում:

Հաջորդ փուլը, երբ Պանկիսիի կիրճը սկսում է նոր նշանակություն և ազդեցության գոտի հանդիսանալ Կովկասյան էմիրության՝ Վիլայաթ ալ-Կաուկազի ձևավորումից հետո է: Կովկասյան էմիրությունը սուննի ազգայնական ռազմականացված ջիհադական ահաբեկչական կազմակերպություն է, որը համարվում է Իչկերիայի Չեչենական Հանրապետության հետնորդը, որի ստեղծման մասին պաշտոնապես 2007թ հոկտեմբերի 7-ին Իչկերիայի նախկին նախագահ Դոկա Ումարովը հայտարարեց՝ դառնալով առաջին էմիր[26]:

---

[25] Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Նուգզար Սաժավան իր ռուս գործընկերների հետ հանդիպման ժամանակ ընդունել էր, որ Պանկիսիի կիրճում կան չեչեն նախկին գրոհայիններ: Տես՝ Jaba Devdariani and Blanka Hancilova, Georgia’s Pankisi Gorge, Russian, US, and European Connections, CEPS Policy Brief, No23, June 2003, p. 4, available at: http://georgica.tsu.edu.ge/files/05-Security/Devdariani%20&%20Hancilova-2002.PDF, (մուտք՝ 18.10.2019).

[26] Կովկասյան էմիրության մասին մանրամասներ տես՝ https://cisac.fsi.stanford.edu/mappingmilitants/profiles/caucasus-emirate, (մուտք՝ 10.10.2019):

Բազմաթիվ վերլուծաբաններ ուսումնասիրել են Կովկասյան Վիլայաթի դերակատարությունը Կովկասում ահաբեկչական նոր հանգրվանի և հետագա ազդեցությունների համատեքստում: Այստեղ թերևս կարելի է ներկայացնել 2011թ արված մի հետազոտության[27] տվյալներ, որոնք ցույց էին տալիս Կովկասյան Վիլայաթի ազդեցության շրջանակները Վրաստանում և հատկապես Պանկիսիի կիրճում ահաբեկչության և ռադիկալացման հարցում: Այդ զեկույցում նշվում էր մի քանի անկյունաքարային փոխառնչություններ, որոնք էլ մեծապես նպաստել են ծայրահեղականացման գործընթացների ծավալմանը: Դրանք են.

1. Կովկասյան էմիրության և դրա հաջորդ Իչկերիայի չեչենական հանրապետության հետ երկարատև և անընդհատ զարգացող կապերը մի կողմից, իսկ մյուս կողմից ալ-Կաիդայի և Գլոբալ Ջիհադի հետ առնչությունները:

2. Կովկասյան էմիրության ջիհադական ահաբեկչական ցանցի որպես միավորված և կազմակերպված քաղաքական և ռազմական ուժի գործունեության արդյունք, որոնք ջիհադի կրոնագաղափարական տարածմանն են նպաստել:

3. Տեղական մշակույթի և սալաֆիական ջիհադական կրոնական գաղափարախոսության ներթափանցումների և գլոբալ ջիհադական հեղափոխական շարժումների ազդեցությունը՝ որպես կարևորագույն գործոն Հյուսիսային Կովկասում բռնության տարածման համար[28]:

Կարևոր շրջադարձ է տեղի ունենում հատկապես **2014թ.-ից հետո**, երբ Սիրիայի և Իրաքի տարածքում հռչակվում է

[27] Gordon Hahn, Getting the Caucasus Emirate Right: Global Jihadism in Russia's North Caucasus, September 28, 2011, https://www.csis.org/events/getting-caucasus-emirate-right-global-jihadism-russias-north-caucasus,(մուտք՝ 15.10.2019):

[28] Նույն տեղում

Իսլամական պետությունը, որի հետևանքով արդեն 2015թ.-ից Հյուսիսային Կովկասի տարածքում այլևս զգալի ներկայություն չունեին Կովկասյան էմիրության կազմում և նրա անդամների մեծ մասը Իսլամական պետության Կովկասի վիլայաթին և այլ խմբավորումների են անդամագրվում[29]:

2014թ. Իսլամական պետության հռչակումից հետո բազմաթիվ վերլուծություններ[30] են արվել այս իրողության ազդեցության մասին Վրաստանի Հանրապետությունում և մասնավորապես Պանկիսիի կիրճի համատեքստում: Դրանք հիմնականում արվում էին հասկանալու և վերլուծելու համար, թե որքանով է վտանգավոր ԻՊ-ը Վրաստանի համար: Միևնույն ժամանակ քննարկվում էին նաև այն վտանգները, որոնք կարող էին ի հայտ գալ Վրաստանում ԻՊ-ին աջակցող կամ անդամագրվողների կողմից: Մինչ 2014 թ. Վրաստանը կարծես ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ-ի և Արևմուտքի վարած պատերազմում կատարում էր ուժեղ դաշնակցի դերը: Վրաստանը անմիջականորեն չէր հիշատակում Աբխազիան և Հարավային Օսեթիան որպես ահաբեկչության անմիջական վտանգի օջախներ:

Պանկիսիի կիրճ. բնակչություն, սոցիալ-տնտեսական, կրոնական և մշակութային դրության համառոտ բնութագիր. ներքին նախադրյալներ

[29] Կովկասյան վիլայաթից դեպի Իսլամական պետություն տեղափոխությունների մասին տե՛ս՝ Is this the end of the Caucasus Emirate?, 29, June, 2015, https://www.opendemocracy.net/en/odr/is-this-end-of-caucasus-emirate/, (մուտք՝ 15.10.2019):

[30] Goguazde, G., and S. Kapanadze (2015). Daesh and Challenges Facing Georgia. Policy Document. Georgia's Reforms Associates (GRASS), Tbilisi. November 2015, http://grass.org.ge/wp- content/uploads/2015/12/Daesh-and-Challenges-Facing-Georgia.pdf.

Պանկիսիի կիրճն այսօր մեծամասամբ բնակեցված է կիստերով[31]: Կիստերը վայնախների էթնիկ ընտանիքին են պատկանում, ինչպես ինգուշները և չեչենները[32]: Չնայած համարվում է, որ կիստերը ուժեղ համայնքային ինքնություն ունեն, սակայն պատմության մեջ կարծես չի եղել հարևան Չեչնիայի հետ միավորման կամ որևէ այլ տարածքային պահանջատիրության դրսևորումներ[33]:

Կիրճում կա մեծամասամբ կիստերով բնակեցված մի քանի քաղաք և գյուղ՝ Դուիսի (այս գյուղը ստեղծվել է հենց կիստերի կողմից և այն ստացել է իր անվանումը իրենց առաջնորդներից՝ Դուիի անունից), Ջոկոլո, Բիրկիանի, Քվեմո Օմալո, Ձիբախևի, Շուա Խալացանի և Ձեմո Խալացանի, Խորաջո, Չխաթանա և այլն[34]:

Պատմականորեն Պանկիսիի կիրճը համարվել է քրիստոնեական տարածք մինչև Կովկասյան լեռներից չեչենների տեղափոխությունը 1825-64 թթ. Ռուս-կովկասյան պատերազմի ժամանակ: Չնայած արդեն 16-րդ դարից սկսած ավելի շատ բնակեցված է եղել թուշեթիններով (ոչ վրացական միջավայրում հայտնի են որպես բացբիներ), որոնք սերտ հարաբերություններ ունեին ավելի շուտ մուսուլման չեչենների հետ, քան էթնիկ

---

[31] Թվային տվյալները տատանվում են 3000-7000:

[32] Վրաստան այս էթնիկ ցեղերի տեղափոխման մասին առկա է հարուստ գրականություն, որտեղ տվյալներ կան, որ նրանց տեղափոխումը սկսվել է 17-րդ դարից և մոտավորապես տևել է մինչև 19-րդ դար: Այս մասին մանրամասն տե՛ս՝ Shorena Kurtsikidze and Vakhtang Chikovani, Georgia's Pankisi Gorge: An Ethnographic Survey, Spring 2002, Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies Working Paper Series, pp. 8-13, http://nazysguesthouse.com/wp-content/uploads/2013/04/2002_03-kist.pdf,

[33] George Sanikidze, Islamic Resurgence in the Modern Caucasian Region: ‘Global’ and ‘Local’ Islam in the Pankisi Gorge. In Yuama T.. (ed.), Regional and Transregional Dynamism in Central Eurasia: Empires, Islam and Politics, Sapporo: Hokkaido University Press, 2007, pp. 263-282.

[34] Մանրամասն տես՝ Kists, 03. June, 2003, https://www.eng.kavkaz-uzel.eu/articles/545/, (մուտք՝ 15.09.2019):

վրացիների: Ներկայում, սակայն, հիմնականում կիրճը բնակեցված է մուսուլմանական կիստ (*վայնախ* կամ *ձուրձուք* ինքնանվանումներով) բնակչությամբ, փոքրաթիվ քրիստոնյա վրացիների հարևանությամբ: Կիստերի վերաբերյալ ժողովրդագրական և ֆոլկլորային ֆունդամենտալ հետազոտություններ են իրականացվել և հրապարակվել վրացական մամուլում 1880-ական թթ.-ից[35]:

18-19-րդ դարերում մասայական քրիստոնեացման է ենթարկվում նաև կիստ բնակչությունը, թեև իրական կրոնական քրիստոնեական արժեքներ կրելու տեսանկյունից դժվար է գնահատականներ տալ, և ընդհանրապես համարվում է, որ սովետական ժամանակահատվածում և մինչև 90-ականների վերջը կիստերի հավատքը քրիստոնեության, տեղական հավատալիքների՝ հեթանոսության և սուֆիական իսլամի, որը հայտնի էր նաև որպես «ավանդական իսլամ», տեղական ավանդական մշակույթի՝ ադաթների և շարիաթի միախառնում է, ինչպես նաև աշխարհիկ տարբեր նորմատիվային կենսակերպի տարրերի միաձուլում[36]: Որոշ հետազոտողներ կիստերի շրջանում իսլամական հավատքի ոչ այդքան ամուր հիմքեր ունենալը, ի տարբերություն Հյուսիսային Կովկասի չեչենների և ինգուշների,

[35] Հայտնի է Մաթե Ալբութաշվիլիի, որը նույնպես կիստ էր Պանկիսիից, 1898թ գրված «Պանկիսիի կիրճի նկարագրությունը» տարածաշրջանի պատմական և ժողովրդագրական հետազոտության արդյունքում, ինչպես նաև կարևոր է Ուսուփ Մարգոշվիլիի և հետագայում նաև նրա դստեր՝ Լեյլա Մարգոշվիլիի հետազոտությունները: Տես՝ Shorena Kurtsikidze and Vakhtang Chikovani, Georgia's Pankisi Gorge: An Ethnographic Survey, Spring 2002, Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies Working Paper Series, pp. 8-13,http://nazysguesthouse.com/wp-content/uploads/2013/04/2002_03-kist.pdf, (մուտք՝ 17.09.2019); L.U. Margoshvili, Cultural and Ethnic Relations Between Georgia and Chechnya-Ingushetia, Tbilisi, 1990.

[36] Տես՝ Zviadadze, 2016, pp.5-7, հղված՝ Mariam Amashukeli, En/Countering Stigma of Terrorism: The Case of Pankisi, Research report, Eastern Partnership Civil Society Facility, Tbilisi 2018, p3.

փորձում են բացատրել նաև այդ իրողություններով[37]: Սակայն չնայած այդ ամենին, պետք է նշել, որ կրոնական հավատքն իր առանձնահատկություններով շարունակել է գոյատևել և ներկա փուլում էլ ակտիվ տարածման և զարգացման շրջան է ապրում, իսկ կիստերն իրենց ինքնության տարրերը պաշտպանել են հենց իրենց կենսակերպի և ավանդույթների, հավատքի շնորհիվ նաև Ռուսական կայսրությունում: Օրինակ 1902թ Դուիսիում կառուցված մզկիթը սուֆիական իսլամի ուժեղագույն ուղղության՝ Քունթա-հաջիի կենտրոններից էր, որը շատ հայտնի սուֆիական իսլամի ուղղություն էր[38]:

Պանկիսիի կիրճում կիստերի շրջանում, ինչպես Չեչնիայում, Ինգուշեթիայում և Դաղստանում իսլամի սուֆիական երկու եղբայրություն՝ տարիկաթ է գործել՝ Նաքշբանդիա և Քադիրիա: Սուֆի իսլամը տեղական մշակույթի և շարիաթի հետաքրքրական սիմբիոզ էր: Սակայն Շարիաթի գերակայություն այդպես էլ չէր կարողանում հաստատվել Հյուսիսային Կովկասում այսպես կոչված սովորույթային օրենքների՝ ադաթների խոր արմատների պատճառով: Ի՞նչ էին նշանակում տեղի սովորույթային ադաթները. տեղական օրենքների մի հանրագումար, որոնք առնչվում էին իրենց նախահայրերի, մեծերի, էթիկետի, հյուրասիրության, թաղումների, ամուսնությունների, փոխօգնության, վենդետտայի և այլ սովորույթների վերաբեյալ, որոնք առնչվում են նրանց ամենօրյա կյանքին[39]: Դրանք անվանել

[37] George Sanikidze, 2007, pp. 263-282.

[38] Zviadadze, 2016, հղված՝ Mariam Amashukeli, En/Countering Stigma of Terrorism: The Case of Pankisi, Research report, Eastern Partnership Civil Society Facility, Tbilisi 2018, pp. 3-5:

[39] Պանկիսիի կիրճում սալաֆիականության տարածման մասին տե՛ս՝ Conor Prasad, Georgia's Muslim Community: A Self-fulfilling Prophecy? European Centre for Minority Issues, Working papar no 58, February 2012, p. 11-15, available at: http://edoc.vifapol.de/opus/volltexte/2012/3857/pdf/Working_Paper_58_En.pdf, (մուտք՝ 10.09.2019):

մաքուր իսլամական սխալ կլիներ, քանի որ դրանք առավել շատ պոպուլյար և էթնիկ մշակույթին առնչվող տարրեր էին բնորոշում[40]: Այսինքն, այս եղբայրությունների գաղափարախոսությունը և գործունեությունը տարբերվում է այս ուղղությունների հիմնական գաղափարաբանությունից և ծիսակարգային արարողություններից և մեծամասամբ ազդված է տեղական ավանդույթային իրավունքից՝ *ադաթից*, ինչպես նաև մեծապես կիրառվում են քրիստոնեական և նախաիսլամական ավանդույթներից տարրեր[41]:

Սանիկիձեն իր հոդվածում ցույց է տալիս, որ, ի տարբերություն Չեչնիայի կամ Ինգուշեթիայի, իսլամը, որը ուղղափառ քրիստոնեական Ռուսական կայսրության ժամանակահատվածում ինքնության պահպանման կարևոր դերակատարություն է ունեցել, այնուամենայնիվ երբեք նման միաձուլող և համախմբող գործոն չի հանդիսացել Պանկիսիի կիրճի բնակիչների համար[42]: 1829-1859թթ. 30-ամյա իր գոյությամբ Հյուսիս-Կովկասյան էմիրությունը կամ ինչպես նաև հայտնի է Շամիլի Իմամաթն իր գոյությամբ նախադեպային էր տվյալ շրջանում ճնշված և իրենց իրավունքների համար պայքար մղող չեչենների և ինգուշների համար ընդդեմ ռուսների, և փորձ էր արվում միավորել Հյուսիսային Կովկասի բնակչությանը իսլամի դրոշի ներքո: Հետազոտական շրջանակները նաև մեծ ուշադրության են արժանացրել «տեղական» և «գլոբալ» իսլամական ուղղությունների և ձևերի համեմատությանը Պանկիսիի կիրճում, որոնց բախման կամ ներթափանցման և

[40] Մանրամասների համար՝ Maia Barkaia, Barbara Janelidze, Under the Security Gaze: History, Religion and Politics in the Pankisi Gorge, Human Rights Education and Monitoring Center, Tbilisi 2018, pp. 47-48.
[41] Նույն տեղում, նաև՝ Mariam Amashukeli, 2018, p.3, George Sanikidze, 2007, pp.265-270.
[42] George Sanikidze, 2007, pp. 263-264.

միմյանց հետ փոխհարաբերություններն էլ կարող են ընդհանուր իրավիճակը հասկանալու հնարավորություն ստեղծել: Օրինակ հետաքրքրական են նաև այս առումով երիտասարդների շրջանում անցկացված հետազոտություններում սալաֆիականության և նախկին սուֆիական՝ ավանդական իսլամի տարբերությունները, որոնք ներկայացվում եմ հետևյալ կերպ՝ սուֆիական ավանդական իսլամը չի կարողանում շատ հարցերի պատասխանել, իսկ սալաֆիականությունը՝ որը մաքուր իսլամն է, տալիս է հստակ պատասխաններ Ղուրանից և Սուննայից, տեղի սուֆի առաջնորդները արաբերեն նույնիսկ չգիտեն, իսկ Ղուրանի լեզուն արաբերենն է: Տեղի ավանդական կրոնը շատ է տարբերվում իր գաղափարներով և ծիսակարգերով սալաֆիական իսլամից, և այն ավելի շատ էթնիկ տեղական՝ Հյուսիսային Կովկասի իրողություններին է միայն համապատասխանում, իսկ «գլոբալ» առումով ամբողջ աշխարհում մուսուլմանների կողմից ընկալելի և ճանաչելի չէ: Մի շարք հետազոտողներ՝ հեվելով նաև ներհամայնքային ընկալումների վրա, այս գործընթացը նաև անվանում էին կիստերի «արաբականացման» գործընթաց[43]:

Սալաֆիների՝ վահաբականության հետևորդների մասին տվյալները հստակ չէն, սակայն 2012թ Փոքրամասնությունների հարցերով Եվրոպական կենտրոնի կողմից ներկայացված տվյալներով, Պանկիսիի կիրճում մոտ 400 սալաֆիական էր բնակվում[44]: Չնայած, որ չի կարելի պնդել, որ գրոհայինների միակ աղբյուրը սալաֆիականներն են, սակայն այս չափի և

[43] Matteo Zola, Emanuele Cassano, Pankisi, “The Land of the Offspring”, 17.10.2016, https://www.balcanicaucaso.org/eng/Areas/Georgia/Pankisi-the-land-of-the-offspring-174711

[44] Shorena Kurtsikidze and Vakhtang Chikovani, Georgia's Pankisi Gorge: An Ethnographic Survey, Spring 2002, Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies Working Paper Series, p. 4, available at http://nazysguesthouse.com/wp-content/uploads/2013/04/2002_03-kist.pdf, (մուտք՝ 17.09.2019):

կենսական համայնքը կարող էր ռադիկալացման համար հիմք հանդիսանալ:

Ըստ տարբեր հետազոտությունների տվյալների՝ վահաբականությունը Պանկիսիի կիրճ է ներթափանցել 1997թ-ից և մասնավորապես ռուս-չեչենական երկրորդ պատերազմից հետո, երբ վրացական կողմը մեղադրում է ռուսական կողմին, որ նրանց չեչեն ծայրահեղականներին տեղափոխեցին Վրաստան և դարձրեցին նրանց համար նոր տեղադրություն ահաբեկչական գործողությունների հետագա ծրագրման և տարածման համար[45]: Իրականում 10-15000 չեչեն փախստականներ են տարիների ընթացքում եկել և հեռացել Պանկիսիի կիրճից, ինչը նշանակում էր, որ տեղի էթնիկ՝ կիստ բնակչությունը դառնում էր փոքրամասնություն՝ փախստական չեչեն բնակչության համեմատ: Դա նաև նշանակում էր սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային և կրոնական պարամետրերի փոփոխություններ՝ միայն տարբեր սալաֆիական մզկիթների կառուցումը կամ առաջացումը հատկապես կիստ երիտասարդությանը, որոնք սովետական ժամանակաշրջանում չեն ապրել և այժմ տեղի ավանդական իսլամի հետևորդ լինելուց բացի ունեին նաև նոր հնարավորություն՝ հաճախել սալաֆիական նորակառույց մզկիթներ, որոնք ոչ միայն որպես կրոնական վայրեր էին երիտասարդների համար, այլև հիմնական սոցիալիզացիայի կենտրոններն էին: Այստեղ նրանք սովորում էին արաբերեն, ստանում աստվածաբանական գիտելիքներ և ծիսակարգային փորձառություն տեղի քարոզիչների կողմից, որոնք եկել էին Եգիպտոսից կամ Սաուդյան Արաբիայից: Իսկ առավել մեծ տարիքով կիստերը շարունակում էին հետևել իրենց սուֆիական Տղամարդկանց և կանանց մեծահասակների խորհրդի

[45] George Sanikidze, 2007, նշվ. աշխ, pp. 275-282.

անդամներին, որոնք առաջ հեղինակության լուրջ աղբյուր էին, այժմ կարծես կորցնում են իրենց այս դիրքը կիրճում[46]:

Պանկիսիի կիրճում կա վեց հիմնական մզկիթ ինչպես նաև մի քանի ավելի փոքր աղոթատեղիներ: Հստակ տարանջատում կա սալաֆիական և ավանդական մզկիթների միջև: Օրինակ Դուիսիում, որը կիրճի հիմնական քաղաքներից մեկն է, կա մեկ ավանդական հին մզկիթ, որտեղ ներկայում կարծես հիմնականում միայն տարեցներն են աղոթում, և մեկ սալաֆիական 2002թ. կառուցված մզկիթ, որտեղ հիմնականում երիտասարդներն են աղոթում: 2010թ. հուլիսին Պանկիսիի Բիրկիանի գյուղում տեղական ավանդական աղոթատունը քանդվում է[47] և դրա փոխարեն սալաֆիական մզկիթ է կառուցվում[48]: Պանկիսիում նաև լուրջ գործունեություն է իրականացրել «Ջամաաթ» հումանիտար կազմակերպությունը վահաբական աջակցությամբ, ամենամսյա օգնություն էին տրամադրում ոչ միայն փախստականներին, այլև տեղի բնակչությանը[49]:

Որոնք են այն գործոնները, որոնք Պանկիսիի կիրճի կիստ բնակչությանը ծայրահեղական խմբավորումներին անդամագրվելու և նրանց շարքերը համալրելու գործում դերակատարություն են ունեցել: Այդ հարցի շուրջ արված մի շարք

[46] Zviadadze, 2016, հղված՝ Mariam Amashukeli, En/Countering Stigma of Terrorism: The Case of Pankisi, Research report, Eastern Partnership Civil Society Facility, Tbilisi 2018, pp. 3-5:
[47] Chechen Insurgent Wahhabis Destroyed Prayer House in Pankisi Gorge, September 18, 2010, https://en.abna24.com/service/important/archive/2010/09/18/196366/story.html
[48] Այս մասին մանրամասն՝ Prayer house destroyed in Pankissi [sic] Gorge, residents assert, Caucasian Knot, 21 July 2011, http://dagestan.eng.kavkaz-uzel.ru/articles/13901/
[49] Այս մասին տես՝ Jaba Devdariani and Blanka Hancilova, Georgia's Pankisi Gorge, Russian, US, and European Connections, CEPS Policy Brief, No23, June 2003, p. 4, http://georgica.tsu.edu.ge/f iles/05-Security/Devdariani%20&%20Hancilova-2002.PDF, (մուտք՝ 18.10.2019).

հետազոտություններում[50] բերվում են հետևյալ պատճառներն իրենց ենթապատճառներով՝

- Կրոն

Հետազոտությունների տվյալներով կիրճի երիտասարդների շրջանում սալաֆիականության նկատմամբ հետաքրքրության աճի մի քանի պատճառներ կան՝

o Իսլամի մասին տեղի «ավանդական իսլամի» հետևորդների շրջանում կար «գլոբալ իսլամի» մասին գիտելիքի պակաս,

o Սուֆիական իսլամի տեղական առաջնորդների կամ գիտակների շրջանում արաբերենի իմացության գրեթե բացակայություն

o Արաբական երկրներում կրթություն ստացած տեղի երիտասարդներին արդեն չէր բավարարում միայն վրացերենով արված աղոթքները և իրենց հարցերի պատասխանների ոչ լիարժեքությունը, առանց Ղուրանին հղելու պատասխաններն արդեն բավարար չէին:

o Կառուցված սալաֆիական «նոր մզկիթները» կարողանում էին կրոնական հարցերում պատասխաններ տալ՝ Ղուրանին և Սուննային հղում անելով:

Վերոնշյալ բոլոր կետերի առկայության շնորհիվ էլ երիտասարդները նախապատվություն էին տալիս սալաֆի քարոզիչներին և սալաֆիականությանը, որն էլ տալիս էր իրենց հուզող հարցերի պատասխանները:

- Գաղափարախոսություն, որի հիմնական հենքն այն է, որ կար ուժեղ հավատ, որ մուսուլմաններն աշխարհում ճնշված են և

[50] Giorgi Goguadze and Sergi Kapanadze, Daesh and Challenges Facing Georgia. Policy Document. Georgia's Reforms Associates (GRASS), Tbilisi, November 2015, https://grass.org.ge/wp-content/uploads/2015/12/Daesh-and-Challenges-Facing-Georgia.pdf,

ենթարկվում են խտրականությունների ամբողջ աշխարհում, և որ մուսուլմանները պետք է ամեն գնով պաշտպանեն միմյանց:

 Ազգային ինքնությունը/ինքնագիտակցությունը, որը բխում էր այն ենթատեքստից, որ կիստերը Սիրիայում էլ կռվում են ռուսների դեմ և նրանց տեսանկյունից Մերձավոր Արևելքում իրենք շարունակում են պայքարել ռուս-չեչենական դեռևս լուծում չստացած կոնֆլիկտի տիրույթում:

 Սոցիալ-տնտեսական. գործազրկության բարձր ցուցանիշները և ֆինանսական անելանելի իրադրությունը նույնպես մեծապես նպաստող և դրդող հանգամանքներից է:

 Կրթական. այն է՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության պակասը Պանկիսիի երիտասարդնեի համար:

 Մոբիլիզացիոն լավ ամրակայված հնարավորությունները. Մերձավոր Արևելքում կռվելու համար երիտասարդներին, նրանց ընտանիքի անդամներին և ընկերներին հավաքագրելու օնլայն/օֆլայն ցանցերը, ինչպես նաև իսլամում առկա հավատարմության երդում տվողների տեղական խմբերի առկայությունը[51]:

 Անձնական տիրույթում բողոքի, նեղացվածության, չիրագործված ցանկությունների, անարդարության զգացման և սեփական ինքնության ճգնաժամային իրավիճակից դուրս գալու միջոց:

Շատ հետաքրքրական տվյալներ են պարունակում 2018թ Մարիամ Ամաշուքելիի կողմից արված հետազոտությունը, որը ներառում է Պանկիսիի կիրճի բնակիչների հետ ֆոկուս խմբային

[51] Այս հատվածում հարկ է նշել, որ սկսած 2015թ այս հավատարմության երդումը կարելի էր տալ սկայպով և պարտադիր չէր մեկնել Սիրիա, որպեսզի ջիհադական պայքարի մասնակից դառնային: Այս մասին մանրամասն տես՝ The ISIS “Skype Warriors” of Pankisi Gorge, 25 June, 2015, https://www.georgianjournal.ge /military/30808-the-isis-skype-warriors-of-pankisi-gorge.html, (մուտք՝ 15.10.2019):

մեթոդաբանությամբ տվյալների և մտքերի հավաքագրում: Շատ կարևոր է տեսնել, թե ինչպես են հենց Կիրճի բնակիչներն ընկալում Պանկիսիի կիրճը իսլամական ծայրահեղականության տարածման տեսանկյունից: Նրանք հայտնում են, որ իրենց պայքարը՝ Կիրճը որպես ահաբեկչության և իսլամական ծայրահեղականության օջախի կարծրատիպի թե՛ ներվրաստանյան, թե՛ միջազգային ընկալման դեմ մի շարք դժվարությունների է հանդիպում, հատկապես ՁԼՄ-ների գործունեության և հենց պետության կողմից Կիրճի ներկայացման տեսանկյունից: Հետաքրքրական է, որ նրանց կարծիքներում հնչում է հետևյալ միտքը՝ որ Վրաստանի իշխանությունները, տարբեր քաղաքական նկատառումներից ելնելով, օգտագործում են Կիրճը և նրա բնակչությանը իրենց այս կամ այն ծրագրերի իրագործման համար: Օրինակներից է, Կիրճը ահաբեկչության հանգրվան ներկայացնել և այս կամ այն միջազգային համագործակցության ձևաչափով կարողանալ բարձրացնել Վրաստանի իմիջը: Օրինակ՝ հանդես գալ որպես հակաահաբեկչական գործողություններում ԱՄՆ-ի դաշնակից և համախոհ, մյուս կողմից, երբ նույն Վրաստանի այլ շրջաններից կարող էին լինել համաշխարհային ահաբեկչական այս կամ այն ձևաչափով մասնակցություն, գրեթե միշտ առավել լայն արձագանք է գտնում միայն Պանկիսիի կիրճից դուրս եկողների մասին տեղեկատվությունը և շեշտադրումները միշտ և պարբերաբար ուղղվում են Պանկիսիի կիրճի դեմ:

Այդ մարտահրավերների թվում նշված են՝ իրենց էթնիկ տարբերությունը վրացիներից, տեղական մամուլի և նաև կառավարության կողմից պանկիսցիների «ահաբեկիչներ» լինելու խոսույթի տարածմանը նպաստող քաղաքականությունը, նույնիսկ էթնիկ փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող

հասարակական կազմակերպությունների նկատմամբ չկա վստահություն և հավատ, քանի որ նրանք շահագրգռված չեն իրավիճակի փոփոխությամբ, քանի որ Պանկիսիին առնչվող ստերեոտիպերը նրանք օգտագործում են ֆինանսավորում ստանալու համար, իսկ խնդիրների լուծման պարագայում նրանք կզրկվեն իրենց ֆինանսավորումից: Կարևոր և անկյունաքարային իրադարձություն էր 19-ամյա Թամիրլան Մաչալիկաշվիլիի սպանությունը[52], որից հետո առանց այդ էլ վրացական իշխանությունների նկատմամբ թույլ վստահությունն ավելի թուլացավ: Այս ամենին զուգահեռաբար ավելացան օրենսդրական խստացումները ահաբեկչության պայքարի համատեքստում, որը Պանկիսիից հեռացած երիտասարդների վերադառնալու պարագայում ազատազրկման ենթարկվել անխուսափելի էր դարձնում նվազագույնը 3, առավելագույնը 17 տարով[53], ավելի է խորացնում Պանկիսիի՝ որպես ահաբեկչության օրրան լինելու խարանից ազատվելու լուծումների անհնարինության զգացումը և այլն:

---

[52] Տեղի կիստ բնակչության և վրաց իշխանությունների միջև բախումների, Թամիրլան Մաչալիկաշվիլիի սպանության և դրան հաջորդած իրադարձությունների ժամանակագրությունը տե՛ս՝ The Roots of Violent Extremism and Radicalization in Azerbaijan and Georgia, Report, Georgian Center for Security and Development, October 2018, pp. 8-11 https://www.ecoi.net/en/file/local/1450528/1226_1542181101_rapport-georgien-05112018.pdf, (մուտք՝ 9.10.2019):

[53] Հարկ է նշել, որ երբ 2014-ի դեկտեմբերի 8-ին, երբ Սիրիայում հերթական վրաստանցու սպանության լուրը հայտնի դարձավ, երկրի խորհրդարանը որոշեց օրենքի նախագիծ մշակել, որով պատասխանատվության կենթարկվեն բոլոր այն քաղաքացիները, ովքեր օտար երկրներում կմասնակցեն զինված հակամարտություններին, բացառություն էին կազմում, սակայն Ուկրաինայի կառավարական ուժերի կազմում Դոնբասում կռվող վրաստանցիները: Վրաստանի կողմից ծայրահեղականացման և ահաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարելու համար ձեռնարկված օրենսդրական փոփոխությունների մանրամասները տես՝ Giorgi Omsarashvili, Radical Islamism in Georgia, Philosophy Study, February 2018, Vol. 8, No. 2, 78-86, p. 83, doi: 10.17265/2159-5313/2018.02.003, (մուտք՝ 15.10.2019):

Փաստացի վերոնշյալ բոլոր բնութագրիչները համարվում են խոցելի մարդկանց և խմբերի մոտիվացիաների համար **խթանող և ներգրավող գործոններ** իրենց գաղափարական կամ կրոնագաղափարական ծայրահեղականացման ճանապարհին: Տարբեր հեղինակների կողմից այս կամ այն բնութագրիչը ունենում է տարբեր դասակարգումներ, որպես խթանող գործոններ են ներկայացվում կրոնական, գաղափարախոսական, ազգային ինքնության, սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալներն ու փորձառությունները, մինչդեռ ներգավման գործոններն առավել «խորքային» աստիճան են ներկայացնում և մեծապես առնչվում են մարդու էմոցիոնալ/հոգևոր նկրտումներին այս կամ այն խմբավորման պատկանելության զգացման շնորհիվ[54]: Տեսական մասնագետները գտնում են, որ այս երկու խմբի գործոններն էլ միմյանց հետ փոխկապակցված են և գործարկվում են միմյանց հետ կոմբինացված/work in combination[55]:

«Պայքարող/մարտնչող հոգին» ըստ պանկիսցիների՝ չեչենների և պանկիսցի կիստերի խիզախության և քաջության համատեքստում ներկայացվում է որպես էթնո-մշակութային գործոն: Սա կիստերի շրջանում ավելի շատ դիտարկվում էր որպես էթնոազգային ֆենոմեն քան առնչվում կրոնի հետ: Հետաքրքրական է, որ կան բազմաթիվ հարցազրույցներ, որտեղ կարծես պանկիսցիները ըմբռնումով են մոտենում և հասկանում Սիրիա մեկնող իրենց երիտասարդներին մշակութային համատեքստում և «կովկասցիները խիզախ են և կարող են իրենց

[54] Alex P. Schmid, Challenging the Narrative of the “Islamic State”, The International Centre for Counter- Terrorism – The Hague 6, No. 5, 2015, https://icct.nl/wp-content/uploads/2015/06/ICCT-Schmid-Challenging-the-Narrative-of-the-Islamic-State-June2015.pdf:

[55] Նույն տեղում և Alex P. Schmid, Radicalisation, De-Radicalisation, CounterRadicalisation: A Conceptual Discussion and Literature Review, The International Centre for Counter-Terrorism – The Hague 4, No. 2, 2013,

պաշտպանել կամ զենք սիրելը մեզ համար (չեչեններ/կիստեր) հոգեբանական երևույթ է» մտքերի համատեքստում: Տեղի բնակչությունը հավատացած է, որ կրոնական ռադիկալացումը չէ հիմնական պատճառը, որը դրդում է երիտասարդներին մեկնել և պայքարել ահաբեկիչների կողքին: Հետազոտությունների երիտասարդ բոլոր մասնակիցները՝ թե՛ տղամարդ, թե՛ կին, մի տեսակ ռոմանտիզացնում էին ռազմատենչությունը՝ համարելով իրենց «սերն առ զենք» կամ «մարտնչող ոգին» որպես Հյուսիսային Կովկասի ազգային ինքնության մի կարևոր բաղադրիչ: Նրանք շատ հաճախ Իսլամական պետության կազմում իրենց հայրենակիցների հայտնվելը չէին նույնականացնում նրանց ահաբեկիչների կամ հենց Իսլամական պետության գրոհայինների հետ, այլ համարում էին նրանց «ճշմարիտ մուսուլմաններ», որոնք ինչ որ նաիվությամբ նպատակ ունեին օգնել Սիրիայում կռվող այլ մուսուլմաններին[56]: Այս հարցվածների շրջանում՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, կար այնպիսի մի միտում, որ նրանք կարծես ահաբեկչական գործողությունները որպես պատասխան և արձագանք էին համարում աշխարհով մեկ մուսուլմանների նկատմամբ սադրանքներին: Միևնույն ժամանակ երիտասարդները հրաժարվում էին հանցագործությունը, պատերազմը և ահաբեկչությունը միևնույն հարթություն մեջ դիտարկել[57]:

Կառավարության և պետական հաստատությունների նկատմամբ կիստերի շրջանում չկա վստահություն, միևնույն ժամանակ լարված էին նաև իրենց տարածաշրջանում սուֆի և սալաֆի համայնքների առաջնորդների հարաբերությունները:

[56] Mariam Amashukeli, 2019, p. 3, 2019, https://www.ecoi.net/en/file/local/2020220 /Understanding-why-youth-fight-in-the-Middle-East-en.pdf, (մուտք՝ 12.10.2019);
[57] Նույն տեղում:

Տասնամյակներ շարունակ կառավարության կողմից ահաբեկչության դեմն առնելու բոլոր մեխանիզմները եղել են զուտ մարդկանց քրեական հանցագործներ դիտարկելը, որոնք այս կամ այն կերպ եղել են ահաբեկչության և ծայրահեղականացման այս կամ այն գործընթացում ներգրավված: Համայնքային կանխարգելող գործողությունները եղել են շատ անարդյունավետ և ֆրագմենտար[58]: Հետաքրքրական է, որ ներհամայնքային բազմաթիվ ձայներ և նախաձեռնություններ են փորձում իրականացվել, ինչպես օրինակ «Պանկիսիի երիտասարդական նախաձեռնությունների խմբի» ստեղծումն էր, որի հիմնական նպատակն է Պանկիսիի հետ կապված կարծրատիպերը քանդելը և առավել ինտեգրված հասարակության կայացումը[59]:

Սակայն երիտասարդ պանկիսցիներին ջիհադական կազմակերպությունների ներգրավման հարցում քաղաքական, պատմական և մշակութային նախադրյալներ են ներկայացվում, որն առնչվում է Ռուսաստանի կենտրոնական իշխանության և Չեչնիայի միջև առկա կոնֆլիկտի հետ, և որ կիստերը որպես «մարտական/մարտնչող ոգիներ» ունեն հերոսական նկրտումներ կռվելու և պաշտպանելու մուսուլմաններին: Պանկիսցիների շրջանում հարցումները ցույց են տվել, որ մասայական չեն այդ որոշումները, սակայն քարոզչական տեսանկյունից բազմաթիվ մեխանիզմներ են օգտագործվել երիտասարդներին ներգրավելու հարցում: Հարցազրույցի մասնակիցներից մի քանիսը նշել էին, որ Սիրիայում վաղ շրջանում կռված պանկիսցիներից սոցիալական մեդիաներում նույնիսկ ստեղծվում էին խմբեր, որոնք նպատակ ունեին մեղքի զգացում առաջացնել Պանկիսիում բնակվող այլ

[58] Նույն տեղում, էջ 4:

[59] Այս մասին տես՝ Mariam Amashukeli, 2018, p.30. http://fellows.eapcivilsociety.eu/wp-content/uploads/2018/07/Research-Report-2018_Mariam-Amashukeli.pdf:

երիտասարդների շրջանում իրենց պասիվության և մուսուլման եղբայրներին օգնության չգնալու համար, ինչը նրանց հիմնական պարտավորությունն է[60]:

Սոցիալական բաղկացուցիչները ուսումնասիրելիս կարևոր ցուցանիշներ են հատկապես 2011թ. Մերձավոր Արևելքում սկսված ծայրահեղական ջիհադական շարժումներին Վրաստանի քաղաքացիների մասնակցության և դրանում Պանկիսիի կիրճի բնակչության մասնաբաժինը[61], որի արդյունքում Պանկիսիի կիրճը նաև անվանում էին «Հարվարդ ահաբեկիչների կերտման/դաստիարակման համար» ("Harvard of terrorist upbringing"[62]: Տարբեր աղբյուրների տվյալներով, որոնք միմյանցից տարբերվում են, սահմանում էին ամենաքիչը 50-200 Վրաստանի քաղաքացու[63] մասնակցություն Մերձավորարևելյան՝ մասնավորապես Սիրիական ռազմական գործողություններում սկսած 2011թ, սակայն որոնց 28 տոկոսը էթնիկ կիստեր չեն եղել, իսկ 17 տոկոսն էլ Աջարայի և Քվեմո Քարթլիի մուսուլմաններ են

[60] Mariam Amashukeli, 2018, p.30. http://fellows.eapcivilsociety.eu/wp-content/uploads/2018/07/Research-Report-2018_Mariam-Amashukeli.pdf, (մուտք՝ 12.10.2019):

[61] Նույն տեղում, Giorgi Goguadze and Sergi Kapanadze, Daesh and Challenges Facing Georgia. Policy Document. Georgia's Reforms Associates (GRASS), Tbilisi. November 2015, https://grass.org.ge/wp-content/uploads/2015/12/Daesh-and-Challenges-Facing-Georgia.pdf, (մուտք՝ 16.10.2019).

[62] Bennett Clifford, Georgian foreign fighter deaths in Syria and Iraq: what can they tell us about foreign fighter mobilization and recruitment? Caucasus Survey, 6 (1), November 2017, pp. 62–80, https://doi.org/10.1080/23761199.2017.1399701.

[63] Ըստ Վրաստանի պետական անվտանգության ծառայության 2016թ. զեկույցի՝ Վրաստանի մոտ 50 քաղաքացի կռվել է Սիրիայում և Իրաքում, և դրանցից 10-ը՝ զոհվել, որոնք բոլորն էլ եղել են Պանկիսիի կիրճի բնակիչներ, այս մասին տես Caucasian Knot: State Security Service: about 50 Georgian citizens are fighting in Syria and Iraq, 29 March, 2016. Պաշտոնական տվյալները գրեթե միշտ ավելի նվազեցված են, քան արևմտյան այլ աղբյուրներում, որտեղ նույն թվականի համար ներկայացվում են առնվազն 100-200 մասնակիցներ՝, իսկ մահացածների թվաքանակը՝ 29, տես՝ Clifford B., Georgian foreign fighter deaths in Syria and Iraq: what can they tell us about foreign fighter mobilization and recruitment? Caucasus Survey, 6 (1), November 2017, pp. 62–80. https://doi.org/10.1080/23761199.2017.1399701

եղել[64]: Սակայն ի՞նչ ցուցանիշների արդյունքում է, որ Պանկիսիի կիրճը դառնում է «գրոհայինների և ահաբեկիչների համար հանգրվանի կամ օջախի» կամ «Ահաբեկիչների դաստիարակման Հարվարդի» կոչմանն արժանանալուն և համաշխարհային ԶԼՄ-ների ուշադրության սևեռման համար[65]: Նախ Վրաստանից գրոհայինների գործողություններին մոտ 3000 բնակչության պայմաններում Պանկիսիի կիրճից ԻՊ-ի շարքերում մոտ 100-200-ի հասնող գրոհայինների ներկայությունը ցույց է տալիս մասշտաբային անոմալ անհամապատասխանությունը և մեծ չափերի հասնող մասնակցայնությունը: Սրան ավելանում է ջիհադական տարբեր խմբավորումների (Ջունուդ ալ-Շամ, ԻՊ, Ջաբհաթ ալ-Նուսրա, Աջնադ ալ-Կաուկազ և այլն) ղեկավար կազմում Պանկիսցի առնվազն 8 հայտնի առաջնորդ լինելու հանգամանքը: Այս երկու ցուցանիշներն էլ հանգեցրել են Պանկիսիի կիրճի նկատմամբ միջազգային հանրության նմանատիպ սևեռվածությանն[66] ու միջազգային մամուլում այն որպես ահաբեկիչների ապաստարան և ապահով գոտի ներկայացնելուն[67]:

---

[64] Bennett Clifford, Georgian foreign fighter deaths in Syria and Iraq: what can they tell us about foreign fighter mobilization and recruitment? Caucasus Survey, 6 (1), November 2017, pp. 62–80. https://doi.org/10.1080/23761199.2017.1399701, (մուտք՝ 15.10.2019):

[65] Նույն տեղում:

[66] Հետաքրքիր մի կատակ է տարածված պանկիսցիների շրջանում. «Վրաստանը, գիտեք ո՞րն է, այն, որ Պանկիսիի մոտ է»: Սա իրականում ամրապնդում է և արտացոլում է այն իրականությունը, որ հենց պանկիսցիներն են ընկալում, որ ավելի շատ մարդ է իմանում կիրճի մասին, քան այն երկրի, որի մաս է կազմում կիրճը: Այս մասին տե՛ս՝ Paul Manning, Folklore and Terror in Georgia's "Notorious" Pankisi Gorge: The ethnography of the state violence at the margins of the nation, Feb. 14, 2016, https://georgica.tsu.edu.ge/?p=1883, (մուտք՝ 25.10.2019):

[67] Նույնիսկ սովորական Գուգլ որոնողական համակարգով Պանկիսիի կիրճ որոնման արդյունքներում նյութերի մեծ մասը ծայրահեղականացման և ահաբեկչության համետքստում են:

Տարիքային կազմի հետ կապված ուսումնասիրությունները բացահայտել են մի շարք հետաքրքիր տվյալներ՝ այսպես կոչված պանկիսցիների «երկրորդ ալիքը», որոնց միջին տարիքը 25 է եղել (մահվան ժամանակ) հիմնականում եղել են Իսլամական պետության կազմում կռվող գրոհայիններ, իսկ «առաջին ալիքը», որոնք հիմնականում մոտ 7 տարով մեծ են եղել առնչություններ են ունեցել ալ-Կաիդայի կամ ոչ Իսլամական պետության ջիհադական կազմավորումների հետ: Բացի դա ըստ տվյալների՝ ի տարբերություն առաջին ալիքի, երկրորդ ալիքի գրոհայինները գրեթե ոչ մի տեսակի ռազմական փորձառություն չեն ունեցել, ինչն էլ հասկանալիորեն մեծացրել է մահացությունների թիվը երկրորդ ալիքի շրջանում, որը նաև տեխնիկապես էլ համընկնում է ջիհադական տարբեր խմբավորումների կողմից օգտագործվող ընդհանուր դարձած ռումբ-ահաբեկիչների և առաջնագծում նրանց պահեստավորելու պրակտիկայի հետ[68]:

2019թ. մարտ ամսի Democracy and Freedom Watch-ի հրապարակումներից մեկում էլ Պանկիսիի կիրճից Սիրիական պատերազմում մահացածների թիվը հաշվվում էր 33[69], իսկ civil.ge կայքի հրապարակումներից մեկում նշվում էր, որ միայն Պանկիսիի կիրճից մահացածների թիվն արդեն 34-ն է, իսկ Սիրիական պատերազմի բռնկումից մինչև տվյալ պահը Վրաստանի քաղաքացիներից մահացածների թիվը հասնում է 45-ի[70]:

[68] Alex P. Schmid, Challenging the Narrative of the “Islamic State”, The International Centre for Counter- Terrorism – The Hague 6, No. 5, 2015, https://icct.nl/wp-content/uploads/2015/06/ICCT-Schmid-Challenging-the-Narrative-of-the-Islamic-State-June2015.pdf

[69] 33rd ISIS fighter from Georgia’s Pankisi Gorge dead in Syrian war, TBILISI, DFWatch, March 9, 2019, https://dfwatch.net/33rd-isis-fighter-from-georgias-pankisi-gorge-dead-in-syrian-war-52956, (մուտք՝ 15.08.2019):

[70] Georgian Citizen Killed in Syria, 12.03.2019, https://civil.ge/archives/279149

Պանկիսիի կիրճը՝ քաղաքացիական հետպատերազմյան իրադրությունում

Փախստականների առկայությունը. Որպես քաղաքացիական պատերազմի հետևանք ազդեցության գործակցով առաջին բաղադրիչը փախստականների առկայությունն է: Ինչպես նշել ենք վերը Պանկիսիի կիրճ չեչեն փախստականներ սկսեցին ներթափանցել Առաջին չեչենական պատերազմի ընթացքում և արդեն նշանակալի հոսք է նկատվում Երկրորդ չեչենական պատերազմից հետո՝ 1999-2000թթ: Որպես նպաստող հանգամանքներ էին նաև ներկայացվում՝ Պանկիսիի կիրճում էթնիկ ազգակցականների առկայությունը և աշխարհագրական առումով մոտիկությունը:

Տարբեր հետազոտողներ և նաև պաշտոնական տվյալներ այս փախստականների թիվը նշում են 7000-10000[71]: Վրաստանի նման պետությունը, որը տվյալ փուլում, այնքան թույլ էր, որ չէր կարող կազմակերպել փախստականների համար նախնական կեցության համար ջրի, ուտելիքի, ինչպես նաև դեղորայքային անհրաժեշտ ապահովություն, սա անմիջապես դառնում է անվտանգության լրջագույն խնդիր: Այս ժամանակահատվածում է, որ վրացական իշխանությունները գրեթե որոշիչ դեր չէին կատարում Պանկիսիի կիրճում և հատկապես անվտանգության ապահովման տեսանկյունից ոչ մի դերակատարում չունեին, ի տարբերություն տվյալ ժամանակահատվածում գործող տեղական առաջնորդների, կրիմինալ ղեկավարների կամ տեղի «շեֆերի», որոնք էլ ապահովում էին անվտանգությունը և դրանով էլ դառնում էին փախստականների համար առաջնորդներ[72]:

[71] Dvali, Akaki, Instability in Georgia: A New Proliferation Threat?, August 1, 2003, Nuclear Threat Initiative, https://www.nti.org/analysis/articles/instability-georgia/, (մուտք՝ 15.08.2019):
[72] Daniel L. Byman and Kenneth M. Pollack, 2007, հղված Things Fall Apart, Containing the Spillover from an Iraqi Civil War, Brookings Institution Press, May 7, 2007, p 23.

Ստեղծվում էին նոր ենթակառուցվածքներ, որոնք ոչ թե կառավարվում էին պետության կողմից, այլ արտաքին այս կամ այն ազդեցության շրջանակների կողմից:

Վրացական կառավարությունը սկզբնական շրջանում ժխտում էր չեչեն գրոհայինների առկայությունը Վրաստանում, սակայն արդեն 2001թ Շևարնաձեն ստիպված առաջին անգամ ընդունում է, որ Պանկիսիի կիրճում կարող են լինել չեչեն գրոհայիններ[73]:

Երկրորդ բաղադրիչը **ահաբեկչությունն է**: Չնայած Վրաստանում անջատողական տարբեր քաղաքական նախադրյալներին՝ կիստերն իրենց փակ-կլանային համակարգով կարծես հեռու էին մնում քաղաքական վայրիվերումներին մասնակցելուց և ներգրավվելուց: Սակայն եթե նույնիսկ հենց իրենք կիստերը հեռու էին մնում քաղաքացիական պատերազմներից և դրանց մասնակցելուց, նրանք ունեին իրենց գրավչությունը իսլամական ծայրահեղական խմբավորումների համար, այն կարևոր տարանցիկ հնարավորություններ էր ստեղծում ցանցային գործունության համատեքստում: Հայտնի է, որ թուրքական, աֆղանական և արաբական (հիմնականում սաուդցիներ և Հորդանանի քաղաքացիներ) տարբեր շրջանակներ էին փորձում իրենց ազդեցությունը տարածել՝ ֆինանսական հոսքեր ներմուծելով Պանկիսիի կիրճ: Ընդհանրապես որևէ երկրի տարածքում կառավարական ուժերի ազդեցությունից դուրս մնացած ծայրահեղականները ոչ միայն տվյալ երկրի, տարածաշրջանի այլև համաշխարհային

[73] Այս մասին մանրամասն՝ Georgia’s Pankisi Gorge: Russian Concerns and U.S. Interests, CRS Report for Congress, March 2003, https://www.everycrsreport.com/files/20030306_RS21319_bb7cf52b928cc1e18ac27876f0e2f43d71b8dc5e.pdf
Georgia, The Situation of the Kist Community and the Chechens, Joint report by the Danish Immigration Service and the Danish Refugee Council, November 2018, https://www.ecoi.net/en/file/local/1450528/1226_1542181101_rapport-georgien-05112018.pdf, (մուտք 14.10.2019):

անվտանգությանը սպառնացող մեծագույն խնդիրներից են եղել և մասնավորապես 2000-ականներից այն ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով տարածաշրջանային և գլոբալ իրողությունները:

Երրորդը **հարևանային ներխուժումներն** են, որն ըստ 2002թ. Ֆրիդոմ հաուսի տվյալների[74] ռուսական կողմից Վրաստանի օդային տարածքի խախտումներն էին և կիրճում ռմբակոծություններն էին 2001թ. սկզբներին: Ռուսաստանը մեղադրում էր Վրացական կողմին չեչեն գրոհայիններին իր տարածքը տրամադրելու և նաև զենքով մատակարարելու մեջ[75]:

Անջատողականությունը կհանգեցնի անջատողականության բաղադրիչը կարծես զսպելու է գալիս Վրաստանի կողմից հարևան Ռուսաստանում անջատողական շարժումներին այս դեպքում չեչենական շարժումներին աջակցելուց, քանի որ դա ուղղակիորեն կարող էր հող նախապատրաստել իր երկրում անջատողականների ջրաղացին ջուր լցնելու համար: Չեչեն գրոհայիններին զինելով՝ Վրաստանը կարող էր զինել նաև այն մարդկանց, որոնք կարող էին մասնակցություն ունենալ աբխազական և հարավօսական անջատողականներին աջակցելու հարցում[76], իսկ մյուս կողմից էլ Վրաստանը լավ էր հասկանում, որ այդ աջակցությունը կարող է ոչ համաչափ պատասխան ստանալ ռուսական կողմից:

---

[74] Freedom House, Freedom of the World-Georgia, 2002, https://freedomhouse.org/report /freedom-world/2002/Georgia, (մուտք՝ 29.09.2019):

[75] Theresa Reinold, State Weakness, Irregular Warfare, and the Right to Self-Defense Post-9/11, American Journal of International Law, Vol. 105, No. 2, 2011.

[76] Պանկիսցիների կողմից վրացական անջատողական շարժումներին պանկիսցիների մասնակցության մասին տես՝ Ondrej Zacha, The Pankisi Gorge crisis through the lens of spillover and. terrorist save heaven theory, Research paper, Masaryk University, Spring 2016, p. 5, https://is.muni.cz/el/1423/jaro2016/MVZ489/6 1907258/ZACHA_-_Pankisi_Gorge.pdf, (մուտք՝ 18.10.2019):

Բնակչության ծայրահեղականացումն ինքնին թույլ գործոն էր սկզբնական շրջանում, սակայն այն ահաբեկչության վտանգի համատեքստում սկսում է առավել վտանգավոր դառնալ:

Ահաբեկչական խմբավորումներին անդամակցողների միմյանց հետ մտերմության, անձնական կապերի և միևնույն փորձառության ու սոցիալական կազմի ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ (offline personal networks) ոչ վիրտուալ անձնական կապերը/ցանցը որոշիչ դեր է ունեցել Պանկիսիի կիրճի բնակչության շրջանում օտարերկյա գրոհայինների հավաքագրման հարցում առավել, քան որևէ լայնամասշտաբ սոցիալ-տնտեսական այլ գործոն կամ օնլայն ծայրահեղականացման կոչերի ազդեցությունը[77]:

Տնտեսական կորուստները քաղաքացիական հետպատերազմի հերթական բաղադրիչներից է, որը, սակայն, ըստ որոշ հեղինակների դժվար չափելի է: Անմիջական ազդեցություններից մեկը Վրաստանի անվտանգության ուժերի կողմից տվյալ շրջանի նկատմամբ վերահսկողության վերականգնման և ահաբեկչական որևէ ցանցի ներկայացուցիչների վերացման նպատակով ծախսերն են, մյուս կողմից կիրճում առկա հանցագործ տարրերի, նարկոթրաֆիքինգի հետ առնչություն ունեցող հսկայական տնտեսական կորուստները: Միևնույն ժամանակ քաղաքացիական հետպատերազմյան և հատկապես կիրճում առկա բռնության ու ահաբեկչական տարրերի ուժեղացումը մեծապես նպաստում է առևտրային հնարավորությունների չեզոքացմանը, իսկ օրինակ մինչև 1999թ. Վրաստանի ՀՆԱ-ի

[77] Clifford B., Georgian foreign fighter deaths in Syria and Iraq: what can they tell us about foreign fighter mobilization and recruitment? Caucasus Survey, 6 (1), November 2017, pp. 62–80. https://doi.org/10.1080/23761199.2017.1399701

նվազումը մեկ տոկոսից ցածրի նույնպես քաղաքացիական հետպատերազմական իրադրության ցուցանիշներից է[78]:

Պանկիսիի կիրճի տնտեսական ցուցանիշները հնարավոր չի գտնել, քանի որ ոչ միայն Ախմեթա նահանգում չեն իրականացվել, այլև Վրաստանի Ազգային վիճակագրական վարչությունը նույնպես չի իրականացրել, որի հետևանքով հնարավոր չէ ցուցանիշներ գտնել գործազրկության, եկամուտների շուրջ և այլն:

Պանկիսիի կիրճը՝ ահաբեկչության ապահով հանգրվան

Ահաբեկչության ապահով հանգրվանները՝ ահաբեկչական իսլամիստական շարժումների հաջողության գրավականներից են, երբ նրանք ունենում են օպերացիոն և կազմակերպչական գործիքներ, հետագա գործողությունների իրագործման համար[79]: Ահաբեկչական հանգրվանների առաջացման նախապայմաններից է **աշխարհագրական բաղադրիչների** առկայությունը՝ այնպիսի տարածքների առկայությունը, որոնք դուրս են կենտրոնական կամ տեղական իշխանությունների վերահսկողությունից: Պանկիսիի կիրճը իր ծայրամասային, լեռնային դիրքի շնորհիվ, ինչպես նաև թույլ ենթակառուցվածքներով և հասանելիության առումով քիչ ուղիների առկայությամբ՝ աշխարհագրական բնական պարամետրերով կարծես նպաստում էր ահաբեկչական տարրերի գործողությունների իրականացման համար (Պանկիսիիի լեռներում թաքնվելու, սահմանները հատելու

[78] Ondrej Zacha, The Pankisi Gorge crisis through the lens of spillover and. terrorist save heaven theory, Research paper, Masaryk University, Spring 2016, p. 6, https://is.muni.cz/el/1423/jaro2016/MVZ489/61907258/ZACHA_-_Pankisi_Gorge.pdf, (մուտք՝ 18.10.2019):
[79] Cristiana C. Brafman Kittner, The Role of Safe Havens in Islamist Terrorism, *Terrorism and political violence*, Volume 19, Issue 3/ 19:03, 2007, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/09546550701246791; Հղված՝ Ondrej Zacha, 2016, p. 1.

հնարավորություններով), ինչպես նաև Չեչնիայի հարևանությունը՝ որպես գաղափարական ասպեկտ նույնպես նպաստող հանգամանք էր: Այդ հնարավորություններին ավելանում է **թույլ կառավարումը** պետության կենտրոնական իշխանության կողմից, երբ պետությունը չի կարողանում ապահովել սեփական տարածքում բնակվող մարդկանց անվտանգությունը, չի կարողանում տրամադրել բնակչության հասարակական ծառայությունները և կարիքները, ապահովել քաղաքական լեգիտիմություն և վերահսկել գործող տնտեսությունը: Ահաբեկիչները հենց այսպիսի իրադրություններից էլ օգտվելով մեծապես ծավալում են գործունեություն Պանկիսիի կիրճի նման «շագանակագույն տարածքներում» կամ «անկայունության գրպանիկներում»: Ի հավելումն կենտրոնական իշխանության կողմից իրավիճակի անվերահսկելիությանը ավելանում է նաև մեկ այլ բաղադրիչ՝ **կոռուպցիան:** Պարզապես ներկայացնելով 1999-2004թթ. Թրանսփերենսի ինթերնեյշընալ կազմակերպության Կոռուպցիայի ինդեքսների տվյալները՝ երբ Վրաստանը 133 երկրներից զբաղեցնում էր 124-րդ հորիզոնականը: Կոռուպցիայի առկայությունը և՛ ուղղակի, և՛ անուղղակի կերպով մեծապես նպաստում է ահաբեկչական ապահով հանգրվանների առաջացմանը, որն էլ ավելի նպաստավոր է դառնում, երբ զուգորդվում է հանցավորության, մաքսանենգության կամ նարկոթրաֆիքինգի առկայության պայմաններում:

«**Բռնության շուրջ եղած հիշողությունների/պատկերացումների պատմությունը»**, որը համարվում է ահաբեկչության ապահով հանգրվանների առաջացման կարևոր նախադրյալներից, երբ պետությունը չի կարողանում ապահովել բնակչության

անվտանգությունը, այլ գործող միավորներ են սկսում դրա իրագործումը «բռնության» այս կամ այն միջոցների օգտագործմամբ: Զինված այս կամ այն խմբավորմանն էլ ապավինում են իրենց անվտանգության ապահովման հարցում: Իսկ հենց Պանկիսցիների շրջանում անցկացված հարցումների և հետազոտությունների արդյունքներով, ինչպես արդեն նշել էինք վերը, էթնոմշակութային մակարդակում էին բացատրում իրենք «ռազմատենչությունն ու սերն առ զենք»:

Այս շարքում վերջին բայց ոչ նվազ կարևոր բաղադրիչը **աղքատությունն** է: Իրականում սոցիալական խնդիրները կարող են նաև հանգեցնել նրան, որ ահաբեկիչներն աջակցություն գտնեն, ոչ միայն գաղափարական համախոհությունից ելնելով, այլ պարզապես գումարի դիմաց: Նույնիսկ երբեմն տեղական սոցիալ-տնտեսական առկա ենթակառուցվածքները փոխարինվում էին ահաբեկիչների կողմից իրենց նպատակներին ծառայեցվող ենթակառուցվածքներով: Փաստացի բոլոր կոմպոնենտներն առկա էին, որպեսզի Պանկիսիի կիրճը ահաբեկչության «ապահով հանգրվան» դառնար: Տնտեսական հեռանկարներից զուրկ լինելու հանգամանքներում, երիտասարդների մեծաթվության պայմաններում, որոնք ուղղակի ունեն եռանդ և ուժ, սակայն չկա այդ ամենի պոզիտիվ ուղղորդում շատերն էին պատրաստ գնալ կռվելու: Այս ամենին ավելանում է նախկին հին ուժերի թուլացումը, որոնք իրենց էթնիկ ինքնագիտակցության պահպանման հիմքում դիտարկում էին «հողն ու աշխատանքը»: Երբ տարածքները կորցվում են պատերազմում, իսկ աշխատանք էլ չկա պաշտպանելու, երիտասարդ ծայրահեղական մտքերով գործիչները կարողանում էին իրենց ազդեցությունն ու իշխանությունը տարածել և դարձնել ավելի գրավիչ:

Պանկիսիի կիրճը համարվում է սոցիալական դեպրեսիայի մի օջախ, որը ոչ այդքան իրական սոցիալ-տնտեսական հիմք ունի, այլ մի տեսակ չեն ընկալում Վրաստանի իշխանություններին, որպես սեփական իշխանություն, միևնույն ժամանակ չկա նաև տեղական «ինքնիշխանության» հնարավորություն և ուժեղ ձեռքի կառավարում: Դրա համար տեղացի բնակչությունը, մի տեսակ անիշխանության միջավայրում լինելով, խալիֆայության քարոզիչների կողմից հեշտ թիրախավորվում էին, և կյանքի իմաստի և հստակ քայլերի հաջորդականության ներկայացմամբ կարողանում էին ներգրավել՝ երիտասարդների եռուն էներգիան գործիք դարձնելով:

Ամերիկյան ներգրավվածությունը Պանկիսիի կիրճի համատեքստում

2002թ. սկզբին Թբիլիսում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ֆիլիպ Ռամլերը հայտարարում է, որ Աֆղանստանից իսլամական ծայրահեղականները տեղափոխվում են Կովկասյան տարածաշրջան[80]: ԱՄՆ-ը, ի աջակցություն վրացական իշխանությունների, հայտարարեց, որ մոտ 100-150 ռազմական խորհրդական հակաահաբեկչական ուժերին ուսուցանելու և վերապատրաստելու համար կժամանեն Վրաստան: Բնական է, որ Ռուսաստանի արձագանքը չուշացավ, և միայն առավել չափավոր և կարծես «ըմբռնումով» սկսվեց ընկալվել Ռուսաստանում, երբ Վլադիմիր Պուտինը այս ամենի մասին ասաց, որ «ոչ մի դժբախտություն էլ չկա»[81]:

[80] Dvali, Akaki, Instability in Georgia: A New Proliferation Threat?, August 1, 2003, Nuclear Threat Initiative, https://www.nti.org/analysis/articles/instability-georgia/, (մուտք՝ 15.08.2019):
[81] Putin Says No Tragedy in US-Georgian Cooperation, 1.03.2002, available at: https://civil.ge/archives/101278?lang=en, (մուտք՝ 18.08.2019):

Ամերիկյան «Վրաստան. վարժանք և սպառազինում ծրագիրը» (Georgia Train and Equip program (GTEP)[82] կարծես Վրաստանի՝ դեպի արևմուտք քաղաքական ուղղորդման կանխորոշումն է, որը հնարավորություն ընձեռեց Վրաստանին, հիմնական տարանցիկ պետություն լինելու դերից բացի, հավակնել նաև Հարավային Կովկասում Արևմուտքի նոր «ձգողականության կենտրոնի» դերին: Այս դերն ամենից ավելի ակնառու երևաց ԱՄՆ-ի կողմից իրականացվող $64 մլն արժողության «Վրաստան. վարժանք և սպառազինում ծրագրում» (ՎՎՍԾ) («Georgia Train and Equip Program» - GTEP) և դրան հաջորդող «Օժանդակության և կայունության գործողությունների ծրագրում» (ՕԳԿԾ) («Sustainment and Stability Operations Program» - SSOP), որոնցից յուրաքանչյուրը Վրաստանը դիտում էր որպես տարածաշրջանում ԱՄՆ ռազմական գործողությունների և շահերի դրոշակակրի (անգամ գերազանցվեցին ԱՄՆ-ի կողմից Կասպից ծովում Ադրբեջանի զինուժի հետ անցկացված վարժանքները): Սակայն այս ամենը նպաստեց նաև այն բանին, որ Վրաստանը չափից ավելի ինքնավստահ դառնա, չնայած այն իրողությանը, որ ԱՄՆ ռազմական ծրագրերից[83] և ոչ մեկը երբևէ նպատակ չէր ունեցել Վրաստանի զինված ուժերին որևէ իրական ռազմական պատրաստականություն կամ հարձակողական կարողություն տրամադրել[84]:

---

[82] Georgia Train and Equip Program (GTEP),
Krtsanisi 9/11 Training Area, Georgia, February 1, 2003, available at: https://2001-2009.state.gov/r/pa/ei/pix/b/eur/18737.htm, (մուտք՝ 11.09.2019):

[83] Ամերիկյան ծրագրերի մասին Վրաստանում մանրամասն տես՝ Annika Kastetter, Moving forward: how Georgia can advance US strategic interests, Opinion Paper, Georgian Strategic Analysis Center, December 2018, p available at: https://gsac.ge/wp-content/uploads/2019/02/US-Georgia-Publication_FINAL.pdf, (մուտք՝ 18.09.2019):

[84] Ռիչարդ Գիրագոսյան, Տարածաշրջանային զարգացումները և հայաստանի ազգային անվտանգությունը, 19.01.2009, http://www.noravank.am/arm/articles /detail.php?ELEMENT_ID=477, (մուտք՝ 25.09.2019):

Այսինքն՝ վարժանքի և սպառազինման ծրագիրն իրականում նախագծված էր որպես ճկուն, փուլային ուսուցման նախաձեռնություն, և ընդամենը ուսուցում և հանդերձանք էր տրամադրել երեք հազարից պակաս զորքի՝ նպատակ ունենալով նրանց ապահովել սահմանափակ հակաահաբեկչական կարողություններով: Նույն կերպ էլ ԱՄՆ-ի կողմից իրականացվող «Օժանդակության և կայունության գործողությունների ծրագիրը» ընդամենը նպատակ ուներ ընտրված վրացական միավորումները պատրաստել Իրաքում տեղակայելու համար, որպեսզի վերջիններս օգնեն ԱՄՆ «Իրաքի ազատագրման գործողության» (ԻԱԳ) իրականացմանը (Operation Iraqi Freedom - OIF). Հիշենք, որ արդեն 2004թ. սեպտեմբերի 13-ի հայտարարության մեջ ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակը՝ Ռիչարդ Բուշերը ասում է. «Պանկիսին այլևս ապահով դրախտ չէ ահաբեկիչների համար»[85]:

Ըստ 2014 թ. ԱՄՆ Պետդեպարտամենտի ահաբեկչության մասին զեկույցի[86]՝ մոտ 50-100 վրաստանի քաղաքացիներ Պանկիսիի կիրճից և Աջարայից տեղափոխվել են և արդեն ռազմական գործողությունների են մասնակցել Իսլամական պետության կազմում: Այս տվյալները համընկնում են նաև այլ նման միջազգային զեկույցներում, մինչդեռ վրացական կողմը դրանք ավելի նվազ է ցույց տալիս:

Կարևոր և անկյունաքարային տեսաուղերձ է համարվում 2015թ. նոյեմբերի 23-ին վրացի մի քաղաքացու կողմից հրապարակված ուղերձը, որը Վրաստանից հասել էր Սիրիա: Այս ուղերձը վերնագրված է «ուղերձ վրաց ժողովրդին» և ուղղված էր վրաստանի քաղաքացիներին և վախեցնում էր նրանց

[85] U.S. Department of State: Pankisi “No Longer a Haven for Terrorists”, 14.09.2004, available at https://civil.ge/archives/116044, (մուտք՝ 22.10.2019):
[86] Հակաահաբեկչության Բյուրոյի առանձին երկրների զեկույցներ, տես՝ https://www.state.gov/documents/organization/239631.pdf (մուտք 15.03.2019):

արյունահեղությամբ, համարում էր նրանց քաֆիրներին հետևողներ և սպառնում էր ջիհադով[87]: Սա առաջինն էր նման կարգի հրապարակումներիից, որն անմիջականորեն առնչվում էր Վրաստանի հետ, և այն պետք է լրջագույն անվտանգության հարցեր բարձրացներ Վրաստանում և հասարակության շրջանում և համապատասխանաբար անվտանգությունն ապահովող ինստիտուտների և կառույցների շրջանում: Թեև Վրաստանը շարունակում էր ապահով գոտի համարվել՝ ահաբեկչության թիրախ չհանդիսանալով, սակայն հաշվի առնելով երկրի ներսում հակաահաբեկչական փորձառության պակասը, և հատկապես հասարակական վայրերի ապահովության տեսանկյունից Վրաստանի անպատրաստությունը սկսում է դառնալ քննարկման թեմա և նաև սկսում է գիտակցվել որպես լուրջ սպառնալիք:

Սեպտեմբերի 11-ից հետո լայնամասշտաբ ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ Փարիզում, նոյեմբերի 13-ին, երբ Իսլամական պետությունը հանձն առավ տեղի ունեցած ահաբեկչության պատասխանատվությունը, որի ժամանակ սպանվել էր ավելի քան 100 մարդ: Այս իրադարձությունները ընկած էին կարևոր աշխարհաքաղաքական փոփոխությունների հիմքում: Այս ամենը ինչպես էր վտանգում Վրաստանը՝ Նախ վիզաների ազատականացման հարցում վրաստանի քաղաքացիների անվան տակ դեպի Եվրոպա կարող են տեղափոխվել նաև ահաբեկիչներ, Փարիզի դեպքերից հետո[88] հատկապես այդ վտանգը առավել ցայտուն էր, երկրի վարկանիշն էր տուժում, նաև կային տվյալներ, որ ԻՊ-ից վերադառնում էին

[87] Islamic State Group´s Georgian-Language Propaganda Video Emerges, Civil Georgia, Tbilisi, 23.Nov.2015, https://old.civil.ge/eng/article.php?id=28796, ISIS threat against Georgia,24 Nov. 2015, https://jam-news.net/ISIS-threat-against-Georgia/, (մուտք 1.10.2019):
[88] 2015 Paris Terror Attacks Fast Facts, 13. Nov. 2015, https://edition.cnn.com/2015/12/08/europe/2015-paris-terror-attacks-fast-facts/index.html, (մուտք 1.10.2019):

իրենց տները, իսկ դա հավելյալ վտանգ էր Վրաստանի ներսում ահաբեկչության տեսանկյունից:

Ռուսաստանի դիրքորոշումը և վարած քաղաքականությունը Պանկիսիի կիրճում

Հիշենք, որ 2000-ականների սկզբին ռուս-վրացական հարաբերություններում չեչենական փախստականների և չեչեն գրոհայինների՝ Վրաստանի տարածք մուտք գործելու և այնտեղից հակառուսական գործողություններ իրականացնելու հարցը կարևոր էր երկկողմ հարաբերությունների և նաև առավել մեծ տարածաշրջանային համատեքստում: 2002թ. սեպտեմբերի 11-ին Ռուսաստանի նախագահ Պուտինը ոչ պատահականորեն ընտրելով Նյու Յորքյան ահաբեկչության տարելիցի օրը Վրաստանի իշխանություններին ուլտիմատում ներկայացրեց. կամ դուք ինքներդ չեչեն գրոհայինների հարցերը կլուծեք, կամ էլ մենք դա կանենք, ձեր երկրի տարածքում առանց ձեր թույլտվության[89]:

Ռուսաստանը հնարավորության դեպքում փորձում է միշտ իր համար ստեղծել այնպիսի իմիջ, որով Ռուսաստանը ահաբեկչության դեմ պայքար մղող երկիր է ներկայանում՝ դա դարձնելով գործիք այս կամ այն քաղաքական համատեքստում, այս կամ այն միջազգային հարթակներում: Հիշենք, G20 գագաթաժողովի ժամանակ Թուրքիայում, Փարիզի դեպքերից որոշ ժամանակ անց նրանք կարողացան իրենց դերը բարձրացնել հակադաիշական գործողություններում իրենց ֆունկցիոնալ մասնակցության նկատառումներով: Դրանով Ռուսաստանը տվյալ ժամանակահատվածում դառնում էր ԱՄՆ

[89] Как Грузия оказалась одним из крупнейших поставщиков боевиков в ИГИЛ, 19. 07.2015, http://cripo.com.ua/processes/?p=195227/,

մոտ դաշնակիցը հակադաիշական կոալիցիայում, կազմակերպության ոչնչացման նպատակներով ստեղծված: Նման կերպ ժամանակավոր Ուկրաինայի և Վրաստանի մասով իրենց հակասությունները մեղմանում էին կամ տվյալ օրակարգից դուրս էին մղվում: 2019թ. իրադարձություններում Իսլամական պետության դեմ պայքարում կրկին տեսնում ենք Ռուսաստանի կարևոր դերակատարությունը ռուս-թուրքական-ամերիկյան «համատեղ» գործողությունների համատեքստում:

Ռուսաստանի կողմից պարբերաբար մեղադրանքներին, որ Պանկիսիի կիրճը ահաբեկիչների համար հանգրվան է, ի պատասխան վրացական կողմը սկսած 2002թ. հակադրում էր վրաց-ամերիկյան նաև եվրոպական համագործակցությունը: Օրինակ 2016թ.-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Լավրովի կողմից կրկին անգամ մեղադրանքներին ի պատասխան՝ Վրաստանի նախագահ Մարգվելաշվիլին ԱՄՆ դեսպանի հետ միասին համատեղ ասուլիս են տալիս Պանկիսիի կիրճում ի հաստատումն, որ Պանկիսիի կիրճը չի կարող ահաբեկիչների համար հանգրվան հանդիսանալ[90]:

Վրաստանի քաղաքացիների հավաքագրումն ու տեղափոխումը. Թուրքիայի՝ որպես միջնորդ երկրի դերակատարությունը

Հակաահաբեկչական ռազմավարությունները և քաղաքականությունները պետք է հաշվի առնեն ծայրահեղականացման մղող ներքին բաղադրիչները, որոնք սակայն «տեղական և իրական ծայրահեղականացման չեն

[90] Մանրամասները տես՝ Will Cathcart, Georgia’s Pankisi Gorge: More than 25 Years of External Manipulation, 18. 02. 2016, http://georgiatoday.ge/news/3014/Georgia%E2%80%99s-Pankisi-Gorge%3A-More-than-25-Years-of-External-Manipulation-

հանգեցնի, եթե 3-րդ միջնորդ կամ շահառու երկրների ներգրավվածությունը չլինի»: Երրորդ երկրների դերը Պանկիսիի բնակիչների շրջանում ծայրահեղական տրամադրությունների ակտիվացման և նրանց ակտիվ գործողությունների մեջ ներգրավելու հարցում կարևոր է: Կարելի է նշել, որ չնայած տեղում պանկիսցիների ներգրավումը ահաբեկչական ցանցերի մեջ, միայն մասնակի գործողություն է և առանց միջնորդ՝ երրորդ երկրի դերակատարության դժվար կլիներ պանկիսցիներին ահաբեկիչ-գրոհային-վարձկան դարձնել և տեղափոխել Սիրիա կամ Իրաք կամ այլուր:

Հիմնական երրորդ երկիրը, ուր ըստ տեղացիների իրենց բարեկամները գնում են աշխատելու՝ Թուրքիան է, սակայն հետագայում արդեն մահվան լուրը ստանալուց հետո են պարզում առնչությունը ծայրահեղական այս կամ այն խմբավորմանը:

Պանկիսի կիրճի ավագների խորհուրդը 2015թ. ապրիլի 6-ին հավաք էր արել՝ դիմելով Վրաստանի իշխանություններին հավաքագրումները կանխելու պահանջով[91]: Հավաքից մի քանի օր առաջ՝ ապրիլի 2-ից կիրճից անհետացել են 16-ամյա Մուսլիմ Կուշտանաշվիլին և 18-ամյա Ռամզան Բաղակաշվիլին[92]: Այս դեպքը կարևոր էր այն առումով, որ Պանկիսիի բնակչությունը կրկին անգամ տեսնում է վրացական կառավարության կողմից պատասխանատվության պակասի և տվյալ բնակչության իրավունքների պաշտպանության հարցում: Ինչպես կարող էին երկու երիտասարդները, որոնք չափահաս չէին և չէին կարող

[91] Georgia's Kists Demand Action To Stop Pankisi Youth Joining IS, 07, April, 2015, https://www.rferl.org/a/georgia-chechens-demand-action-to-stop-youth-joining-islamic-state/26943399.html, (մուտք՝ 15.10.2019):

[92] Two Pankisi youth turned IS fighters call home from Syria: ‘We are fine’, 14, April, 2015, https://dfwatch.net/tag/ramzan-baghakashvili, (մուտք՝ 15.10.2019):

առանց ծնողների թույլտվության ինքնաթիռ նստել և հեռանալ Թուրքիա Թբիլիսիի միջազգային օդանավակայանից:

Պանկիսիում գործող ավագների խորհուրդը կազմված է հիմնականում սուֆիզմի հետևորդներից, սակայն խորհրդի ազդեցությունն աստիճանաբար թուլանում է, քանի որ տեղի երիտասարդության շրջանում մեծանում է սալաֆիականության (վահաբականության) դերը, ինչն էլ անհանգստացնում է սուֆիզմի հետևորդներին, քանի որ երիտասարդների շրջանում արմատավորվում է ծայրահեղականությունը:

Թեմայի վերաբերյալ հայտարարություն էր արել նաև Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ նշելով, որ պետք չէ այս հարցի մեղավոր համարել Վրաստանի կառավարությանը, քանի որ, ըստ Ղարիբաշվիլիի, Պանկիսիից ամենաշատը գնացել են Սիրիա դեռևս Սաակաշվիլիի օրոք: Ղարիբաշվիլին հավելել է, որ նաև, որ այս խնդիրն անհանգստացնում է ամբողջ աշխարհին, Վրաստանն էլ բացառություն չէ[93]:

Սիրիայում կռվող ամենահայտնի վրաստանցին[94] (նույնպես Պանկիսիի կիրճից) Թարխան Բատիրաշվիլին է, նույն ինքը՝ Ումար ալ-Շիշանին է (Շիշանի արաբերեն չեչեն է նշանակում):

---

[93] «Սիրիա մեկնող կամավորների հարցը համաշխարհային խնդիր է, համաշխարհային առաջնորդներն էլ են փնտրում և առայժմ չեն կարողանում գտնել ճանապարհներ այս ամենը կանգնեցնելու և կանխարգելելու համար»- ասել էր Ղարիբաշվիլին, տես՝ Tinatin Jvania, Giorgi Kupatadze, Keeping Islamic State out of Georgia, 22, June, 2015, https://iwpr.net/global-voices/keeping-islamic-state-out-georgia, (մուտք՝ 15.9.2019):Georgian PM: We can’t stop youth from joining IS, 16, April, 2015, available at: https://dfwatch.net/georgian-pm-we-cant-stop-youth-from-joining-is-35166, (մուտք՝ 15.9.2019): Georgian PM blasts media for ‘hysteria’ about recruitment for IS, 22, April, 2015, https://dfwatch.net/georgian-pm-blasts-media-for-creating-hysteria-about-youth-joining-is-35247, (մուտք՝ 15.9.2019):

[94] Տարբեր ահաբեկչական կազմակերպություններում և ծայրահեղական խմբավորումների հայտնի պանկիսցի ղեկավարների ցանկը տե՛ս ստորև:

Բատիրաշվիլին Սիրիայում «Իսլամական պետության» խմբավորման հայտնի հրամանատարներից է: Դեռ 2014-ին ԱՄՆ-ն Բատիրաշվիլուն ներառել է ԻՊ-ի հետ կապ ունեցող ամենավտանգավոր 11 ահաբեկիչների ցանկում: Ի դեպ կարևոր է, թե ինչպես էր տեղի ունենում օրինակ հայտնի Օմար ալ-Շիշանիի միֆականացման գործընթացը կիրճի երիտասարդության շրջանում, որն էլ իր հերթին հանգեցնում էր երիտասարդների կողմից շահագրգռության ավելացմանն ու նպաստում սրբազան պայքարի մասնակցելու նրանց ձգտմանը:

Իրականում Պանկիսիի կիրճում տիրող իրավիճակի վերլուծության արդյունքնում անդամագրման կանխարգելումը և կասեցումը հնարավոր չէ այս կամ այն կոնկրետ կազմակերպչին բռնելով, քանի որ հսկայական է սոցիալական ցանցերի կոմունակացիոն հնարավորությունները առանց «կենտրոնի» գործելու, որն էլ անսահմանափակ է դարձնում այդ հնարավորությունները: Թեև Պանկիսիի կիրճում ոչ այդքան համացանցային մոդելն է աշխատել սկզբնական շրջանում, այլ կան հետազոտություններ, որոնք «մարդկային» իրական շփումների ցանցն են դարձնում անդամագրման և հետագա ահաբեկչական գործողությունների մաս դառնալու հիմքը: Դրանով պայմանավորված՝ կարևոր առաջնորդների մահվան կամ իշխանությունների կողմից բռնելուց հետո այդ հոսքը կարծես նվազում էր[95]:

Վրաստանի կողմից օրենսդրական խստացումները մի կողմից լուծում էին Վրաստանի հակաահաբեկչական քաղաքականության օրենսդրական բացերը, սակայն երկրի

[95] В Сирии погиб еще один уроженец Панкисского ущелья Грузии, 30.11.2018, https://www.ekhokavkaza.com/a/29629773.html, (մուտք՝ 15.9.2019): Панкисцы продолжают гибнуть за ИГИЛ, 24. 08. 2016, https://www.ekhokavkaza.com/a/27943885.html, (մուտք՝ 15.9.2019):

քաղաքացիների տեսանկյունից, որոնք այս կամ այն պատճառով հնարավոր է զղջան իրենց գործողությունների համար ինչպիսի ռեաբիլիտացիոն ծրագրերի հնարավորություններ է առաջարկում, քանի որ վերադառնալու պարագայում նրանց սպասվում է ազատազրկում՝ 3-17 տարի՝ ըստ գործողությունների ծանրությունից: Այս ամենն էլ կարծես հանգեցնում է նրան, որ Վրաստանից մեկնած բոլոր քաղաքացիները նախընտրում են մնալ և ապրել «ազատության» մեջ «անարդարության» դեմ «պայքարելով» ահաբեկիչների կողքին Սիրիայում կամ մեկ այլ վայրում, քան գնալ բանտ[96]:

Պանկիսիի կիրճը ահաբեկչության համատեքստում ուսումնասիրելիս մեթոդաբանական երկու տեսությունների՝ թե՛ քաղաքացիական պատերազմների հետևանքների հետագա խնդիրների զարգացումն իր բոլոր բաղադրիչներով, թե՛ ահաբեկիչների համար ապահով հանգրվաններ լինելու տեսական բաղադրիչների առումով երկուսի միախառնումն է կամ կարելի է ասել, որ մեկի բաղադրիչները բխում են մեկը մյուսից և հանգեցնում են միմյանց:

Առաջին տեսության կոմպոնենտները՝ փախստականները, ահաբեկչությունը, հարևանային ներխուժումները՝ կազմելով Պանկիսի կիրճի ճգնաժամի կարևորագույն տարրերը հանգեցրեցին երկրորդ չեչենական պատերազմից հետո բնակչության ռադիկալացմանը, իսկ օրինակ այս տեսության տարրերից մեկը՝ անջատողականությունը ծնում է անջատողականություն, դառնում է «զսպող» միջոց Վրաստանի կողմից չեչենական անջատողական գործընթացներին

[96] Տե՛ս՝ Mariam Amashukeli, En/Countering Stigma of Terrorism: The Case of Pankisi, Research report, Eastern Partnership Civil Society Facility, Tbilisi 2018, p.30. http://fellows.eapcivilsociety.eu/wp-content/uploads/2018/07/Research-Report-2018_Mariam-Amashukeli.pdf, (մուտք՝ 12.10.2019):

չմասնակցելու համար, որը կարող էր բռնկում առաջացնել անջատողական բազմաթիվ ուժերի համար հենց Վրաստանի ներսում: Իսկ այս ամենն էլ ուղղակիորեն հանգեցնում էին տնտեսական մշտական կորուստների:

Իսկ մյուս կողմից, եթե դիտարկենք Քիթների կողմից ահաբեկչական ապահով հանգրվանների տեսության տեսակետից՝ աշխարհագրական դիրքը, թույլ կառավարումը, կոռուպցիան, բռնության նկատմամբ վերաբերմունքի և ընդհանուր առմամբ բռնության շուրջ եղած պատմական դիսկուրսի, և նաև աղքատությունն ու աշխատանքի բացակայությունը, որոնք հող են նախապատրաստում ահաբեկիչների և ծայրահեղական մոտեցումների ակտիվացման համար, հաստատապես իրենց ազդեցությունն են գործել ահաբեկչության համար ապահով հանգրվան վերածվելու ճանապարհին: Ահաբեկչության համար ապահով հանգրվանների ստեղծմանը մեծապես նպաստում են վերոնշյալ բոլոր չափանիշների և պայմանների առկայությունը, իհարկե դրանց տարբեր մոդիֆիկացիաների կիրարկմամբ տվյալ ժամանակաշրջանի պայմաններին համահունչ:

Իրականում անվտանգության առումով խնդիրը մի տեսակ բազմաշերտ և բազմակողմ լուծումներ է պահանջում. Պանկիսիի կիրճի բնակչության տեսանկյունից այդ ահաբեկչության հանգրվան լինելու խոսույթը «պարտադրված է» իրենց թե՛ Վրաստանի, թե՛ տարածաշրջանային, և թե՛ համաշխարհային խաղացողների (ոչ միայն պետությունների, այլև ցանցային տրամաբանությամբ գործող տարբեր միավորների) կողմից: Իրավիճակի վերլուծության համընդգրկուն և բազմակողմ գործողությունների իրականացման պարագայում է հնարավոր ազատվել նման խոսույթի պարտադրանքից, հակառակ

պարագայում դեռ երկար ժամանակ Պանկիսիի կիրճը կարող է լինել ոչ միայն խոսույթային մակարդակում ահաբեկչության հանգրվան, այլև նորանոր և փոփոխվող իրադրություններում իրապես լինել ահաբեկչության ապահով հանգրվան, նույնիսկ՝ օջախ:

Տարբեր ահաբեկչական կազմակերպություններում ղեկավար դիրքեր զբաղեցրած պանկիսցիներ[97]

Թարխան Բատիրաշվիլի, նույն ինքը Օմար ալ-Շիշանին, ծնվել է Պանկիսիի կիրճի Բիրկիանի գյուղում 1986թ.: Բատիրաշվիլի հայրը քրիստոնյա էր, մայրը՝ մուսուլման: Դպրոցն ավարտելուց հետո նա վրացական բանակ է զորակոչվում և աշխատում է որպես հետախուզության սերժանտ: Նա մասնակցել է երկրորդ Չեչենական պատերազմին, ինչպես նաև 2008թ. ռուս-վրացական պատերազմին, վրացական կողմից՝ ռուսների դեմ: Ալ-Շիշանին եղել է Իսլամական պետության հյուսիսային հատվածների՝ Իրաքում և Սիրիայում կռվող ծայրահեղ իսլամականների հրամանատարը: Ըստ տեղեկությունների Բատիրաշվիլին մահացել է 2016թ. հուլիսին Իրաքում ալ-Շիրքաթ

[97] Պանկիսցիները, որոնք մասնակցել և անդամագրվել են Իսլամական պետությանը, կարելի է երկու խմբի բաժանել: Առաջին խումբը՝ միջինում 30 տարեկան և ավելի մարդիկ էին, որոնք իրենց ռազմական անցյալը՝ հիմնականում Հյուսիսային Կովկասում հիմքում ունենալով են որոշում կայացրել, և երկրորդ խումբը, որը ժամանակագրորեն 2013-2015թթ. հետ է համընկնում, արդեն երիտասարդների խումբն է 1980-90-ական թթ. ծնված, որոնք ռազմական գործողությունների ոչ մի փորձ չունենալով՝ ազդվելով իրենցից տարիքով մեծ հայրենակիցների «հորդորներից» տեղափոխվում են ԻՊ: 2019թ. հրապարակվել էր Պանկիսիից Իսլամական պետության շարքերում եղած պանկիսցիների ցանկը՝ տե՛ս՝ Панкисские общественники раскрыли список боевиков, https://www.kavkaz-uzel.eu/forum/topics/6547?page=1, (մուտք՝ 05.12.2019): Տվյալների համար հիմնական աղբյուր է հանդիսացել «Կավկազսկիյ ուզել» կայքը՝ https://www.kavkaz-uzel.eu:

շրջանում ԱՄՆ հատուկ ուժերի գործողությունների հետևանքով վիրավորվելուց հետո չորս ամիս անց: Բատիրաշվիլիի դերը և նրա կերպարի միֆականացումը մեծ դերակատարություն է ունեցել Պանկիսիից երիտասարդներին Իսլամական պետության շարքերում ներգրավելու հարցում:

Թամազ Բատիրաշվիլի. Թարխան Բատրիաշվիլիի՝ Աբու Օմար ալ-Շիշանիի եղբայրն էր, որը 2018թ. հուլիսի 24-ին 38 տարեկան հասակում մահացել է Իդլիբի շրջակայքում: Վերջինը կարևոր դեմք էր Իսլամական պետության կազմում և պատասխանատու էր հետախուզություն և հակահետախուզության համար, ինչպես նաև ջիհադականների կողմից վերահսկվող բանտերի համար: Ըստ տեղեկությունների նա Չեչենական կռվի ակտիվ մասնակիցներից էր և ռազմական գործում հարուստ փորձ ուներ: Նրա ընտանիքը հասցրել էր փախնել Սիրիայից: Ըստ պաշտոնական տվյալների՝ նա 25-րդ մարդն էր Պանկիսիի կիրճից, որ մահացել էր Սիրիական կոնֆլիկտում:

Մուրադ Մարգոշվիլի, նույն ինքը Աբու Ուալիդ ալ-Շիշանին/Մուսլիմ ալ-Շիշանին, հայտնի է, որ ծառայել է Մոլդովայում, Սովետական ժամանակահատվածում, և նա մոտ տաս տարի կռվել է չեչեն ապստամբների դեմ Սովետական միության փլուզումից հետո: 2003թ. Մարգոշվիլին Ռուսական հատուկ ուժերի կողմից ձերբակալվում է, սակայն երկու տարի անց անհասկանալի կերպով ազատ է արձակվում: Նա համարվում է Ռուսական հատուկ ուժերի հետ սերտ կապեր ունեցող զինվորական: Ալ-Նուսրայում՝ Լաթաքիայի շրջանում, նա ղեկավարում է «Ջունուդ ալ-Շամ» լեգիոնը, որը ըստ տեղեկությունների հիմնականում կազմված էր չեչեններից: Մարգոշվիլին ահաբեկչական գործունեությամբ է զբաղվել նաև

Վրաստանի տարածքում, սակայն 2012թ.-ին նրան հաջողվել է տեղափոխվել Սիրիա, որտեղ էլ միացել է «Իսլամական պետությանը»: 2013 թվականից Մարգոշվիլին «Ջեյշ ալ-Մուհաջիրին ալ-Անսար» խմբավորման ղեկավարումն է ստանձնել, այն բանից հետո, երբ նախկին հրամանատար և նույնպես Վրաստանի քաղաքացի Թարխան Բատիրաշվիլին «Իսլամական պետությունում» նշանակվել է այլ պաշտոնի: Հետաքրքրական է, որ 2015թ.-ին ԻՊ-ն տեսագրություն էր տարածել, որում Մարգոշվիլին կոչ էր անում միանալ այսպես կոչված «Կովկասյան էմիրությանը»: Մուրադ Մարգոշվիլին և նաև վերոնշյալ բոլորն էլ ներառված են ԱՄՆ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված մի խումբ անձանց և կազմակերպությունների անուններում, որոնք կապ ունեն կազմակերպված հանցավորության, ինչպես նաև օրենքով գողերի հետ: Փաստացի նրանք այսպես կոչված «սև ցուցակի» անդամներ էին[98]: Մարգոշվիլիի մահվան մասին տեղեկություններ են հրապարակվել մի քանի անգամ, սակայն 2019թ. փետրվարին հայտնի լրագրող փորձագետ Բուրչուլաձեին հաջողվել է նրանից հարցազրույց վերցնել[99]: Հայտնի է, որ Մուրադ Մարգոշվիլին շատ ավելի մեծ հեղինակություն ուներ Գերմանիայի չեչենների շրջանում, քան հենց Պանկիսիում կամ Չեչնիայում:

Ֆեյզուլլա Մարգոշվիլին, որը հայտնի է նաև որպես Սալահուդդին ալ-Շիշանի անվամբ, առաջնորդել է Ջեյշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար խմբավորումը: Մարգոշվիլին

[98] Ամբողջական ցանկը կարելի է տեսնել այստեղ՝ https://www.treasury.gov/resource-center/sanctions/SDN-List/Pages/default.aspx:

[99] Georgia is our homeland – Exclusive interview with Muslim al-Shishani a.k.a Murad Margoshvili, by Nino Burchuladze, 25. 02. 2019, https://www.georgianjournal.ge/politics/35590-georgia-is-our-homeland-exclusive-interview-with-muslim-al-shishani-aka-murad-margoshvili.html, (մուտք՝ 28.09.2019):

համարվում էր միակը, ով կարող էր համեմատվել ալ-Բատիրաշվիլիի հետ և նույնիսկ մրցել նրա հետ[100]:

Ռուսլան Մաչալիկաշվիլին նույն ինքը Սեյֆուլլահ ալ-Շիշանին, Վրաստանի քաղաքացի է, ծնվել է Պանկիսի կիրճի Դուիսի գյուղում: Երկրորդ չեչենական պատերազմից հետո 2000-2001թթ. Մաչալիկաշվիլին ակտիվորեն ներգարվված է եղել առևանգումների, նարկոթրաֆիկինգի գործողություններում: Վրաստանում ոճրագործությունը քրեականացնող գործողություններից հետո նա լքում է Վրաստանը և հեռանում Թուրքիա, որտեղ էլ շարունակում է իր կրիմինալ գործունեությունը[101]: 2011-2014թթ. այլ երեք ազգությամբ կիստերի հետ, ղեկավարում էին մուջահեդինների խմբավորումները, եղել է նաև Ջաբհաթ ալ-Նուսայրի էմիր:

Ադամ (Գուրամ) Գումաշվիլի. Ադամ Գումաշվիլին, 2018թ. նոյեմբերի 28-ին, 44 տարեկան հասակում մահացել է Սիրիայում: 2013թ. նա Սիրիա էր տեղափոխվել Պանկիսիի Ջոկոլո գյուղից իր որդու՝ Սուլթան Գումաշվիլիի հետ: Ադամ Գումաշվիլին եղել է Իսլամական պետության Արդարադատության նախարարը: Նրա հայրը՝ Սուլեյման Գումաշվիլին հատնի գրող և բանաստեղծ է Պանկիսիում և Ավագների խորհրդի անդամ է եղել, իսկ նրա եղբայրներից Ջաուրը 2000-ականների սկզբին զբաղեցրել է Կախեթիի նահանգապետի պաշտոնը, իսկ մյուս եղբայրը՝ Բակարը Պանկիսիի ամենամեծ գյուղի՝ Դուիսիի ադմինիստրատիվ վարչության պետն է եղել:

---

[100] Mairbek Vatchagaev, Jamestown Foundation, *Allure of Islamic State's Media Machine Attracts New Generation of Chechen Recruits*, 17 April 2015, Eurasia Daily Monitor Volume: 12 Issue: 72, https://www.refworld.org/docid/5538b2c64.html

[101] Syria: From Ruslan The Family Man To Sayfullakh the Shahid – Chechen Jihadist's Story In Pictures, by Joanna Paraszczuk, Feb 20, 2014, https://eaworldview.com/2014/02/syria-family-man-shahid-sayfullakh-shishanis-story-pictures/, (մուտք՝ 21.10.2019):

Ադամ Գումաշվիլին և մեկ այլ պանկիսցի **Ռուսլան Թոխոսաշվիլին** ուղերձ են ուղարկում իրենց ազգականներին և հայրենակիցներին՝ մեղադրելով նրանց «անհավատների հետ իսլամի շուրջ քննարկումներ ծավալելու մեջ», ինչպես նաև դժգոհություն էին հայտնում, որ Պանկիսիի կիրճից Սիրիա մեկնողների թիվը այդքան կրճատվել է: Թոխոսաշվիլիի խոսքերով՝ դրանում մեղավոր են էն «չափավոր իսլամի հետևորդները»:

Փարձագետ Նինո Բուրչուլաձեն գտնում է, որ հենց այս ուղերձները վկայում են ԻՊ-ի կազմում ստեղծված ճգնաժամի մասին, որ այն Պանկիսիի երիտասարդների շրջանում կորցնում է իր ռոմանտիկ և «հաղթանակների» հանգրվան լինելու նշանակությունը[102]:

Սուլթան Գումաշվիլի. Սուլթան Գումաշվիլին իր հոր՝ Ադամ Գումաշվիլիի հետ 2013թ. տեղափոխվում է Սիրիա, և Իսլամական պետության խմբավորումների կազմում կռվելու ժամանակ 2016թ. օգոստոսին մահանում է 21 տարեկան հասակում**:**

Ռուսլան Տոհոսաշվիլի

Տոհոսաշվիլին Պանկիսիի Օմալո գյուղից է և Սիրիա էր տեղափոխվել 2014թ.: Նա հայտնի էր, որպես ԻՊ պաշտպանության նախարար՝ Թարխան Բատիրաշվիլիի թիկնապահ: Նրա մահվան մասին ընտանիքը տեղեկացել է 2019թ. մարտին, թեև ըստ տեղեկությունների մահացած է եղել մի քանի ամիս առաջ[103]:

---

[102] Коммерсант: ИГ обвинило жителей Панкиси в нежелании ехать в Сирию, 07.07.2016, https://www.kavkaz-uzel.eu/articles/285371/, (մուտք՝ 18.09.2019):

[103] Семья в прошлом жителя грузинского села Омало узнала о его гибели в Сирии спустя несколько месяцев, 07.03.2019, https://sputnik-georgia.ru/incidents/2019 0307/244615477/V-Sirii-pogib-esche-odin-vykhodets-iz-Gruzii.html, (մուտք՝ 18.09.2019):

Ըստ «Կավկազսկիյ ուզել»-ի 2018թ մայիսին հրապարակած տվյալների[104] Սիրիայում ռազմականգործողությունների հետևանքով մահացած պանկիսցիների ցանկը ստորև՝

23-ամյա Թուրպալ Բորչաշվիլի (2015թ.), 30-ամյա Գուրամ Ցիտաիշվիլի (2015թ.), 24-ամյա Դավիթ Սվիակաուրի (2015թ.), 18-ամյա Իսրաֆիլ Ցատիաշվիլի (2014թ.), նրա եղբայրը՝ 21-ամյա Ջաբրայիլ Ցատիաշվիլի (2014 թ.), 22-ամյա Գուրամ Գումաշվիլի (2014 թ.), 18-ամյա Բեսո Կուշտանաշվիլի (2014թ.), 24-ամյա Խալիդ Աչիշվիլի (2013թ.), 26-ամյա Համզաթ Աչիշվիլին (2013թ.), Աբդուլ Մալիք Մութոշվիլի (տարիքը հստակ չէ) և 23-ամյա Ռուստամ Գելայև, որը միակն էր, որը թաղված է Վրաստանում:

PANKISI GORGE IN THE CONTEXT OF TERRORIST NETWORK: NEW CHALLENGES

Abstract

Tatevik Mkrtchyan
Center for Civilization and Cultural Studies, YSU
tmkrtchyan@ysu.am

Hayk Kocharyan
Departament of Arabic Studies, YSU
hkocharyan@ysu.am

Key words: *Pankisi Gorge, crisis, network terrorism, terrorist safe heaven, terrorist hub, kists, Wahhabism.*

The Pankisi Gorge remote region of the Republic of Georgia has become the focus of much international attention after the Russian-Chechen wars (First war: 1994-1996, second war: 1999-2000). The gorge is located just south of the Georgian-Chechen border in the Georgian district of

[104] Выходцы с Кавказа в рядах ИГ (ИГИЛ), 21, Май, 2018, available at: https://www.kavkaz-uzel.eu/articles/251513/#cont_54, (մուտք՝ 21.10.2019):

Akhmeta. Today most of the inhabitants of the Pankisi region are descendants of ethnic Chechens and Ingush who together with kists share the common ethnonym of Vainakh. The kists, who are typically bilingual, and the number of inhabitants varies from 3000-10000. The radicalization processes as well as terrorist heaven image or stigma of the Pankisi Gorge will be discussed in the article through the lens of spillover of the civil wars, as well as terrorist safe heaven theoretical approaches.

ПАНКИССКОЕ УЩЕЛЬЕ В КОНТЕКСТЕ СЕТЕВОГО ТЕРРОРИЗМА: НОВЫЕ ВЫЗОВЫ

Аннотация

Татевик Мкртчян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
tmkrtchyan@ysu.am

Айк Кочарян
Кафедра Арабистики, ЕГУ
hkocharyan@ysu.am

Ключевые слова: *Панкисское ущелье, кризис, сетевой терроризм, пояс безопасности, очаг терроризма, кистинцы, ваххабизм*

Панкисское ущелье – регион Грузии, который оказался в центре внимания мирового сообщества после Чеченских войн (1994-1996 и 1999-2000). Ущелье расположено к югу от грузино-российской (чеченской) границы в Ахметском муниципалитете. Большинство населения Панкисского региона - кистинцы, численность которых колеблется от 3000 до 10000, наряду с чеченцами и ингушами являются вайнахами. В статье рассматривается как процесс радикализации, так и возникновение дискурса относительно пояса безопасности для террористов и ряда криминальных группировок. Исследование проводится сквозь призму идеи о влиянии гражданских войн и процесса формирования пояса безопасности.

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ[1]

Շուշան Կյուրեղյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
shoushan.kyureghyan@ysu.am

Բանալի բառեր՝ *ահաբեկչություն, ահաբեկչական կառույցներ, միջազգային ահաբեկչական կառույցների ցուցակներ, ահաբեկչական ցանց, Ալ-Կաիդա, հակաահաբեկչական պայքար*

Միջազգային ահաբեկչության վտանգների և այն կանխարգելելու համար տարբեր պետություններ և միջագային կառույցներ ձեռնարկում են տարաբնույթ միջոցառումներ՝ ընդունվում են բանաձևեր, օրենքներ, կիրառվում պատժամիջոցներ, կազմվում ահաբեկիչների և ահաբեկչական կազմակերպութունների ցուցակներ և այլն: Չնայած ահաբեկչության սպառնալիքի հաղթահարման անհրաժեշտության շուրջ ընդհանուր կոնսենսուսին, առանձին երկրների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների դիրքորոշումներն ահաբեկչության հաղթահարման ուղիների հարցում տարբեր են: Յուրաքանչյուր երկրի, տարածաշրջանային կամ միջազգային կառույցի կողմից ահաբեկչական համարվող կազմակերպությունների ցուցակն

[1] Սույն հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի 18T-5I380 «Իսլամական ծայրահեղականությունը և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարտահրավերները» գիտական թեմայի ֆինանսավորման շրջանակում:

արտացոլում է տվյալ երկրի կամ կառույցի ընդհանուր անվտանգային շահերը, հետաքրքրությունները, առաջնահերթությունները, ինչպես նաև ազգային, տարածաշրջանային և միջազգային անվտանգության վերաբերյալ սեփական պատկերացումները: Հոդվածում համեմատական քննության են առնվելու ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ՄԱԿ-ի և ԵՄ-ի կողմից ահաբեկչական համարվող կազմակերպությունների ցուցակները[2]՝ դրանց պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրմամբ և ստորև ներկայացվող չափորոշիչներով՝

- «ահաբեկչություն» տերմինի սահմանումը
- ահաբեկչական համարվող կազմակերպությունների ցուցակների տարբերակումը
- ահաբեկչական ցուցակներիի իրավական հիմքերը
- ցուցակում ներգրավվելու չափորոշիչները
- որոշում կայացնելու գործընթացը
- բողոքարկելու մեխանիզմը

Ի՞նչ է ահաբեկչությունը: Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում կազմված ցուցակներում այս կամ այն կազմակերպության առկայությունը հասկանալու և հիմնավորելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես են վերոնշյալ պետությունները և կազմակերպությունները սահմանում «ահաբեկչություն» եզրույթը: Առայժմ չկա «ահաբեկչություն» տերմինի որևէ սահմանում, որն ընդունելի կլինի բոլոր երկրների և միջազգային կառույցների համար: «Ահաբեկչությունը» բոլորի համար ընդունելի ձևով սահմանելու փորձ կատարվել է Ազգերի լիգայի 1937թ. «Ահաբեկչության կանխարգելման և պատժի

[2] Քննության են առնվելու ահաբեկչական ցուցակներում առկա իսլամական ահաբեկչական կազմակերպությունները:

մասին» կոնվենցիայով, որն այդպես էլ ուժի մեջ չմտավ[3], ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ մինչ օրս չվերջնականացված «Ահաբեկչության դեմ պայքարի համապարփակ կոնվենցիայի» միջոցով[4]: Հաճախ, անգամ միևնույն կազմակերպության տարբեր մարմիններ կամ պետության տարբեր գերատեսչություններ նույն կերպ չեն մեկնաբանում ահաբեկչական գործողությունները: Այսպես, օրինակ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան, Անվտանգության խորհուրդը և Սպառնալիքների, մարտահրավերների և փոփոխության բարձր մակարդակի խումբը ունեն բովանդակությամբ միմյանց չհակասող, սակայն ոչ նույնական սահմանումներ: ԱՄՆ-ի կոդեքսի, Դաշնային կանոնակարգերի կոդեքսի, Պաշտպանության նախարարության, Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության, Ազգային հակաահաբեկչական կենտրոնի, ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության, «Հայրենասիրական ակտի», Ահաբեկչության ռիսկերի ապահովագրության մասին օրենքի համաձայն նույնպես ահաբեկչությունը մեկ համընդգրկուն սահմանում չունի:

ԱՄՆ կոդեքսի 2331 կետում տրված սահմանումների համաձայն «**միջազգային ահաբեկչություն»** տերմինը նշանակում է գործունեություն, որը

ա) պարունակում է բռնի կամ մարդկային կյանքի համար վտանգավոր գործողություններ, որոնք խախտում են Միացյալ Նահանգների կամ որևէ նահանգի քրեական օրենսգիրքը, կամ որոնք կհամարվեն քրեական խախտում, եթե կատարվեն Միացյալ Նահանգների կամ որևէ նահանգի իրավասության ներքո,

[3]Convention for the Prevention and Punishment of Terrorism, https://www.wdl.org/en/item/11579/ (24.11.2019)

[4]Draft Comprehensive Convention of International Terrorism, https://digitallibrary.un.org/record/422477?ln=ru (24.11.2019)

բ) միտված է

1. քաղաքացիական բնակչությանը վախեցնելուն կամ զրպարտելուն,

2. կառավարության քաղաքականության վրա ազդելուն՝ վախեցնելով/ահաբեկելով կամ հարկադրելով,

3. կառավարության վարքագծի վրա ազդելուն՝ զանգվածային ոչնչացման, սպանությունների կամ առևանգման միջոցով[5]:

ՄԱԿ-ի փաստաթղթերի համաձայն «ահաբեկչություն»-ը նկարագրվում է որպես «ցանկացած գործողություն, այդ թվում այն, ինչ արդեն նախատեսված է ահաբեկչության վերաբերյալ գոյություն ունեցող կոնվենցիաներով, «Ժնևի կոնվենցիաներով» և Անվտանգության խորհրդի 1556 (2004) բանաձևով, որը միտված է քաղաքացիներին կամ ոչ զինվորականներին մահ կամ լուրջ մարմնական վնաս պատճառելուն, երբ նման գործողության նպատակը բնակչությանը ահաբեկելն է, կառավարությանը կամ ինչ-որ միջազգային կազմակերպությանը որևէ բան անել կամ որևէ գործողությունից ձեռնպահ մնալ հարկադրելը»[6]:

Եվրախորհրդի կողմից 2005թ.-ին ընդունված «Ահաբեկչության կանխարգելման մասին» կոնվենցիան (CETS NO 196), որը 2015թ.-ին ստորագրել է նաև ԵՄ-ը, նշում է, որ ահաբեկչության նպատակներն են՝

- լրջորեն ահաբեկել/վախեցնել բնակչությանը,
- հարկադրել կառավարությանը կամ միջազգային կազմակերպությանը կատարել կամ ձեռնպահ մնալ որևէ գործողություն իրականացնելուց

[5] 18 USC Ch. 113B: terrorism, from title 18—Crimes and Criminal procedure, http://us code.house.gov/view.xhtml?path=/prelim@title18/part1/chapter113B&edition=prelim

[6] SC RESOLUTION 1556 (2004) https://www.un.org/press/en/2004/sc8160.doc.htm

 լրջորեն ապակայունացնել կամ ոչնչացնել պետության կամ որևէ միջազգային կազմակերպության հիմնական քաղաքական, սահմանադրական, տնտեսական կամ սոցիալական կառույցները[7]:

Համաձայն ՌԴ Քրեական օրենսգրքի 13.06.1996 N 63 – ԴՕ (դաշնային օրենք) հոդվածի «ահաբեկչությունը» պայթյունի, հրդեհի կամ այլ գործողության իրականացումն է, որը վախեցնում է բնակչությանը և առաջացնում մահվան վտանգ, ինչը հանգեցնում է նշանակալի գույքային վնասի կամ այլ լուրջ հետևանքների, կառավարության մարմինների կամ միջազգային կազմակերպությունների գործունեության ապակայունացման նպատակով նրանց կողմից ընդունվող որոշումների վրա ազդելու համար: Ահաբեկչություն է նաև նշված գործողությունների իրականացման սպառնալիքը՝ իշխանության մարմինների կամ միջազգային կազմակերպությունների վրա ազդելու նպատակով[8]:

Նշված բոլոր սահմանումներում տեսնում ենք ընդհանուր գծեր, որոնց շուրջ էլ տվյալ կազմակերպությունները համագործակցում են ահաբեկչության դեմ պայքարում:

Օտարերկրյա ահաբեկչական ցուցակների տեսակները: Նշված երկրների և կառույցների ահաբեկչական ցուցակների հաստատման ժամանակագրությունը և դրանց տեսակները ևս տարբեր են: ԱՄՆ-ն ահաբեկչական կազմակերպությունների ամբողջական ցուցակն առաջին անգամ հաստատել է 1997թ. օգոստոսին, այն ներառում էր 30 կազմակերպություն: ԵՄ-ն

[7] Fight against terrorism – definitions of terrorist crimes and support to victims, Summary of: Directive (EU) 2017/541 on combating terrorism, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM%3A4322328 (13.09.2019)

[8] Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգիրք, տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (26.09.2019)

ահաբեկչական կազմակերպությունների և անձանց սեփական ցուցակը հաստատել է 2001թ. դեկտեմբերի 27-ին՝ ներառելով 29 անհատների, 13 խմբերի: 2003թ. ՌԴ-ի կողմից հաստատված առաջին ահաբեկչական ցուցակում ներգրավված էր 15 խմբավորում:

Ահաբեկչական կազմակերպությունների ցուցակների կազմման մեկնարկային կետը ՄԱԿ-ի համար կարելի է համարել Անվտանգության խորհրդի 1267 (1999թ.) բանաձևի ընդունումը, որով ստեղծվեց Ալ-Կաիդայի և Տալիբանի պատժամիջոցների կոմիտեն: Այժմ ՄԱԿ-ն ունի ահաբեկչական կազմակերպությունների և պատժամիջոցների տակ գտնվող տարաբնույթ խմբերի համապարփակ ցուցակ, որը խիստ ծավալուն է, և այս հոդվածում չի քննարկվի: Սակայն ՄԱԿ-ի կանոնադրության 25-րդ հոդվածի համաձայն ԵՄ անդամ երկրները պետք է կատարեն 1267 (1999) բանաձևով սահմանված դրույթները, ուստի, 2001թ.-ից արդեն ԵՄ խորհրդի 467 կարգադրությամբ (2001թ.) ԵՄ-ն ընդունել է ՄԱԿ ԱԽ 1267 բանաձևը և ՄԱԿ-ի՝ Ուսամա Բեն Լադենի, Ալ-Կաիդայի ցանցի և Տալիբանի հետ կապ ունեցող մարդկանց և խմբավորումների ահաբեկչական ցանկը: Այդ ցուցակում ընդգրկված կազմակերպությունները հաշվի կառնվեն՝ ԵՄ ցուցակն ամբողջական ներկայացնելու նկատառումից ելնելով: Նշենք նաև, որ 2015թ. դեկտեմբերի 17-ից այդ կոմիտեն անվանափոխվել է՝ դառնալով «ԻՊ և Ալ-Կաիդայի պատժամիջոցների կոմիտե»:

ԱՄՆ, ՌԴ և ԵՄ ահաբեկչական կազմակերպությունները մեկ ցանկով չեն սահմանափակվում. ԱՄՆ ահաբեկչական ցուցակներում առանձնացվում են երեք խմբեր՝ 1. Օտարերկրյա ահաբեկչական կազմակերպություններ, 2. Ահաբեկչության հետ կապ ունեցող անհատներ և կազմակերպություններ, 3.

Ահաբեկչության բացառման ցանկ: ԱՄՆ-ն ունի նաև Ահաբեկչությունը հովանավորող պետությունների ցուցակ: Այս կամ այն երկիրը այս ցուցակում ներգրավելու համար որոշում է կայացնում Պետական Դեպարտամենտը՝ ընդունելով, որ տվյալ երկրի կառավարությունը շարունակաբար աջակցություն է ցուցաբերել միջազգային ահաբեկչական գործողությունների կատարմանը: Այդ ցուցակում ներգրավված պետությունների համար մի շարք պատժամիջոցներ են գործում, այդ թվում՝

- Զենքի և զինամթերքի արտահանման և վաճառքի արգելք
- Երկակի օգտագործման ապրանքների արտահանման վերահսկողություն, որը պահանջում է Կոնգրեսի 30-օրյա ծանուցում՝ այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք կարող են էապես ավելացնել ահաբեկչական ցուցակի պետության ռազմական կարողությունները կամ ահաբեկչությանը աջակցելու կարողությունը
- Տնտեսական աջակցության արգելքներ
- Տարբեր ֆինանսական և այլ սահմանափակումների պարտադրանք

ԱՄՆ այս ցուցակում 2018 թվականի տվյալով 4 պետություն կա՝ Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Սուդանը և Սիրիայի Արաբական Հանրապետությունը[9]:

ԵՄ-ն ունի ահաբեկչական կազմակերպությունների երկու ցուցակ՝ «Ուսամա բեն Լադենի, Ալ-Կաիդայի ցանցի և Տալիբանի հետ կապ ունեցող մարդիկ և խմբավորումներ», որը նույնական է ՄԱԿ-ի ցուցակին (1) և «Ահաբեկչական գործողությունների մեջ

[9] ԱՄՆ Ահաբեկչության դեմ պայքարի բյուրոյի տարեկան զեկույցը, էջ 211-214, մանրամասն տե՛ս https://www.state.gov/wp-content/ uploads/2019/11/Country-Reports-on-Terrorism-2018-FINAL.pdf (07.10.2019)

ներգրավված մարդիկ, խմբեր և միավորումներ» (2): ԵՄ-ի անդամ պետությունները ևս ունեն միջազգային ահաբեկչական կազմակերպությունների առանձին ցուցակներ: ՌԴ-ն ունի ահաբեկչական կազմակերպությունների մեկ ցուցակ, և Արդարադատության նախարարության կողմից հաստատվող ծայրահեղական կազմակերպությունների ցուցակ, որում առավելապես ընդգրկվում են ՌԴ սահմաններում գործող կազմակերպությունները:

Ահաբեկչական ցուցակներում նեգրավվելու չափանիշները: Ստորև ներկայացվում են օտարերկրյա ահաբեկչական կազմակերպություն սահմանելու իրավական չափանիշները՝ ըստ ԱՄՆ Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 219 բաժնի

- կազմակերպությունը պետք է լինի օտարերկրյա,
- կազմակերպությունը պետք է զբաղված լինի ահաբեկչական գործունեությամբ, կամ մտադրված լինի ներգրավվել ահաբեկչությանը կամ ահաբեկչական գործողություններին,
- կազմակերպության ահաբեկչական գործողությունը կամ ահաբեկչությունը պետք է սպառնա ԱՄՆ քաղաքացիների կամ ազգային անվտանգությանը[10]:

«Ուսամա բեն Լադենի, Ալ-Կաիդայի ցանցի և Տալիբանի հետ կապ ունեցող մարդիկ և խմբավորումներ ցանկն», ինչպես արդեն նշվեց, նույնական է ՄԱԿ-ի ցանկին: ԵՄ-ն, այնուհանդերձ, կարող է այդ ցանկում և դրա չափորոշիչներում լրացումներ և փոփոխություններ կատարել՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի,

[10] ԱՄՆ Ահաբեկչության դեմ պայքարի բյուրոյի տարեկան զեկույցը, էջ 264, մանրամասն տե՛ս https://www.state.gov/wp-content/uploads /2019/11/Country-Reports-on-Terrorism-2018-FINAL.pdf (07.10.2019:

Տալիբանի պատժամիջոցների կոմիտեի և անդամ պետությունների համապատասխան դիտարկման կամ տեղեկատվության հիման վրա: ԵՄ 2001/931 ընդհանուր դիրքորոշումը սահմանում է, որ ԵՄ ահաբեկչական կազմակերպությունների առանձին ցուցակը կազմվելու է ճշգրիտ տեղեկությունների հիման վրա, որոնք մատնանշում են այն, որ ինչ-որ անձի, խմբի կամ միավորման նկատմամբ որոշումը կայացվել է դատական կամ համարժեք իրավասու այլ մարմի կողմից:

ՌԴ ահաբեկչական ցուցակում ներգրավվելու չափորոշիչների շարքում է

- այնպիսի գործունեությունը, որն ուղղված է ՌԴ սահմանադրական կարգի փոփոխմանը՝ բռնի, զինված, այդ թվում ահաբեկչական մեթոդների գործադրմամբ,
- Հյուսիսային Կովկասի տարածաշրջանում գործող անհայտ զինված խմբավորումների կամ այլ ահաբեկչական կառույցների հետ կապը,
- միջազգային հանրության կողմից ահաբեկչական ճանաչված կազմակերպություններին պատկանելը կամ նրանց հետ կապ ունենալը[11]:

Թե՛ ԱՄՆ, և թե՛ ՌԴ չափորոշիչներում տեսնում ենք հստակ դիրքորոշում ազգային անվտանգությանը սպառնալիք ներկայացնող կազմակերպությունների վերաբերյալ, ուստի պատահական չէ, որ դրանց ահաբեկչական կազմակերպությունների ցուցակները քիչ նմանություններ ունեն՝ պայմանավորված անվտանգություն հասկացության վերաբերյալ ունեցած տարբեր պատկերացումներով:

[11] ՌԴ Գերագույն դատարանի կողմից ահաբեկչական ճանաչված կազմակերպությունների ցուցակ, https://rg.ru/2006/07/28/terror-organizacii.html

Իրավական հիմքերը: 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո շուրջ մեկ տարվա ընթացում ԱՄՆ Կոնգրեսում 9/11-ին առնչվող օրենսդրության ավելի քանի 130 մասեր ներկայացվեցին, որոնցից 48 օրինագծեր և բանաձևեր հաստատվեցին: Այժմ ԱՄՆ հակաահաբեկչական պայքարի իրավական հիմքում են ԱՄՆ Հայրենասիրական ակտը (2001), Հետախուզության բարեփոխման և ահաբեկչության կանխարգելման ակտը (2004), 2015թ. ԱՄՆ Ազատության ակտը (2015), ինչպես նաև հակաահաբեկչական պայքարի շրջանակում ստեղծված կառույցների ընդունած բազում այլ փաստաթղթեր: ՌԴ Պետական Դումայի 2006թ. փետրվարի 26-ին ընդունված, և Դաշնային Խորհրդի կողմից նույն թվականի մարտի 1-ին հաստատված դաշնային օրենքը սահմանում է, որ այս երկրում ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքը ՌԴ Սահմանադրությունն է, միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներն ու նորմերը, ՌԴ միջազգային պամանագրերը, դաշնային օրենքները, ՌԴ նախագահի, կառավարության և պետական կառավարման այլ դաշնային մարմինների նորմատիվ իրավական ակտերը[12]: ՄԱԿ-ը առաջնորդվում է Անվտանգության խորհրդի մի քանի բանաձևերով՝ 1267(1999), 1333 (2000), 1390(2002), 1455 (2003), իսկ Եվրոպական միությունը առաջնորդվում է Եվրոպայի խորհրդի 337/2000 կարգի, ԵՄ 931/2001 Ընդհանուր դիրքորոշման և այլ իրավական հիմքերով:

Որոշում կայացնելու գործընթացը: ԵՄ անհատական ցուցակը կազմվում է անդամ երկրների կամ երրորդ երկրի առաջարկների հիման վրա, որոնք էլ տրվում են տվյալ երկրի

[12] Российская Федерация, Федеральный Закон, О противодействии терроризму http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&nd=102105192 (04.10.2019)

անվտանգության փորձագետների և հետախուզական ծառայությունների գնահատականների համաձայն[13]: Առաջարկներն արվում են Խորհրդի նախագահության կամ ԵՄ պատվիրակությունների միջոցով: Առաջարկը ստանալուց հետո նախագահությունը կամ որևէ պատվիրակություն իրականացնում է սկզբնական ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում պահանջում հավելյալ տեղեկատվություն: Դրան հաջորդում է խորհրդակցությունների փուլը, որի ընթացքում հավաքված տեղեկությունը շրջանառվում է անդամ պետությունների պատվիրակությունների մոտ, ապա քննարկվում Խորհրդի նախագահության 931 աշխատանքային խմբում: Հենց այս խումբն էլ առաջարկ է ներկայացնում որևէ կազմակերպություն ցուցակագրելու կամ չցուցակագրելու մասին: Առաջարկը պետք է հաստատվի մշտական ներկայացուցիչների կոմիտեի կողմից՝ հետագայում Խորհրդի կողմից ընդունվելու համար: Խորհուրդը անանուն քվեարկությամբ հաստատում է ցուցակը, որն արդեն որպես պաշտոնական փաստաթուղթ հրապարակվում է ԵՄ պաշտոնական ամսագրում: Ցուցակում ներգրավված անհատները, կազմակերպությունները կամ միավորումները ծանուցվում են այդ մասին առանձին նամակի կամ պաշտոնական ամսագրի համապատասխան հրապարակման միջոցով:

ԱՄՆ ահաբեկչական ցուցակը կազմվում է Պետդեպարտամենտի Ահաբեկչության դեմ պայքարի համակարգման գրասենյակի՝ Պետդեպարտամենտին ներկայացված վարչական արձանագրության ուսումնասիրության վրա, որում ընդգրկված են լինում հավանական ահաբեկչական խմբերը: Պետքարտուղարը, խորհրդակցելով գլխավոր

[13] Եվրոպական Միության ահաբեկչական ցուցակը, https://www.consilium .europa.eu/en/policies/fight-against-terrorism/terrorist-list/ (06.11.2019):

դատախազի և Ֆինանսների նախարարության հետ, որոշում է կայացնում տվյալ կազմակերպությունը ահաբեկչական որակելու/չորակելու մասին: ՄԱԿ-ի ահաբեկչական կազմակերպությունների ցուցակը 1267 բանաձևի համաձայն հաստատում է Անվտանգության խորհրդի կոմիտեն/հանձնաժողովը, որը կազմված է Անվտանգության խորհրդում յուրաքանչյուր պետությունից մեկ ներկայացուցիչներից: Կոմիտեն որոշումները կայացնում է «ընդհանուր համաձայնությամբ»:

Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպությունը որպես ահաբեկչական ճանաչելու և այն արգելելու առաջարկ է պատրաստվում Անվտանգության դաշնային ծառայության կողմից: Այս առաջարկը քննվում է Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունում, որն էլ հայցադիմում է ներկայացնում դատարան: Կազմակերպությունը ճանաչվում է ահաբեկչական և ենթարկվում լուծարման (կամ արգելվում է գործունեությունը) դատարանի որոշմամբ՝ ՌԴ գլխավոր դատախազի կամ նրա ենթակայության տակ աշխատող այլ դատախազի համապատասխան հայտարարության հիման վրա[14]:

Բողոքարկելու մեխանիզմը: ԵՄ ահաբեկչական ցուցակից դուրս գալու պահանջը կարող է ներկայացվել ցուցակագրված անձանց, խմբերի կամ միավորումների, անդամ երկրների կամ այն երրորդ երկրի կողմից, որն ի սկզբանե առաջարկել էր ցուցակագրումը: ԱՄՆ-ում ահաբեկչական ճանաչված

[14] ՌԴ ահաբեկչության դեմ պայքարի դաշնային օրենք (06.03.2006 N 35 (խմբագրված 18.04.2018թ., 29.03.2019թ. փոփոխություններով), մանրամասն տե՛ս https://legalacts.ru/doc/federalnyi-zakon-ot-06032006-n-35-fz-o/?fbclid=IwAR3gKKulaGCpwLG1pW8IAd4vWLblQbOTdwAFUkogT4kHH2zOuCK2DliMikU (20.10.2019)

կազմակերպությունը կարող է դատական քննություն պահանջել ԱՄՆ Կոլումբիայի վարչական շրջանի վերաքննիչ դատարանում՝ Դաշնային ռեգիստրում կազմակերպության՝ ահաբեկչական ճանաչվելու վերաբերյալ հրապարակումից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում[15]:

ՄԱԿ-ի ցուցակում ներգրավված անհատները, խմբերը, նախաձեռնությունները և/կամ այլ սուբյեկտներ կարող են միջնորդագիր ներկայացնել իրենց գրանցման և/կամ քաղաքացիության երկրի կառավարությանը՝ պահանջելով իրենց ցուցակագրման վերանայում և «աջակցություն ապացուցակագրման» համար: Կառավարությունը, որին ներկայացվել է միջնորդագիրը, պետք է ուսումնասիրի համապատասխան ողջ տեղեկատվությունը, ապա դիմի այն երկրների կառավարությանը (կառավարություններին), որոնք ի սկզբանե առաջարկել են ցուցակագրումը: Եթե լրացուցիչ տեղեկատվությունը ուսումնասիրելուց հետո տվյալ կառավարությունը որոշում է ցուցակից հանելու պահանջ ներկայացնել, պետք է փորձի համոզել ի սկզբանե ցուցակագրումը առաջարկած երկրներին միասին կամ անջատ պահանջ ներկայացնել Կոմիտեին: Հարցի շուրջ համաձայնության չգալու դեպքում, այն քննվում է Անվտանգության Խորհրդում[16]:ՌԴ ահաբեկչական ցուցակի բողոքարկման մասին պաշտոնական որևէ տեղեկություն չի հաղորդվում:

Ըստ վերոթվարկյալ չափանիշների կազմվել են ահաբեկչական ցուցակներ, որոնցից մեր կողմից առանձնացրել ենք իսլամական ահաբեկչական կազմակերպությունները:

---

15 ԱՄՆ Պետդեպարտամենտի արխիվ, Օտարերկրյա ահաբեկչական կազմակերպություններ, տե՛ս https://2001-2009.state.gov/s/ct/rls/fs/37191.htm

16 Ահաբեկչական կազմակերպությունների ցուցակներ. մոնիթորինգ, ակտիվների սառեցում, տե՛ս http://www.statewatch.org/terrorlists/terrorlists.html

	Կազմակերպության անվանումը	**ԵՄ**	**ԱՄՆ**	**ՌԴ**
1.	Ալ-Կաիդա	✓	✓	✓
2.	Ալ-Կաիդան Արաբական թերակղզում	✓	✓	
3.	Ալ-Կաիդան Իսլամական Մաղրիբում	✓	✓	✓
4.	Ալ-Կաիդա. Հնդկական ենթամայրցամաք		✓	
5.	Ալ-Կաիդան Իրաքում	✓		
6.	Իրաքի և Լևանտի Իսլամական պետություն		✓	✓
7.	Իսլամական պետությունը Սինայի շրջանում		✓	
8.	Իսլամական պետություն. Լիբիա		✓	
9.	Իսլամական պետություն. Բանգլադեշ		✓	
10.	Իսլամական պետություն. Ֆիլիպիններ		✓	
11.	Իսլամական պետություն. Արևմտյան Աֆրիկա		✓	
12.	Իսլամական պետություն. Մեծ Սահարա		✓	
13.	Իրաքի և Լևանտի Իսլամական պետություն. Խորասան	✓	✓	
14.	Ուղեցույց դեպի Իսլամական պետություն			✓
15.	Միաստվածության և ջիհադի խմբի մուջահեդներ			✓
16.	Ջաբհաթ ալ-Նուսրա	✓	✓	✓
17.	Ակսայի բանակ	✓		
18.	Մուսուլման եղբայրներ			✓
19.	Եգիպտական իսլամական ջիհադ	✓	✓	✓
20.	Ջամաա Իսլամիյա / Իսլամական խումբ	✓	✓	✓
21.	Ասբաթ ալ-Անսար	✓	✓	✓
22.	Հարաքաթ Շամ ալ-Իսլամ (Սիրիա)	✓		
23.	Ադենի իսլամական բանակ (Եմեն)	✓		
24.	Ալ-Աշտար բրիգադներ (Բահրեյն)		✓	
25.	Խալիդ իբն Ուալիֆի բանակ (Սիրիա)	✓		
26.	Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս		✓	
27.	Իրանական հետախուզության և անվտանգության նախարարության ներքին անվտանգության տնօրինություն	✓		
28.	Հիզբալլահ		✓	

29.	Հիզբալլահի ռազմական թև	✓	✓	
30.	Քրդական աշխատավորական կուսակցություն	✓	✓	
31.	Քրդստանի ազատագրման բազեներ	✓		
32.	Ջայշ Ռիջալ ալ-Տարիկ Նակշբանդի (Իրաք)		✓	
33.	Տալիբան			✓
34.	Օրինություն բարեգութ և գթասիրտ Ալլահից.Շամ			✓
Պակիստան, Հնդկաստան, Աֆղանստան				
	Կազմակերպության անվանումը	**ԵՄ**	**ԱՄՆ**	**ՌԴ**
35.	Լաշքար է-Տայյիբա	✓	✓	✓
36.	Լաշքար է-Ջհանգվի	✓	✓	
37.	Հարաքաթ ալ-Մուջահիդին	✓	✓	
38.	Ջայշ ի Մուհամմադ (Մուհամմադի բանակ)	✓	✓	
39.	Հիզբ ալ-Մուջահիդին (Մուջահիդների կուսակցություն)	✓	✓	
40.	Թեհրիք է-Տալիբան (Պակիստան)	✓	✓	
41.	Տարիկ Գիդար խումբ	✓		
42.	Ջամա'աթ ալ-Ահրար	✓		
43.	Իսլամական ջիհադի շարժում	✓	✓	
44.	Իսլամական համագործակցության խումբ	✓		
45.	Ջունդալլահ		✓	
46.	Հնդիկ մուջահիդներ		✓	
Ինդոնեզիա, Մալազիա, Ֆիլիպիններ				
47.	Աբու Սայյաֆ խումբ	✓	✓	
48.	Ռաջահ Սուլեյման շարժում	✓		
49.	Ջեմաա իսլամիյա	✓	✓	✓
50.	Ջեմաա Անշորութ Թաուհիդ	✓	✓	
51.	Արևելյան Ինդոնեզիայի մուջահիդներ	✓	/ [17]	
Արևմտյան ափ, Գազայի հատված և Սինայ				
	Կազմակերպության անվանումը	ԵՄ	**ԱՄՆ**	**ՌԴ**
52.	Աբդուլլահ Ազզամ բրիգադներ	✓	✓	
53.	Ալ-Ակսայի նահատակների բրիգադ	✓	✓	

[17] Առկա է ԱՄՆ Հատուկ սահմանված համշխարհային ահաբեկիչների ցանկում, որպես Իսլամական պետության հետ կապ ունեցող կազմակերպություն:

54.	Ֆաթհ հեղափոխական խորհուրդ	✓	Ø[18]	
55.	Համաս	✓	✓	
56.	Պաղեստինյան իսլամական ջիհադ	✓	✓	
57.	Պաղեստինի ազատագրման ազգային ճակատ	✓	✓	
58.	Պաղեստինի ազատագրման ազգային ճակատի Գլխավոր շտաբ	✓	✓	
59.	Պաղեստինի ազատագրության ճակատ		✓	
60	ԿԱԽ		✓	
61.	Երուսաղեմի շրջակայքի Շուրայի խորհրդի մուջադիդներ		✓	
62.	Իսլամական ազատագրման կուսակցություն			✓
63	Իսլամի բանակ		✓	
Կենտրոնական Ասիայում գործող ահաբեկչական կազմակերպություններ				
	Կազմակերպության անվանումը	**ԵՄ**	**ԱՄՆ**	**ՌԴ**
64	Թուրքեստանի իսլամական կուսակցություն	✓		✓
65	Ուզբեկստանի իսլամական շարժում	✓	✓	
66	Իսլամական ջիհադ/ մուջահիդների խմբեր	✓	✓	✓
67.	Խատիբա իմամ ալ-Բուխարի	✓		
Թուրքիայի տարածքում գործող իսլամական ահաբեկչական կազմակերպություններ				
68	Մեծ Արևելքի մարտիկների իսլամական ճակատ	✓		
69	Հեղափոխական ժողովրդական ազատագրման կուսակցություն/ճակատ	✓	✓	

Քննարկվող պետությունների և միջազգային կառույցների պաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ նրանց պատկերացումները համաշխարհային անվտանգության սպառնալիքների հարցում համընկնում են մեկ տասնյակը

[18] Աբու Նիդալ անունով հայտնի այս կազմակերպությունը դուրս է բերվել ԱՄՆ օտարերկրյա ահաբեկչական կազմակերպությունների ցանկից 2017թ.-ին: Մանրամասն տե՛ս https://www.state.gov/foreign-terrorist-organizations/ (24.09.2019):

չգերազանցող կազմակերպությունների դեպքում: Դրանք են՝ Ալ-Կաիդան և Ալ-Կաիդան Մաղրիբում կազմակերպությունները (այս կազմակերպությունը ահաբեկչական է ճանաչվել նաև Ավստրալիայում, Կանադայում, Ճապոնիայում, ԱՄԷ-ում), Իսլամական պետությունը, որը ՄԱԿ-ի ցուցակում ներկայացվում է որպես Ալ-Կաիդան Իրաքում, Ջաբհաթ ալ-Նուսրան, որն ի սկզբանե ձևավորվել էր որպես Ալ-Կաիդայի սիրիական մասնաճյուղ (2013), Եգիպտական իսլամական ջիհադը, որը 2001թ.-ից միավորվել է Ալ-Կաիդայի հետ, Իսլամական խումբը (Եգիպտոս), որի որոշ անդամներ 2006թ.-ից միացել են Ալ-Կաիդայի ցանցին, Ասբաթ ալ-Անսարը (Լիբանան), որը կազմված է Ալ-Կաիդայի հետ կապ ունեցող պաղեստինցիներից, Լաշքարէ Տայյիբա (Պակիստան), Ջեմաա Իսլամիյա (Ինդոնեզիա) և Իսլամական ջիհադ (Կենտրոնական Ասիա) խմբավորումները, որոնք ևս կապված են Թալիբանի և Ալ-Կաիդայի հետ:

Ալ-Կաիդայի հետ առնչվող կազմակերպությունների աշխարհագրությունը ընդգրկում է գրեթե ողջ աշխարհը, ինչի մասին են վկայում նաև Ինդոնեզիայից մինչև Եգիպտոս ու Հյուսիսային Կովկաս ընկած տարածքներում գործող կազմակերպությունների կապերը այս ցանցի հետ:

Հյուսիսային Կովկասում գործող իսլամական ահաբեկչական կազմակերպություններ

	Կազմակերպության անվանումը	**ԵՄ**	**ԱՄՆ**	**ՌԴ**
70.	Ռիյադ ալ-Սալիհին	✓		
71.	Կովկասի մուջահիդների միացյալ ուժերի գերագույն ռազմական մաջլիս ալ-Շուրա			✓
72.	Իսլամական միջազգային բրիգադ	✓		
73.	Դաղստանի և Իչկերիայի ժողովուրդների կոնգրես			✓
74.	Չիստոպոլսկի խմբեր			✓

75.	Կովկասի Էմիրություն	✓		✓
76.	Աջակիցների և փախստականների բանակ	✓		
77.	Շամի զինյալներ			✓
78.	Հատուկ նշանակության իսլամական զորագունդ	✓		

Հետաքրքիր է համեմատել նշված պետությունների և կազմակերպությունների ցուցակները՝ Հյուսիսային Կովկասում գործող ահաբեկչական խմբավորումների օրինակով: Այդ կազմակերպություններից որոշների ներգրավումը ԵՄ-ՄԱԿ ցուցակում փաստում է այն մասին, որ ծագած լինելով Հյուսիսային Կովկասում և կարճ ժամանակահատվածում համառուսաստանյան սպառնալիք դառնալով, այստեղ գործող ահաբեկչական կազմակերպությունները վտանգավոր են համարվում նաև միջազգային հանրության համար: Ցուցակում քիչ համընկնումները պատահական չեն. Ռիյադ աս-Սալիհին կազմակերպությունը ռուսական հետախուզության տվյալների համաձայն «Կովկասի մուջահիդների միացյալ ուժերի գերագույն ռազմական մաջլիս ալ-Շուրա»-ի կազմում է, հետևաբար որպես առանձին կազմակերպություն ներգրավված չէ ՌԴ ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում: Դաղստանի և Իչկերիայի ժողովուրդների կոնգրեսն էլ համարվում է Իսլամական միջազգային բրիգադի հովանու տակ գործող կազմակերպություն, հետևապես առանձին տողով ներկայացված չէ ԵՄ-ՄԱԿ ցուցակում: Հատկանշական է, որ ներկայացվող կազմակերպություններից որևէ մեկը չկա ԱՄՆ Օտարերկրյա ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում. Կովկասի էմիրությունը, սակայն, ի թիվս Իսլամական պետության հետ առնչվող այլ կազմակերպությունների և անհատների (ԻՊ – Լիբիա, ԻՊ-Սաուդյան Արաբիա, ԻՊ- ԵՄԵՆ, ԻՊ-Ալժիր, ԻՊ-

Խորասան, ԻՊ-Սինայ) ներգրավված է ԱՄՆ Պետդեպարտամենտի Հատուկ սահմանված համաշխարհային ահաբեկիչների ցուցակում:

Աֆրիկյան մայրցամաքում գործող ահաբեկչական կազմակերպություններ

	Կազմակերպության անվանումը	**ԵՄ**	**ԱՄՆ**	**ՌԴ**
79.	Ալ-Շաբաբ		✓	
80.	Բոկո Հարամ	✓	✓	
81.	Ալ-Մուլաթամուն	✓	✓	
82.	Շարիաթի աջակիցներ .Բենղազի	✓	✓	
83.	Շարիաթի աջակիցներ .Դերնա	✓	✓	
84.	Լիբիայի իսլամական զինյալ խումբ	✓		
85.	Մուսուլմանների աջակիցները Սուդանում	✓	✓	
86.	Շարիաթի աջակիցները Թունիսում		✓	
87.	Իսլամի աջակիցները Թունիսում	✓		
88.	Թունիսի մարտական խումբ	✓		
89.	Մարոկկոյի իսլամական զինյալ խումբ	✓	Ѳ[19]	
90.	Ջունդ ալ-Խիլաֆա – Ալժիր	✓		
91.	Իսլամական զինյալ խումբ (Ալժիր)	✓		
92.	Անսար ադ-Դին (Կրոնի աջակիցներ)	✓	✓	
93.	Անսար ալ-Իսլամ (Իսլամի աջակիցներ)	✓	✓	
94.	Իսլամական միություն	✓		
95.	Ալ-Մուռաբիտուն	✓		
96.	Իսլամի և մուսուլմանների հաղթանակի խումբ	✓	✓	
97.	Ալ-Մուվակաուն	✓		
98.	Միաստվածության և ջիհադի շարժումը Արևմտյան Աֆրիկայում	✓		

[19] Այս կազմակերպությունը ևս դուրս է բերվել ԱՄՆ Օտաերկրյա ահաբեկչական կազմակերպությունների ցանկից:

99.	Մուհամմադ Ջամալի ցանց	✓		

Աֆրիկայում մի շարք կազմակերպություններ, մասնավորապես Սոմալիում գործող Ալ-Շաբաբը, Բոկո Հարամը և Իսլամական պետությանը առնչվող այլ խմբավորումներ նախորդող տարիներին շարունակել են սպառնալ տարածաշրջանային անվտանգությանը: Այս տարածաշրջանում գործող կազմակերպությունները բացակայում են ՌԴ ցուցակում, մինչդեռ ԱՄՆ-ն տարբեր ձևաչափերով համագործակցում է տեղական իշխանությունների հետ ահաբեկչության դեմ պայքարում (Տրանս-Սահարա հակաահաբեկչական համագործակցություն, Արևելյան Աֆրիկայի տարածաշրջանի հակաահաբեկչական համագործակցություն և այլն):

Ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը հովանավորող հիմնադրամներ

	Կազմակերպության անվանումը	**ԵՄ**	**ԱՄՆ**	**ՌԴ**
100.	Ծառայությունների գրասենյակ (Պակիստան)	✓	+[20]	
101.	Ալ-Ռաշիդ Թրասթ– Պակիստան	✓	+	
102.	Ուաֆա մարդասիրական կազմակերպություն	✓	+	
103.	Ռաբիտա Թրասթ	✓	+	
104.	Իսլամական ժառանգության վերածննդի խումբ	✓	+	✓
105.	Աֆղանական աջակցության կոմիտե	✓	+	

[20] «+» նշանը դրված է այն կազմակերպությունների կամ հիմնադրամների դիմաց, որոնք ընդգրկված են ԱՄՆ ֆինանսների նախարարության՝ «Ահաբեկչությունը հովանավորող կազմակերպությունների» ցուցակում: Ցուցակը՝ հետևյալ հղումով https://www.treasury.gov/resource-center/terrorist-illicit-finance/Pages/protecting-fto.aspx (20.11.2019)

106-117	Ալ-Հարամեյն հիմնադրամ (Ինդոնեզիա, Պակիստան, Կոմորյան կղզիներ, Բոսնիա և Հերցեգովինա, Սոմալի, Աֆղանստանի մասնաճյուղ, Ալբանիայի մասնաճյուղ, Բանգլադեշի մասնաճյուղ, Եթովիպիայի մասնաճյուղ, Նիդերլանդների մասնաճյուղ , Քենիա, Տանզանիա[21])	✓	+	
118.	Համաշխարհային օգնության հիմնադրամ	✓	+	
119.	Բենեվոլենս միջազգային հիմնադրամ	✓	+	
120.	Ալ-Ախտար Թրասթ	✓	+	
121.	Ալ-Հարամեյն և Ալ-Մասջիդ ալ-Ակսա բարեգործական հիմնադրամ	✓	+	✓
122.	Ալ-Ֆուրկան	✓	+	
123.	Տաիբա Ինթերնեյշնլ. Բոսնիա	✓	+	
124.	Հիլալ Ահմար հասարակություն Ինդոնեզիա	✓	+	
125.	Ալ-Քաութար օտարերկրյա արժույթի առուվաճառքի կազմակերպություն	✓		
126.	Հանիֆա գումարի փոխանակման գրասենյակ	✓	☒[22]	
127.	Ոսկյա շղթա փոխանակման գրասենյակ	✓	☒	
128.	Ալ-Ակսա հիմնադրամ	✓	+	
129.	Սոցիալական բարեփոխումների հասարակություն			✓

Ցուցակի վերջին հատվածում ներկայացված կազմակերպությունները անմիջական պատասխանատվություն չեն կրում որևէ երկրում որևէ խմբի դեմ իրականացված

[21] Ալ-Հարամեյն հիմնադրամի մասնաճյուղերը համարվում են առանձին կազմակերպություններ և որպես ահաբեկչական են ճանաչվել առանձին որոշումների հիման վրա և տարբեր ժամանակաշրջաններում:

[22] Այս (☒) նշանով ներկայացվող կազմակերպությունները 2016թ.-ից ընդգրկված են ԱՄՆ գանձապետարանի Պետական ակտիվների վերահսկման գրասենյակի ցուցակում: Տե՛ս https://www.treasury.gov/resource-center/sanctions/OFAC-Enforcement/Pages/20161213.aspx (02.11.2019):

ահաբեկչական գործողության համար, սակայն համարվում են բուն ահաբեկչական գործողություններ կատարող կազմակերպությունները հովանավորող հիմնադրամներ: Դրանք առավելապես հանդես են գալիս բարեգործական, կրթական և մշակութային նախաձեռնություններով և «թաքնվում են» այս գործունեության տակ: Դրանք ներրգրավված են ԵՄ-ՄԱԿ ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում, ԱՄՆ՝ ահաբեկչությունը հովանավորող կազմակերպությունների ցուցակում, և միայն երեքն են առկա ՌԴ ահաբեկչական ցուցակում՝ Իսլամական ժառանգության վերածննդի խումբը, Սոցիալական բարեփոխումների հասարակությունը (այս կազմակերպությունը համարվում է Մուսուլման եղբայրներին հովանավորող, սրա բացակայությունը մյուս ցուցակներից տրամաբանական է, քանի որ ՄԵ-ը ԵՄ, ԱՄՆ, ՄԱԿ ահաբեկչական ցուցակում չկա) և Ալ-Հարամեյն և Ալ-Մասջիդ Ալ-Ակսա բարեգործական կազմակերպությունները: Ցուցակում ներկայացված գրեթե բոլոր կազմակերպությունները, բացառությամբ Ալ-Ակսա հիմնադրամի և Սոցիալական բարեփոխումների գրասենյակի, ԱՄՆ գանձապետարանի տրամադրած տեղեկության համաձայն առնչվում են Ալ-Կաիդա կազմակերպությանը: Ալ-Ակսան համարվում է ՀԱՄԱՍ կազմակերպությանը ֆինանսավորող բարեգործական ընկերություն:

Այսպիսով, ԵՄ, ՌԴ և ԱՄՆ ահաբեկչական ցուցակների համեմատությունը ի հայտ է բերում մի շարք հետաքրքիր մանրամասներ տարբեր տարածաշրջանների և տարբեր նպատակներ ունեցող կազմակերպությունների վերաբերյալ գնահատումների շուրջ: ԵՄ-ԱՄՆ ցուցակներում ընդհանրությունները ավելի շատ են՝ հաշվի առնելով, որ

ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ-ն ԵՄ-ի հիմնական գործընկերն է և նրանց համագործակցությունն այս ոլորտում ամրապնդվում է բազմաթիվ համաձայնագրերով: Ինչ վերաբերում է ՌԴ ահաբեկչական կազմակերպությունների ցուցակին, ապա դրանում գերակշռում են Հյուսիսային Կովկասում գործող և Ռուսաստանի անվտանգությանը անմիջական վտանգ ներկայացնող կազմակերպություններ:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СПИСКОВ ТЕРРОРИСТИЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЙ

Аннотация

Шушан Кюрегян
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
shoushan.kyureghyan@ysu.am

Ключевые слова: *терроризм, иностранные террористические организации, террористические списки, террористические сети, Аль-Каида, борьба с терроризмом*

Составление списков террористических организаций различными государствами и международными организациями является одним из методов борьбы с терроризмом. Составление подобных списков помогает выявить приоритетные направления деятельности государств и организаций, а также их подходы по целому ряду вопросов, в числе которых вопросы национальной, региональной и международной безопасности.

В статье рассматриваются списки террористических организаций, признанные таковыми в ЕС, ООН, РФ и США согласно официальным документам, а также выявляются различия и совпадения в этих списках.

COMPARATIVE ANALYSIS OF TERRORIST LISTS
Abstract

Shushan Kyureghyan
Center for Civilization and Cultural Studies, YSU
shoushan.kyureghyan@ysu.am

Key words: *terrorism, foreign terrorist organizations, terrorist lists, terrorist networks, Al-Qaeda, counterterrorism*

The adoption of terrorist organizations lists by different states and international organizations is one of the counterterrorism tools. The listings highlight the overall security interests, priorities, outlook of particular countries and international organizations, as well as their own perceptions of national, regional and international security.

The article examines the terrorist lists of EU, UN, RF and USA according to their official documents and highlights the commonalities, differences and overlaps in those lists.

КРИТИЧЕСКИ ВАЖНЫЕ ОБЪЕКТЫ ИНФРАСТРУКТУРЫ (КВОИ) В КАЧЕСТВЕ МИШЕНИ ДЛЯ ТЕРРОРИСТОВ: ПРИМЕР НЕФТЕ - И ГАЗОПРОВОДОВ.

Брутян Ануш
Центр по исследованию проблем культуры и цивилизации, ЕГУ
anush.brutian@ysu.am

***Ключевые слова**: терроризм, газ, нефть, критически важные объекты инфраструктуры, трубопроводы, инфраструктура углеводородов.*

Сложности в определениях

Понятие «терроризм»

Зачастую вопрос поиска приемлемого, наиболее исчерпывающего определения становится комплексным, в особенности, если речь идет о необходимости достижения консенсуса. Определение «терроризм» как раз является таким примером, который показывает насколько многогранным может быть явление и насколько сложно бывает выработать общий подход, который бы учел интересы сторон. До сих пор не выработано такое толкование, которое являлось бы универсальным и общепринятым, хотя возможно, в обратном случае это создало бы еще больше вопросов и усложнило бы ряд процессов.

В Конвенции о предупреждении терроризма и наказании за него 1937г. подчеркивается необходимость применения как международно-правовых договоренностей, так и национального законодательства в борьбе против терроризма. В документе акцент делался на защиту должностных лиц, тогда как гражданское население было оставлено без внимания. С 30-ых годов прошлого века и до сих пор ведется процесс создания единого для всех подхода к данной проблеме. Процесс усложняется также тем, что не все государства стремятся к универсальному определению данного термина исходя из собственных интересов, так как многие из них сегодня финансируют

либо иначе сотрудничают с организациями, которые по тем или иным пунктам подходят под категорию террористических для третьих сторон.

Существует более сотни определений понятия терроризм. Ниже приведены некоторые из них, которые помогут впоследствии выявить общие черты/закономерности в данном понятии. Если рассмотреть динамику в русскоязычной литературе, то с понятия от 1949 года в словаре С.И. Ожегова «Террор – физическое насилие вплоть до физического уничтожения по отношению к политическим противникам[1]», дошли до понятия в федеральном законе РФ «О борьбе с терроризмом от 2006 года: «терроризм - идеология насилия и практика воздействия на принятие решения органами государственной власти, органами местного самоуправления или международными организациями, связанные с устрашением населения и (или) иными формами противоправных насильственных действий».

В законе Республики Армения «О борьбе с терроризмом» от 2005 года (поправки от 2018) не дано определение самого термина терроризм. Согласно статье 5, где приведены основные понятия, используемые в законе, террористическим актом является «организация, подготовка и осуществление террористического акта; подстрекательство к насилию в отношении физических лиц или организаций, уничтожению материальных объектов в террористических целях, организация незаконного вооруженного формирования, преступной группировки для совершения террористического акта, а также участие в таком акте, вербовка, вооружение, обучение террористов, финансирование или иное содействие террористической организации или террористической группе»[2]. В ряде определений этого закона проблема состоит в отсутствии не только самого понятия термина терроризм, но и в

[1] Ожегов С. «Словарь Русского языка» https://slovarozhegova.ru/word.php?wordid=31697 (дата обращения: 8.08.2019)
[2] Закон Республики Армения «О борьбе с терроризмом» принят 2005г., http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2282&lang=rus, (дата обращения: 15.09.2019).

отсутствии определенных четких рамок или критериев для выявления деятельности, характеризуемой в качестве террористической. Более того, даже после поправок, внесенных в закон, в определениях «террористическая деятельность, террористический акт, антитеррористические действия» используются различные формы прилагательного террористический, что является логической ошибкой (см. круг в определении[3]).

Согласно Кодексу США[4], терроризм – это «заранее запланированное, политически мотивированное применение физического насилия в отношении некомбатантов, совершенное не субнациональной группой или тайными агентами».

В Global Terrorism Database используется следующее определение: «угроза или применение легитимного принуждения или силы со стороны негосударственного актора для достижения определенной цели в политической, экономической, религиозной или общественной сфере через страх, принуждение или устрашение»[5].

На сегодняшний день существует множество мозговых центров и аналитических структур, которые занимаются разработкой данного понятия. Следует отметить, что существует также подход, последователи которого отмечают, что не столь важно наличие приемлемого определения, сколь наличие перечня видов деятельности, которые характеризуют или попадают под данное понятие.

Приведенные выше толкования, а также ряд иных, исследуемых, но не внесенных в рамки статьи, показали, что довольно сложно проследить общие формулировки, и многое зависит от похода, от того, на что направлено внимание того или иного субъекта в своей деятельности.

---

[3] Шадрин Д., Логика: конспект лекций /Правила определения/ https://www.e-reading.life/book.php?book=99495, (дата обращения: 15.09.2019)

[4] The United States Code, Title 22, Chapter 38, Section 2656f(d)(2) “Premeditated, politically motivated violence perpetrated against noncombatant targets by sub-national groups or clandestine agents.”

[5] Global Terrorism Database https://www.start.umd.edu/gtd/about/ (дата обращения: 14.11.2019)

Несмотря на это, в определениях все же можно выявить определенные закономерности, общие черты:

- цели террористических акций выходят за пределы причиняемого им разрушения: причинения повреждений, убийства
- цели актов терроризма достигаются путем психологического воздействия на лица/органы, не являющихся непосредственными жертвами насилия
- жертвы терроризма зачастую избираются по их символическому значению[6].

В заключительной части статьи будет приведена проекция вышеупомянутых черт и закономерностей на террористические акты, направленные на такой вид КВОИ, как нефте- и газопроводы.

Необходимо также отметить, что в статье не рассматривается такое понятие как государственный террор.

Понятие «критически важные объекты инфраструктуры»

В большинстве зарубежных стран с целью систематизации таких потенциально опасных объектов, уничтожение которых может иметь значительные политические и военные последствия, введен термин «критическая инфраструктура». Под ним в США понимается «совокупность физических или виртуальных систем и средств, важных для государства в такой мере, что их выход из строя или уничтожение могут привести к губительным последствиям в области обороны, экономики, здравоохранения и безопасности нации» (закон США «USA PATRIOT Act» от 2001 года, Закон о борьбе с терроризмом в США, 2001). В ЕС КВОИ - «актив, система или ее часть, находящаяся на территории государств-членов, которая «необходима для поддержания жизненно важных функций общества, здоровья, безопасности, сохранности, экономического или социального благополучия людей», нарушение или разрушение которых окажет значительное влияние на государства-члены в

[6] Чернядьева Н. «О понятии «международный терроризм» в отечественной правовой науке», 2011 https://cyberleninka.ru/article/n/o-ponyatii-mezhdunarodnyy-terrorizm-v-otechestvennoy-pravovoy-nauke, (вход: 5.10.2019)

результате несоблюдения этих функций»[7]. В России КВОИ – объект, нарушение функционирования которого (или прекращение) приводят к потере контроля, разрушению инфраструктуры, необратимым изменениям (или отказу) экономики субъекта Российской Федерации или административно-территориальных единиц или значительному ухудшению здоровья и безопасности людей, проживающих в этих районах, на длительный срок[8]. Примечательно, что при сопоставлении источников, указанных в выборке из 16 определений[9] КВОИ, 10 приведены из законов/стратегий, относящихся к сфере информационной и кибербезопасности.

Несмотря на многообразие существующих определений, необходимо отметить, что не только важно наличие определения, но и выделение реальных КВОИ, которые нуждаются в особой защите от ряда возможных угроз. Сложность заключается в том, что при выделении того или иного объекта в качестве КВОИ необходимо корректно расставить приоритеты, иначе при широком перечне КВОИ возникнут проблемы с распределением имеющихся ресурсов, необходимых для защиты, в том числе - и с финансированием. При невовлеченности необходимых объектов в этот список они не будут должным образом защищены.

Несмотря на сложность выработки особых критериев и определенные отличия в подходах по определению КВОИ, энергетический сектор для всех государств (и ЕС) включен в этот список. Зачастую добыча, переработка, транспортировка и хранение энергоносителей, включая сами трубопроводы, а также распределение газа и нефти, что отмечено в ориентировочном списке секторов и подсекторов, определенных ЕС[10], входят в число КВОИ практически

[7] Директива Совета ЕС 2008/114/ЕС, статья 2 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv%3AOJ.L_.2008.345.01.0075.01.ENG,
[8] The protection of critical infrastructures against terrorist attacks: Compendium of good practices https://www.un.org/sc/ctc/wp-content/uploads/2019/01/Compendium_of_Good_Practices_Compressed.pdf, (дата обращения: 10.10.2019)
[9] Там же
[10] The protection of critical infrastructures against terrorist attacks: Compendium of good practices https://www.un.org/sc/ctc/wp-content/uploads/2019/01/Compendium_of_Good_Practices_Compressed.pdf (дата обращения: 10.10.2019)

для всех государств. Интересным является пример Нидерландов[11]: здесь определяется уровень критичности не объектов, а процессов, на основе таких критериев как возможный экономический ущерб и физическое воздействие. Более того, в Нидерландах данные процессы распределяются по важности на категории «А» и «В». В категорию «А», наряду с другими входят добыча природного газа и поставки нефти, а в категорию «В» включено и региональное распределение газа. Вполне возможно относительно последнего в скором будущем произойдут корректировки, связанные с тем, что в 2018 году впервые за последние десятилетия Нидерланды превратились из газового экспортера в импортера[12].

Терроризм и трубопроводы

Как уже было отмечено, особую категорию среди объектов критической инфраструктуры представляют собой нефте- и газопроводы, а также пункты добычи, переработки и хранения углеводородов.

Уязвимость инфраструктуры углеводородов во многом объясняется сложностями в процессе производства, хранения и распределения продукции, в случае нефти - это также процесс рафинирования. Очевидно, что жидкие и газообразные горючие вещества требуют особых хранилищ и механизмов производства. Наряду с этими сложностями есть также вопросы безопасности как физической, так и информационной самих инфраструктурных путей, а в случае с трансграничными системами процесс обеспечения безопасности усложняется и в нормативно-правовом аспекте[13].

---

[11] Понятие «голландской болезни» произошло вследствие эксплуатации крупнейшего в Европе газового месторождения Слохтерен, в 2018 году впервые за десятилетия, экспорт газа в Нидерландах оказался меньше импортируемого. Несмотря на значимость месторождения Слохтерен из-за экологических последствий, точнее землетрясений, происходит плавное уменьшение добычи газа.

[12] Согласно данным Energy balance sheet; supply, transformation and consumption https://opendata.cbs.nl/statline/#/CBS/en/dataset/83140eng/table?ts=1576567617161 (дата обращения: 7.11.2019)

[13]Газпрому везет: Нидерланды сворачивают добычу газа Deutsche Welle, https://is.gd/oSbOBx (дата обращения: 19.10.2019)

ООН уделяет особое внимание возросшим угрозам безопасности КВОИ, возникающим в результате действия террористических организаций. Всего в рамках ООН разработаны 16 конвенций и соглашений и 13 деклараций, направленных против международного терроризма и конкретных видов террористической деятельности[14].

Например, государства-члены ООН в 2006 году приняли глобальную контртеррористическую стратегию, которая представляет собой резолюцию с приложением-планом действий. План посвящен укреплению национальных и международных усилий в сфере борьбы с терроризмом. Ценность данной стратегии состоит в том, что члены ООН договорилось, среди прочего, не содействовать террористическим организациям; сотрудничать в борьбе с терроризмом; создать единую базу данных; сотрудничать с ООН в борьбе с терроризмом в сфере преступлений с использованием интернета; обмениваться имеющейся информацией о террористах и т.д., в связи с этим Совет Безопасности и Генеральная Ассамблея ООН должны разработать принципы сотрудничества; улучшить защиту особо уязвимых объектов (общественных мест, ядерных станций и т.д.)

Резолюция СБ ООН 2341 Угрозы международному миру и безопасности, создаваемые террористическими актами, одобренная 13 февраля 2017 г. стала первым глобальным международным инструментом, полностью посвященным защите критической инфраструктуры от террористических атак[15]. Резолюция содержит призыв к странам-членам, в ней говорится об опасности террористических атак на критические инфраструктуры, а также рассматриваются возможные превентивные меры, которые могут быть разработаны при выработке внешней политики и выстраивании политики национальной безопасности. В Резолюции 2341 (2017)

[14] Иванов С. Международный терроризм: причины его возникновения и меры противодействия 2014 http://factmil.com/publ/voenizirovannye_formirovanija/teroristicheskie_organizacii/mezhdunarodnyj_terrorizm_prichiny_ego_vozniknovenija_i_mery_protivodejstvija_2014/124-1-0-304 (дата обращения: 25.10.2019)

[15] The protection of critical infrastructures against terrorist attacks: Compendium of good practices https://www.un.org/sc/ctc/wp-content/uploads/2019/01/Compendium_of_Good_Practices_Compressed.pdf (дата обращения: 9.10.2019).

отмечается, что государство само определяет, какие объекты инфраструктуры являются критически важными.

О том, что защита КВОИ все чаще оказывается в центре внимания государственных антитеррористических структур, говорят также показатели Global Terrorism Index 2019[16]. По сравнению с показателями 2002 года из всех видов террористических атак нападение на инфраструктурные объекты и сооружения показало наибольший рост по количеству инцидентов, примерно в 14 раз. С 2002 наибольшее количество террористических атак пришлось на период с 2014 по 2015, в тот же период показатель террористических атак на инфраструктурные объекты вырос в 2 и 3 раза по сравнению с аналогичными показателями 2011-2012 и 2012-2013.

Как показывает статистика, в период с 1993 по 2004 год на газовую и нефтяную инфраструктуры было совершено около половины от общего числа атак на КВОИ[17]. Согласно тому же источнику, доля атак на газовые и нефтяные инфраструктуры отличается в зависимости от региона. Например, в Европе и Латинской Америке это показатель выше 50%, тогда как на Ближнем Востоке и в Северной Африке этот показатель достигает отметки в 85%. Во многом это также может быть связано с общим более высоким уровнем развития различных инфраструктур в Европе, также и уровнем противодействия в этом регионе возможным рискам КВОИ.

На основе сопоставления данных Global Terrorism Index 2019[18] и таблицы, созданной на основе информации из Energy Web Atlas[19], заметна корреляция между долей конструируемых от количества планируемых трубопроводов (Energy Web Atlas) и уровнем воздействия терроризма (Global Terrorism Index 2019) (балл

[16] Global Terrorism Index 2019 Measuring The Impact Of Terrorism http://visionofhumanity.org/app/uploads/2019/11/GTI-2019web.pdf (дата обращения: 2.12.2019)
[17] Ackerman G. Assessing Terrorist Motivations for Attacking Critical Infrastructure 2006 https://pdfs.semanticscholar.org/cf85/70d0c66a5e853c440734ab03d10824200537.pdf?_ga=2.104346818.353463146.1576653219-2014614650.1576653219 (дата обращения: 9.10.2019)
[18] Произведен перевод строк таблицы 2.1 с сохранением названий регионов, но с округлением балла; представлены данные на ноябрь 2019 года.
[19] Таблица создана на основе данных из Energy Web Atlas https://www.energywebatlas.com/, представлены данные на январь 2019 года.

рассчитывается на основе общего количества террористических актов, числа умерших, раненых, а также имущественного ущерба; благоприятным считается показатель менее 2)

Таблица 1. Уровень воздействия терроризма

Регион	**Балл**
Южная Азия	4,86
Северная Америка	4,64
Ближний Восток и Северная Африка	4,27
Африка южнее Сахары	2,84
Южная Америка	2,76
Азиатско-тихоокеанский регион	2,13
Россия и Евразия	1,73
Европа	1,6
Центральная Америка и Карибский бассейн	1,02

Таблица 2. Планируемые и конструируемые нефте- и газопроводы по регионам

Регион	Север. Амер.	Европа	СНГ в т.ч. Россия	АТР	Африка	Юж. и Центр. Амер	Ближ. Вост.
Конструируемые	9,542	4,508	13,542	17,398	1,786	3,639	5,81
Планируемые	26,545	5,708	9,841	13,953	18,196	14,751	5,955
Итого	36,087	10,216	22,967	31,351	19,982	18,390	6,536

Балл, показывающий влияние терроризма в регионе Ближнего Востока и Северной Африки с 2002 года вырос более чем в 2 раза, показав наибольший рост среди регионов. По состоянию на 2019 год балл ниже 1, например, в Азиатско-тихоокеанском регионе, Европе, России и Евразии. Подобные данные в связи с таблицей 2 еще раз доказывают, что уровень воздействия террористических атак, а также реализация инфраструктурных проектов, связанных с

углеводородными источниками энергии, имеют прямую пропорциональность.

Форматы сотрудничества

В Национальной антитеррористической стратегии США (US National Security Strategy for Counterterrorism 2018)[20] отмечено, что безопасность критической инфраструктуры США является составной частью процесса защиты родины от террористической угрозы. Отмечено, что большинство объектов критической инфраструктуры являются частной собственностью, а также что, если КВОИ ранее подвергались угрозе физического воздействия, сегодня к этому добавились угрозы, исходящие из киберпространства. Так как инфраструктура взаимосвязана, то повреждение одной из частей инфраструктуры может привести к эффекту домино, когда угрозе будут подвержены другие части целого. Основной метод борьбы с угрозами определен в формате построения тесного сотрудничества и применения инновационных методов защиты.

В ситуации, когда право собственности на значительное число объектов социально-экономической инфраструктуры, которые могут быть отнесены к КВОИ, перешло в от государства в частные руки, центр тяжести в обеспечении безопасности таких объектов объективно сместился от государства в сторону собственников указанных объектов и негосударственных структур правоохранительной направленности.[21] Очевидно, что в случае с КВОИ часто возникает вопрос взаимодействия не только государственного и частного сектора в пределах границ одного государства, но также более комплексная вариация - трансграничное государственно-частное партнерство. Примерами эффективного трансграничного сотрудничества является система, созданная в ЕС, согласно уже упомянутой директиве 2008 года, которая по большей

[20] National Strategy for Counterterrorism of the United States of America , 2018 https://www.dni.gov/files/NCTC/documents/news_documents/NSCT.pdf (вход: 9.09.2019)
[21] Тевикян А. «Современные проблемы обеспечения безопасности критически важных объектов» http://www.noravank.am/upload/pdf /Ashot_Tevikyan_21_VEK_01_2018.pdf (дата обращения: 23.09.2019)

части касается энергетического и транспортного секторов, а также механизм канадско-американского сотрудничества. Эффективность данного формата заключается в тесной взаимозависимости экономик государств ЕС, а также Канады и США. Последнее основывается также на том, что около 90 % населения Канады проживает в пределах 160-км пограничной с США зоны, в которой расположены несколько нефтеперерабатывающих заводов, атомных электростанций и крупных предприятий. Более того, тот факт, что США являются лидерами по суммарной длине существующих трубопроводов[22], а Канада занимает третью строку, (уступая лишь России) опять же говорит о том, что для этих государств вопрос безопасности трубопроводов является одним из приоритетных. Свое сотрудничество Канада и США реализуют при помощи Плана действий для критической инфраструктуры[23], согласно которому осуществляется трансграничное сотрудничество с частным сектором, обмен информацией, управление рисками и осуществляется взаимодействие для обеспечения устойчивости КВОИ и избежания дублирования усилий.

Некоторые причины террористических атак на КВОИ

В «Оценке мотивации террористов при атаке критических инфраструктур»[24] отмечается, что факторы, влияющие на деятельность террористов, могут быть сгруппированы таким образом:

1. Факторы, относящиеся к природе самой группы: идеология, организационная структура, жизненный цикл, демография, ресурсы и возможности.

2. Внешние факторы: исторический контекст, события, отношения с внешними акторами (СМИ, другие организации,

[22] The world factbook. PIPELINES Central Intelligence agency, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields/383.html (дата обращения: 22.11.2019)
[23] Canada-United States Action Plan for Critical Infrastructure 2010 https://www.dhs.gov/xlibrary/assets/ip_canada_us_action_plan.pdf (дата обращения: 22.11.2019)
[24] G. Ackerman Assessing Terrorist Motivations for Attacking Critical Infrastructure 2006, https://pdfs.semanticscholar.org/cf85/70d0c66a5e853c440734ab03d10824200537.pdf?_ga=2.104346818.353463146.1576653219-2014614650.1576653219 (дата обращения: 9.10.2019)

отношения с иными государствами), сфера безопасности и характеристики критической инфраструктуры в качестве объекта.

3. Факторы, влияющие на процесс принятия решений (время, риски, восприятие принимающих решения, методы, используемые при атаках.

К сложному механизму, создающемуся при построении траектории деятельности террористов, добавляется человеческая непредсказуемость и ряд иных факторов, например, уровень информированности.

Одна из причин, что «комфортными целями» террористических организаций из перечня КВОИ являются нефте- и газопроводы, заключается в том, что нарушение функционирования налаженной системы, разрушения ключевых предприятий и т.д., может привести к каскадному эффекту. Суть заключается в масштабности негативного эффекта от данного вида террористического акта, который оказывает особое психологическое воздействие на население. Возвращаясь к первой части статьи, следует отметить, что в этом раскрывается черта, согласно которой цели террористических акций достигаются путем психологического воздействия и выходят за рамки причиняемого им разрушения, само нарушение функционирования инфраструктуры углеводородов не является глубинной целью, в отличие от показательной уязвимости этих объектов. С другой стороны, нарушение функционирования КВОИ имеет еще один психологический эффект, так как показывает невозможность государства обеспечить безопасность, то есть реализовать одну из своих основных функций, которое оно взяло на себя согласно общественному договору.

Для многих террористических организаций компании, которые занимаются добычей, переработкой и распределением углеводородов, олицетворяют несправедливость, и, таким образом, разрушая какой-либо подобный объект террористы, как им кажется, борются за правое дело. Здесь проявляется и еще она черта террористического акта - символизм «жертвы».

Террористическая атака на КВОИ – это наиболее удобный вариант, если есть необходимость причинить максимальный экономический ущерб при минимальных человеческих жертвах. Такой вариант возможен для организаций, которые не всеми рассматриваются в качестве террористической, таким образом, главная идея заключается в том, чтобы нанести урон одной стороне, но в то же время сохранить имидж «гуманной» организации. В последнее время можно условно обозначить еще одну составляющую этого вопроса. Террористические организации стараются извлекать выгоду также и финансовую в случае нападения на КВОИ. Перепродажа углеводородов с подконтрольных территорий также является одной из причин, которая объясняет столь высокий процент атак именно на «инфраструктуру углеводородов».

В заключение следует отметить и роль развития технологий, что оказало влияние и на само развитие терроризма и на выбор в качестве мишеней нефте- и газопроводов. Согласно феномену «Четырех волн терроризма», который сформулировал Дэвид Рапопорт, современный терроризм возник более века назад. Согласно этой теории, которая сформировалась после 11/09, имели место 4 волны современного терроризма - волна анархизма, антиколониальная, новая левая и религиозная. В его работе особо выделяется важность роли культуры или доктрины, а также трансформаций в сфере коммуникаций и транспортных систем, которые влияют на формирование волн. В качестве доктрины, которая сыграла важную роль в становлении первой волны, автор приводит «Катехизис революционера» С. Нечаева, который стал уставом организации «Народная расправа». В период становления первой волны Д. Рапопорт также отмечает, что благодаря выпускам ежедневных газет и развитию железнодорожного сообщения стали возможными распространение идей, миграция, создание общин, которые впоследствии играли немаловажную политическую роль в «новых» государствах, с другой стороны те же общины обеспечивали связь со «старыми».

Во «Введении в международный терроризм»[25] также отмечается, что технологическое развитие сыграло основную роль в подъеме терроризма в конце XX века. С уверенностью можно сказать, что технологическое развитие до сих пор играет одну из ключевых ролей в области обеспечения безопасности КВОИ. Кроме этого, на примере атак на крупнейший в мире завод первичной переработки нефти Абкайк и нефтеперерабатывающий завод на месторождении Хурайс в Саудовской Аравии, которые были осуществлены в сентябре 2019 года, можно увидеть, что с использованием доступных современных технологий в виде нескольких дронов возможно причинение серьезного урона нефтяной инфраструктуре крупнейшей в мире государственной нефтяной компании[26]. Данный случай также показал реальное расширение масштабов воздействия террористов при довольно ограниченных финансовых возможностях. В правильно рассчитанный момент и при отсутствии адекватной оценки ситуации со стороны жертвы и отработанных механизмов отражения атак, можно оказать влияние не только на инфраструктуру государства, на территории которого осуществляется подобный акт, и его соседей, но также и на мировую энергетическую систему.

* * *

В контексте теории «Система трех морей»[27], становится очевидной значимость инфраструктурных путей, в частности транспортно-коммуникационных. Зачастую атаки на нефте- и газопроводы преследуют не столько достижение краткосрочных целей, подрыв поставок, сколько изменение расстановки сил в регионах и мегарегионах, таких как, например, мегарегион «Трех морей», формируемый Черным морем, Средиземным морем и

[25] Counter-Terrorism 1 Introduction to International Terrorism https://www.unodc.org/documents/e4j/18-04932_CT_Mod_01_ebook_FINALpdf.pdf (дата обращения: 10.11.2019)
[26] Two Major Saudi Oil Installations Hit by Drone Strike, and U.S. Blames Iran, New York Times https://www.nytimes.com/2019/09/14/world/middleeast/saudi-arabia-refineries-drone-attack.html (дата обращения: 10.11.2019).
[27] Основные положения опубликованы в статье Regional Security Concepts in the “Three See System”. Hovhannisyan D. Analitical Bulletin. Center for Civilization and Cultural Studies. Yerevan State University, N11, pp.4-17. Yerevan, 2017.

Каспийским морем. Скорее всего, в ближайшие годы идея о том, что потребность в классических энергоносителях уменьшится благодаря развитию альтернативных источников энергии, не будет оправдана в полной мере, и специалистам так или иначе связанным с «инфраструктурой углеводородов» необходимо будет искать все новые методы обеспечения безопасности трубопроводов.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ՝ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻ ԹԻՐԱԽ. ՆԱՎԹԱՄՈՒՂՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԱՄՈՒՂՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Ամփոփում

Անուշ Բրուտյան
ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
anush.brutian@ysu.am

Բանալի բառեր. *ահաբեկչություն, ենթակառուցվածքների կենսական կարևորություն ունեցող օբյեկտներ, գազամուղներ, նավթամուղներ, ածխաջրածինների ենթակառուցվածքներ, գազ, նավթ*

Մեծ ֆրանսիական հեղափոխությունից ի վեր, երբ համաշխարհային բառաֆոնդը համալրվեց ահաբեկչություն բառով, ամբողջապես չի մշակվել այդ և այլ հասկացությունների համար միասնական մոտեցում: Հոդվածում քննարկվում է ահաբեկչության հասկացության հետ առնչվող մի շարք խնդիրներ, ինչպես նաև ենթակառուցվածքների կենսական կարևորություն ունեցող օբյեկտների, դրանց ընկալման և մեկնաբանման գործիքակազմի և ենթակառուցվածքների կենսական կարևորություն ունեցող օբյեկտների պաշտպանության մեթոդներին առնչվող հարցեր: Հոդվածում

ներկայացվում է նաև ածխաջրածնային ենթակառուցվածքների գրավչության գործոնը, որի արդյունքում դրանք հայտնվում են ահաբեկչական կազմակերպությունների թիրախում:

CRITICAL INFRASTRUCTURE OBJECTS AS A TARGET FOR TERRORIST ATTACKS: PIPELINES CASE

Abstract

Brutian Anush
Center for Civilization and Cultural Studies, YSU
anush.brutian@ysu.am

Key words: *terrorism, pipelines, critical infrastructure, gas, oil, hydrocarbon infrastructure.*

Since the French Revolution, the term terror/terrorism has recovered for a wide range of international actors and more than 2 centuries there is no common definition for the terrorism. Among the problems discussed in this article are the issues of defining the terrorism and critical infrastructure, correlation of terrorism and pipelines' construction and the attractiveness and the motives for targeting hydrocarbon infrastructures by terrorist organizations.

ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ»

Անդրանիկ Հարությունյան
ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ասպիրանտ
a.harutyunian@mfa.am

Բանալի բառեր՝ *Հորմուզի նեղուց, «Երեք ծովերի համակարգ», ածխաջրածնային ռեսուրսներ, այլընտրանքային ուղիներ, նավթային խողովակաշարեր, հանգույց*

«Երեք ծովերի համակարգը»[1] ընդգրկում է Միջերկրական, Սև և Կասպից ծովերի ավազանները, ինչպես նաև այն ամենն, ինչը ելք ունի այդտեղ ու տրանսպորտային կոմունիկացիա է (Արաբական ծով, Պարսից ծոց, Սուեզի ջրանցք և այլն): Այն համարվում է ամենահարուստ տարածաշրջանը նավթի և գազի պաշարներով և ունի նավթամուղների ու գազամուղների համակարգի մեծ խտություն: Այս համակարգում կարևորագույն տեղ ունի Պարսից ծոցը, որտեղ կենտրոնացած են համաշխարհային նավթային ռեսուրսների շուրջ 65 %-ը և զգալի քանակությամբ գազի պաշարներ[2]:

Հորմուզի նեղուցը, կապելով Պարսից ծոցը Օմանի ծոցի հետ, ունի կարևորագույն նշանակություն համաշխարհային առևտրի, էներգետիկ անվտանգության, ածխաջրածնային պաշարների

---

[1] Մանրամասն տես՝ Դավիթ Հովհաննիսյան. «Տարածաշրջանային զարգացումներ. «Երեք ծովերի տեսություն», ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր համար 9, Երևան, 2016թ. էջ՝ 8-36:

[2] OPEC share of world crude oil reserves, 2018, https://www.opec.org/opec_web/en/data_graphs/330.htm, (մուտք՝ 04.04.2019):

ծովային տրանսպորտի, համաշխարհային էներգետիկ ռեսուրսների շուկայական գների կայունության մեջ: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հորմուզի նեղուցի հանգուցային նշանակությունը «Երեք ծովերի համակարգում» և քննության առնել այլընտրանքային ուղիները նեղուցի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում:

Հորմուզի նեղուցի հաղորդակցային նշանակությունը

Հորմուզի նեղուցը ջրային միակ ուղին է, որը կապում է Պարսից ծոցը արտաքին աշխարհի հետ: Բոլոր նավերն ու նավթային տանկերները անցնում են Հորմուզի նեղուցով՝ փոխադրելու նավթը, նավթամթերքները և բնական գազը Պարսից ծոցի նավահանգիստներից: Նավթի և նավթամթերքի փոխադրումը նեղուցով 2018թ.-ին կազմել է 21 մլն տակառ/օր, որը ռեկորդային ցուցանիշ է համարվում, և կազմում է համաշխարհային նավթի առևտրի 21 %-ը, իսկ ծովային տրանսպորտի առևտրի՝ 35 %-ը:[3] Հորմուզի նեղուցով է անցնում նաև գազի համաշխարհային պաշարների 30 %-ը, որի գերակշիռ մասը արտահանում է գազի համաշխարհային ամենամեծ պաշարներ ունեցող պետություններից Կատարը[4]:

Նեղուցի ընդհանուր երկարությունը 180 կմ է, որի ամենանեղ հատվածը կազմում է 45 կմ: Այն պարունակում է մեծ նավերի համար նավագնացության երկու ծովուղի, որոնցից յուրաքանչյուրի լայնությունը 3.2 կմ է, և որոնք միմյանցից առանձնացված են 3.2 կմ լայնությամբ բուֆերային գոտիով:

[3] The Strait of Hormuz is the world's most important oil transit chokepoint, https://www.eia.gov/todayinenergy/detail.php?id=39932, (մուտք՝ 04.04.2019):
[4] Минэнерго США: альтернатив Ормузскому проливу почти нет, http://www.profinance.ru/news/2019/06/25/bt8m-minenergo-ssha-alternativ-ormuzskomu-prolivu-pochti-net.html, (մուտք՝ 04.04.2019):

Հորմուզի նեղուցի ջրերը ողողում են Իրանի, Օմանի (Մուսանդամ թերակղզի) և ԱՄԷ-ի ափերը: Հարկ ենք համարում ընդգծել, որ Իրանի վերահսկողության տակ են գտնվում նեղուցի մոտակայքում գտնվող մի շարք կղզիներ, որը հնարավորություն է տալիս Իրանին որոշակի ազդեցություն ունենալ և լուրջ դերակատարություն ստանձնել Հորմուզի նեղուցի շահագործման անվտանգության հարցում: Ի հավելումն վերոհիշյալի՝ նավագնացության համար նախատեսված նեղուցի հյուսիսային մասը Իրանի ափերից մի քանի կիլոմետր հեռավորության վրա է գտնվում[5]:

Պետք է նշել նաև, որ նեղուցի՝ համաշխարհային ածխաջրածնային ռեսուրսների տրանսպորտի մեջ կարևորագույն նշանակության հետ մեկտեղ այն կենսական նշանակություն ունի ծոցի երկրների համար բազմաթիվ ապրանքատեսակներ ներկրելու գործում:

Հորմուզի նեղուցի շուրջ ուժերի դասավորվածությունը

Հորմուզի նեղուցի շուրջ տարածաշրջանային ուժերից ամենամեծ ներկայությունն ունի Իրանի Իսլամական Հանրապետությունը: Պարսից և Օմանի ծոցերում են գտնվում Իրանի երկու նավատորմերը, որոնցից մեկը պատկանում է Իրանի կանոնավոր բանակին, իսկ մյուսը՝ Իրանի իսլամական հեղափոխության պահպանության կորպուսին[6]: 2007թ.-ին տեղի ունեցած Իրանի ռազմածովային ուժերի վերակազմակերպման արդյունքում երկու նավատորմերի գործունեության արեալը

[5] Talmadge C., ''Closing time: Assessing the Iranian Threat to the Strait of Hormuz", 2008, International Security Journal, p. 86.

[6] Իրանի զինված ուժերի ճյուղ, որը ենթարկվում է անմիջապես հոգևոր առաջնորդին և պատասխանատու է երկրում իսլամական կարգերի պահպանման և օտարերկրյա միջամտությունների դիմագրավման համար:

հստակ սահմանվեց. կանոնավոր բանակի նավատորմը գործելու է Պարսից ծոցից դուրս, իսկ հեղափոխության պահպանության կորպուսի նավատորմը՝ Պարսից ծոցում[7]: Հատկանշական է, որ երկու նավատորմերի գործունեության բաժանման գիծը անցնում է Հորմուզի նեղուցով, և յուրաքանչյուրի հրամանատարական կազմը տեղակայված է նեղուցի հյուսիսային ափին գտնվող Բանդար Աբբաս քաղաքում: Իրանը իր ռազմական ներկայությունն է ապահովել Հորմուզի նեղուցի հարակից մի շարք կղզիներում, որոնց թվում են Աբու Մուսան, Լարակը և Սիրին: Ի հավելումն վերոհիշյալի՝ Իրանը վերահսկում է նաև նեղուցի մոտ գտնվող Քեշմ կղզին, որը համարվում է նեղուցի հարակից ամենախիտ բնակեցված կղզին[8]:

Պարսից ծոցի արաբական միապետությունները ռազմական առումով չեն կարող մրցակցել Իրանի ռազմական ուժերի հետ, ուստի վերոհիշյալ պետությունները անվտանգության և պաշտպանության հարցում ապավինում են արտաքին ուժերի՝ առաջին հերթին ԱՄՆ-ի աջակցությանը:

Պարսից ծոցում է գտնվում ամերիկյան 5-րդ նավատորմը, որը տեղակայված է Բահրեյնում: Վերջինիս հիմնական առաքելությունը համարվում է Պարսից, Օմանի և Ադենի ծոցերի, Կարմիր և Արաբական ծովերի անվտանգությունը, որտեղ գտնվում են ռազմավարական համաշխարհային նշանակություն ունեցող Հորմուզի, Բաբ էլ Մանդեբի նեղուցները և Սուեզի ջրանցքը[9]: Բացի 5-րդ նավատորմից՝ ԱՄՆ-ն ռազմական միավորներ ունի նաև Պարսից ծոցի այլ արաբական երկրներում,

[7] Gulf III: Iran's Power in the Sea Lanes, http://iranprimer.usip.org/blog/2013/mar/12/gulf-iii-iran%E2%80%99s-power-sea-lanes, (մուտք՝ 04.04.2019):
[8] Նույն տեղում:
[9] Commander, Naval Forces Central Command. "U.S. 5th Fleet." http://www.public.navy.mil/surfor/pages/FifthFleet.aspx, (մուտք՝ 04.04.2019):

մասնավորապես՝ օդային ռազմաբազա Կատարում (ալ-Ուդեյդ), որը համարվում է ամերիկյան ամենամեծ ռազմաբազան Մերձավոր Արևելքում[10], ցամաքային ուժեր Քուվեյթում, ԱՄԷ-ում՝ օդային ռազմաբազա (ալ-Դաֆրա), ռազմածովային բազա (Ֆուջեյրա), որն ունի ռազմավարական մեծ նշանակություն Հորմուզի նեղուցի անվտանգության համատեքստում: Սաուդյան Արաբիայում ԱՄՆ-ն չունի ռազմական մշտական ներկայություն 2003թ.-ից ի վեր, երբ վերջինս դուրսբերեց իր ռազմական ուժերն այնտեղից: Այնուամենայնիվ, ամերիկացի ռազմական մասնագետներն իրականացնում են սաուդյան զինված ուժերի զորավարժություններ և հիմնականում տեղակայված են էր Ռիադից ոչ հեռու գտնվող օդային ռազմաբազայում[11]: Օմանի հետ կնքված երկկողմ պայմանագրի շրջանակներում ԱՄՆ-ն իրավունք է ձեռքբերել օգտագործելու Օմանի ռազմաբազաները հատուկ նպատակի իրագործման համար[12]:

Իրանի բարձրաստիճան ղեկավարների կողմից հնչող սպառնալիքներին ու զորավարժություններին ի պատասխան՝ ԱՄՆ-ն մշտապես հանդես է գալիս Պարսից ծոցում անվտանգությունը և Հորմուզի նեղուցում նավարկությունը և համաշխարհային առևտրի անխափան շրջանառությունը պահպանելու հայտարարություններով[13]: Ըստ ԱՄՆ-ի՝ Հորմուզի նեղուցը չի պատկանում ամբողջությամբ Իրանին, այլ միջազգային ջրային ուղիների իրավունքի համաձայն համարվում է ազատ տարանցման

[10] Wallin M., “U.S. Military Bases and Facilities in the Middle East”, American Security Project, 2018, p.7

[11] Նույն տեղում, էջ՝ 8:

[12] U.S. Department of State. “U.S. Relations with Oman.” Jan. 9, 2017. https://www.state.gov/r/pa/ei/bgn/35834.htm, (մուտք՝ 04.04.2019):

[13] Iran threatens to block Strait of Hormuz over US oil sanctions, https://www.theguardian.com/world/2018/jul/05/iran-retaliate-us-oil-threats-eu-visit-hassan-rouhani-trump, (մուտք՝ 04.04.2019):

գոտի[14]: Վերոհիշյալ սպառնալիքների համատեքստում 2018թ.-ի դեկտեմբերին ամերիկյան ավիակիրը մուտք գործեց Պարսից ծոց, ուր տևական ժամանակ բացակայում էր[15]:

Հորմուզի նեղուցի հետ կապված պատմական զարգացումները

Հաշվի առնելով Հորմուզի նեղուցի աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակությունը՝ պամության ընթացքում այն եղել է առափնյա երկրների և օտար ուժերի կողմից վերահսկողություն հաստատելու թատերաբեմ: 1515թ. պորտուգալացիների կողմից Հորմուզի թագավորությունը գրավելով՝ նեղուցի վերահսկողությունը 1 դար մնաց պորտուգալացիների տիրապետության տակ, ինչը հնարավորություն տվեց Պորտուգալիային վերահսկողություն հաստատելու Եվրոպայի և Հնդկաստանի միջև ընթացող առևտրային ճանապարհի վրա[16]: Պորտուգալական վերահսկողությանը հաջորդեց բրիտանական վերահսկողությունը, որը տևեց մինչև 20-րդ դար: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո նեղուցի վերահսկողության համար պայքար սկսվեց ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև[17]:

Մեծ Բրիտանիայի զորքերի՝ Պարսից ծոցից դուրսբերումը հանգեցրեց տարածաշրջանի երկրների կողմից նեղուցի շրջանում իրենց վերահսկողությունը հաստատելուն ուղղված քայլերի: Այս

[14] К чему приведет блокировка Ираном Ормузского пролива, https://vz.ru/world/2018/9/26/389402.html, (մուտք՝ 04.04.2019):
[15] US Aircraft Carrier Enters Persian Gulf After Long Absence, https://www.voanews.com/a/ us-aircraft-carrier-enters-persian-gulf-after-long-absence/4711289.html, (մուտք՝ 04.04.2019):
[16] Shuang Wen, The Strait of Hormuz: A barometer in the Emerging US-Gluf-China Triangular Relationship, 2010, Washington, p.2.
[17] Ramazani K., “The Persian Gulf and the Strait of Hormuz”, 1980 pp. 24-25.

գործընթացը ցայտուն կերպով արտահայտվեց Իրանի կողմից նեղուցի հարակից երեք կղզիներում՝ Աբու Մուսա, Մեծ Թոմբ և Փոքր Թոմբ, վերահսկողություն հաստատելով, որի իրավասության դեմ հանդես եկավ ԱՄԷ-ն՝ հայտարարելով վերոհիշյալ կղզիները ԱՄԷ-ի անբաժանելի մաս[18]: Իր հերթին Իրանի արտաքին գործերի նախարարը 1995թ. երեք կղզիները հայտարարեց Իրանի անբաժանելի մաս[19]: Վերոհիշյալ երեք կղզիներն ունեն աշխարհաքաղաքական և ռազմավարական մեծ նշանակություն Հորմուզի նեղուցի նավագնացության անվտանգության և վերահսկողության համատեքստում[20]:

Հաշվի առնելով Հորմուզի նեղուցի ռազմավարական, հաղորդակցային նշանակությունը համաշխարհային ածխաջրածնային առևտրի համատեքստում՝ Իրանը մշտապես փորձել է օգտագործել նեղուցին սահմանակից լինելու և մի շարք ռազմավարական նշանակության կղզիներ վերահսկելու հանգամանքը՝ բարձրաստիճան պետական պաշտոնյաների մակարդակով հանդես գալով նեղուցը փակելուն ուղղված ուղիղ և քողարկված հայտարարություններով: Հորմուզի նեղուցի շուրջ զարգացումները թեժացան 2011-2012թթ-ին, երբ Իրանը հանդես եկավ Հորմուզի նեղուցը փակելու սպառնալիքով[21]: Այս սպառնալիքները կապված էին ԵՄ-ի կողմից Իրանի հանդեպ նոր պատժամիջոցների սահմանման հետ, որը արգելում էր Իրանի

---

[18] علي ناصر ناصر، "مضيق هرمز والصراع الإيراني الأمريكي"، بيروت، 2013 (մուտք՝ 04.04.2019):

[19] Cordesman A., “Iran, Oil and the Strait of Hormuz”, Center for Strategic and International Studies Arleigh A. Burke Chair in Strategy, Washington, 2007, p.3.

[20] Ասվածը հատկապես վերաբերում է Աբու Մուսա կղզուն, որի մոտով է անցնում նեղուցի նավթային ծովուղիներից մեկը:

[21] Iran threatens to block Strait of Hormuz oil route, https://www.bbc.com/news/world-middle-east-16344102, (մուտք՝ 04.02.2019):

նավթի արտահանումը Եվրոպա[22]: Նման սպառնալիքներին ի պատասխան՝ ամերիկյան, բրիտանական և ֆրանսիական միացյալ ուժերի նավատորմը մուտք գործեց Պարսից ծոց՝ կանխելու նեղուցի փակման հնարավոր փորձերը: Իրանական սպառնալիքները, նեղուցի շուրջ ռազմածովային զորավարժություններն իրենց ազդեցությունն ունեցան նավթի համաշխարհային գների թանկացման վրա:

Իրանի կողմից Հորմուզի նեղուցը փակելու նոր սպառնալիքների առիթ դարձավ ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի կողմից 2018թ. մարտի 8-ին ընդունած որոշումը, որով ԱՄՆ-ն դուրս եկավ Իրանի և Վեցնյակի (ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ և Գերմանիա) միջև 2015թ. կնքված միջուկային համաձայնագրից: ԱՄՆ-ի՝ վերոհիշյալ համաձայնագրից դուրս գալը ուղեկցվեց վերջինիս կողմից մինչմիջուկային համաձայնագրի պատժամիջոցների վերասահմանմամբ, որոնք վերաբերում են Իրանի նավթային, բանկային և առևտրի ոլորտներին[23]: Այս որոշմանն ի պատասխան՝ Իրանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ հանդես եկան նեղուցը փակելու սպառնալիքներով: Նոր պատժամիջոցների ուժի մեջ մտնելուց հետո Իրանի նախագահ Հասան Ռուհանին հանդես եկավ Հորմուզի նեղուցը արգելափակելու հայտարարությամբ. «Եթե ԱՄՆ-ն խոչընդոտի Իրանի կողմից նավթի արտահանումը, ապա Իրանը կարգելափակի Պարսից ծոցից դուրս եկող ամբողջ նավթի

[22] The European Union and Iran, http://europa.eu/rapid/press-release_PRES-12-15_en.htm, (մուտք՝ 04.04.2019):

[23] Trump re-imposes Iran sanctions: Now what?, https://www.bbc.com/news/world-middle-east-46075179, (մուտք՝ 08.02.2019):

արտահանումը»[24]: Նման հայտարարություններին հաջորդեցին Իրանի՝ հեղափոխության պահպանության կորպուսի կողմից 2018թ. օգոստոսին կազմակերպած իրանական նավատորմի զորավարժությունները Հորմուզի նեղուցի հարակից շրջաններում, որին մասնակցեցին հարյուրավոր ռազմանավեր[25]: Հարկ ենք համարում ընդգծել, որ նման զորավարժությունները սովորաբար տեղի են ունենում յուրաքանչյուր տարվա վերջին: Ի հավելումն վերջինիս և ի պատասխան ամերիկյան ավիակրի՝ Պարսից ծոց մուտք գործելուն՝ հեղափոխության պահպանության կորպուսը 2018թ.-ի դեկտեմբերին իրականացրեց նոր զորավարժություններ նեղուցի հարակից Քեշմ կղզում[26]: Զորավարժությունների իրականացումը Հորմուզի նեղուցի շրջակայքում ինքնին հստակ ուղերձ է ուղղված Իրանի դեմ հանդես եկող պետություններին (առաջին հերթին ԱՄՆ-ին): Այն նաև առիթ է տվյալ գոտիում կենտրոնացնելու մեծ թվով զինված ուժեր:

Վերջերս Դոնալդ Թրամփի նոր որոշումը՝ չերկարացնելու նախորդ պատժամիջոցների համատեքստում Իրանից նավթամթերք գնելու արտոնությունը մի քանի երկրների (Չինաստան, Հնդկաստան, Հարավային Կորեա, Թուրքիա, Ճապոնիա) համար, որոնք Իրանից գնում են 1 մլն տակառ/օր

[24] Iran's President Threatens To Close Strait Of Hormuz If U.S. Blocks Oil Exports, https://www.rferl.org/a/iran-s-president-threatens-to-close-strait-of-hormuz-if-u-s-blocks-oil-exports/29636728.html, (մուտք՝ 04.04.2019):

[25] Iran says it held military exercises in Strait of Hormuz, https://edition.cnn.com/2018/08/05/middleeast/iran-military-exercise-strait-of-hormuz/index.html, (մուտք՝ 04.04.2019):

[26] Iran Conducts Military Drills Near Strait of Hormuz, https://www.thetrumpet.com/18348-iran-conducts-military-drills-near-strait-of-hormuz, (մուտք՝ 04.04.2019):

նավթ, [27] նոր պատճառ հանդիսացավ Իրանի կողմից սպառնալիքների և նեղուցի շրջակայքում զորավարժությունների անցկացման համար: 2019թ.-ի ապրիլի 30-ին իրանական նավատորմի ղեկավարը հայտարարեց նաև իրանա-ռուսական համատեղ զորավարժություններ անցկացնելու մասին, որը տեղի կունենա Հորմուզի նեղուցում[28]:

Այլընտրանքային ուղիները

Իրանի կողմից պարբերաբար հնչող սպառնալից հայտարարությունները իրանա-ամերիկյան հարաբերությունների լարվածության թեժացման տարբեր փուլերում, ռազմական որևէ ընդհարումների դեպքում ածխաջրածնային ռեսուրսների ծովային տրանսպորտի հնարավոր խցանումը, դրանից բխող համաշխարհային շուկայում նավթի ու գազի գների մեծ տատանումների վտանգը ստիպեցին Պարսից ծոցի երկրներին մտածել Հորմուզի նեղուցին այլընտրանք հադիսացող երթուղիների կառուցման մասին, որն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական ահռելի նշանակություն թե՛ տարածաշրջանի երկրների և թե՛ միջազգային խաղացողների համար: Հարկ ենք համարում նշել, որ այլընտրանքային ուղիների կառուցմանը մեծ նշանակություն է տրվում ինչպես Պարսից ծոցի արաբական երկրների, այնպես էլ Իրանի կողմից:

Նեղուցի այլընտրանքային ուղիները կարելի է բաժանել հետևյալ մասերի՝ գործող, կառուցված և հնարավոր ուղիներ:

---

[27] U.S. Moves to Stop All Nations From Buying Iranian Oil, but China Is Defiant, https://www.nytimes.com/2019/04/22/world/middleeast/us-iran-oil-sanctions-.html, (մուտք՝ 04.04.2019):

[28] Russia and Iran prepare for joint military exercises in the Strait of Hormuz, http://www.uawire.org/russia-and-iran-prepare-for-military-exercises-in-the-strait-of-hormuz, (մուտք՝ 04.04.2019):

Գործող այլընտրանքային ուղիներ

Աբու Դաբի ոչ մաքրազտված նավթային խողովակաշար

Գործող երթուղիներից է համարվում ԱՄԷ-ում գտնվող Աբու Դաբի-Ֆուջեյրա խողովակաշարային նավթային երթուղին, որը հայտնի է Աբու Դաբի ոչ մաքրազտված նավթային խողովակաշար անունով: Այս խողովակաշարի միջոցով ԱՄԷ-ն իրականացնում է նավթով հարուստ Աբու Դաբի էմիրությունից նավթի արտահանումը՝ շրջանցելով Հորմուզի նեղուցը: Այսպիսով՝ ԱՄԷ-ն նվազեցրել է Հորմուզի նեղուցով անցնող նավարկությունը և ընդլայնել ԱՄԷ-ի արևելյան ծովափից արտահանման ծավալը: Ներկայումս այս խողովակաշարով անցնում է 1.5 միլիոն տակառ/օր նավթ, որը կազմում է ԱՄԷ-ի օրական ընդհանուր նավթի արտահանման կեսը[29]: Խողովակաշարի տարողունակությունը կարող է հասնել մինչև 1.8 միլիոն տակառ/օր, որը կկազմի ԱՄԷ-ի նավթի օրական արտահանման 2/3-ը[30]:

Հատկանշական է, որ խողովակաշարի կառուցումը իրականացրել է չինական ընկերությունը, որը խոսում է Չինաստանի՝ էմիրաթական նավթի անվտանգ արտահանման շահագրգռվածության մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄԷ-ն համարվում է Չինաստան նավթի մատակարարման երկրներից մեկը[31]:

Սաուդյան Արաբիայի Արևելք-Արևմուտք խողովակաշար

Սաուդյան Արաբիայի Արևելք-Արևմուտք խողովակաշարը կապում է Սաուդյան Արաբիայի արևելյան հատվածը[32] Կարմիր

[29] Abu Dhabi Crude Oil Pipeline Project, https://www.uae-embassy.org/news-media/abu-dhabi-crude-oil-pipeline-project, (մուտք՝ 04.04.2019):
[30] Նույն տեղում:
[31] United Arab Emirates Crude Oil: Exports, https://www.ceicdata.com/en/indicator/united-arab-emirates/crude-oil-exports, (մուտք՝ 04.04.2019):
[32] Այստեղ են կենտրոնացած Սաուդյան Արաբիայի ածխաջրածնային ռեսուրսների հիմնական մասը:

ծովի հետ, որտեղ գտնվում է Յանբու նավահանգիստը: Այն բաղկացած է երկու հատվածից, որոնցից մեկը սկզբնապես օգտագործվում էր գազի փոխադրման համար, ապա փոխարինվեց նավթային երթուղու: Արևելք-Արևմուտք խողովակաշարի տարողունակությունը գնահատվում է 5 միլիոն տակառ/օր, որը սաուդյան Արամկո ընկերությունը պլանավորում է հասցնել մինչև 7 միլիոն տակառ/օր [33] : Այն միտված է ամբողջապես ապահովելու Սաուդյան Արաբիայի նավթի արտահանումը Հորմուզի նեղուցի շուրջ ֆորսմաժորային իրավիճակների դեպքում: Արևելք-Արևմուտք խողովակաշարը մեծ կարևորություն ունի ոչ միայն Հորմուզի, այլ նաև Բաբ Ալ-Մանդեբի նեղուցը շրջանցելու համար, քանի որ վերջինիս նավարկության անվտանգությունը նույնպես կարող է խաթարվել՝ հաշվի առնելով առափնյա երկրների ներքաղաքական իրավիճակը (Եմեն) և միմյանց միջև առկա տարածքային վեճերը (Ջիբութի և Էրիթրեա)[34]:

Քիրքուք-Ջեյհան նավթային խողովակաշար

Քիրքուք-Ջեյհան խողովակաշարը, որը հայտնի է նաև Իրաք-Թուրքիա ոչ մաքրազտված նավթի խողովակաշար անվամբ, Իրաքի հյուսիսային շրջանում գտնվող նավթահորերից ադյունահանվող նավթի արտահանման ուղին է դեպի Միջերկրական ծովում գտնվող թուրքական նավահանգիստ: Այն բաղկացած է երկու խողովակաշարից և ունի 1.5 միլիոն

[33] Country Analysis Brief: Saudi Arabia, U.S. Energy Information Administration, 2017, p.10.
[34] Մանրամասն տե՛ս՝ Հայկ Քոչարյան. «Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի նշանակությունը Երեք ծովերի համակարգում», ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր համար 9, Երևան, 2016թ.:

տակառ/օր տարողունակություն[35]: 1990թ.-ից ի վեր Քիրքուք-Ջեյհան խողովակաշարը պատերազմների, Իրաքի վրա սահմանված տնտեսական պատժամիջոցների և տարբեր խմբավորումների կողմից հարձակումների ենթարկվելու պատճառով կանոնավոր չի գործել: 2014թ.-ին Իսլամական պետության կողմից հարձակումների ենթարկվելուց և վերջինիս կողմից Իրաքի հյուսիսային մասում վերահսկողություն սահմանելուց հետո խողովակաշարի իրաքյան հատվածը փակվեց: Այս պայմաններում Իրաքյան Քուրդիստանը կառուցեց առանձին խողովակաշար, որը անցնում էր իր վերահսկողության տակ գտնվող տարածքներով՝ այսպիսով ապահովելով նավթի անվտանգ փոխադրումը մինչև Քիրքուք-Ջեյհան խողովակաշարի թուրքական հատված: 2018թ.-ի վերջին Իրաքյան Քուրդիստանը Քուրդիստան-Ջեյհան խողովակաշարի տարողունակությունը հասցրեց 1 միլիոն տակառ/օրի[36]:

Իրաքը Իսլամական պետությանը պարտության մատնելուց հետո 2018թ.-ի նոյեմբերից սկսեց վերագործարկել Քիրքուք-Ջեյհան խողովակաշարը, որը 2018թ.-ի վերջին կազմում էր 80000-90000 տակառ/օր ծավալ[37]: Կարևոր է նշել, որ այս ծավալը պայմանավորված է նաև այն պատճառով, որ Իրաքի հյուսիսային շրջանների նավթը հիմնականում ենթարկվում է վերամշակման[38]: Հետևապես՝ Իրաքի նավթի արտահանման գլխավոր ճանապարհը շարունակում է մնալ Պարսից ծոցը,

[35] Country Analysis Brief: Iraq, U.S. Energy Information Administration, 2016, p. 7.
[36] Iraq's Kurds add capacity to oil pipeline to export Kirkuk crude, http://www.mining.com/web/iraqs-kurds-add-capacity-oil-pipeline-export-kirkuk-crude/, (մուտք՝ 04.04.2019):
[37] Turkey seeks renewal of Kirkuk-Ceyhan pipeline: Ambassador Yildiz, http://www.rudaw.net/english/middleeast/iraq/110120191, (մուտք՝ 04.04.2019):
[38] Iraq's Kirkuk oil exports to stay restricted, https://www.reuters.com/article/us-iraq-oil/iraqs-kirkuk-oil-exports-to-stay-restricted-idUSKCN1OP0GN, (մուտք՝ 04.04.2019):

որտեղով Իրաքից արտահանվող նավթի ծավալները ռեկորդային էին 2018թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ հասնելով 3.6 միլիոն տակառ/օրի[39]: Վերջինս կապված է նաև Իրաքի նավթի արտահանման շուկայի հետ, որի գերակշիռ մասը գտնվում է Ասիայում[40]:

Կառուցված ուղիներ

Համաարաբական խողովակաշար

Համաարաբական խողովակաշարը, որը ձգվում է Սաուդյան Արաբիայի ալ-Դամմամ քաղաքից մինչև Լիբանանի Սիդոն քաղաք, սկսել է օգտագործվել 1950թ.-ից և համարվում էր այդ ժամանակվա նավթային ամենամեծ խողովակաշարը[41]: Այն անցնում է Սաուդյան Արաբիայով, Հորդանանով, Սիրիայով և Լիբանանով: Խողովակաշարը կապում էր Պարսից ծոցը Միջերկրական ծովի հետ և համարվում էր ավելի էժան նավթային երթուղի դեպի Եվրոպա և ԱՄՆ[42]: Այն կառուցվել է ամերիկյան Արամկո ընկերության կողմից, որը այդ ժամանակ Սաուդյան Արաբիայի հետ միասին տնօրինում էր վերջինիս նավթային սեկտորը: Անցնելով չորս արաբական պետությունների միջով՝ խողովակաշարը պարբերաբար դադարել է օգտագործվել՝ կապված տարածաշրջանի ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ: Ի վերջո այն

[39] Iraq Oil Exports From South Close To Record-High, https://oilprice.com/Latest-Energy-News/World-News/Iraq-Oil-Exports-From-South-Close-To-Record-High.html, (մուտք՝ 04.04.2019):
[40] Iraq, Executive Summary, Overview, Energy Information, Administration, 2019, https://www.eia.gov/beta/international/analysis.php?iso=IRQ, (մուտք՝ 04.04.2019):
[41] Սկզբնապես խողովակաշարի հզորությունը 300000 տակառ/օր էր, որը հասավ 500000 տակառ/օր:
[42] Trans-Arabian Pipeline, https://www.encyclopedia.com/humanities/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/trans-arabian-pipeline, (մուտք՝ 04.04.2019):

դադարել է օգտագործվել 1990թ.-ից ի վեր Հորդանանի՝ իրաքյան ագրեսիայի ժամանակ ցուցաբերած դիրքորոշման պատճառով[43]: Ներկայումս Համաարաբական խողովակաշարի վերականգնումը և վերակառուցումը քննարկվում է առավելապես Հորդանանի կողմից, որը դիտարկում է այն որպես ներքին էներգիայի աճող պահանջարկի բավարարման միջոց[44]:

Սաուդյան Արաբիայում իրաքյան խողովակաշար

Սաուդյան Արաբիայում իրաքյան խողովակաշարը կառուցվել է 1980-ական թթ.-ին իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ: Այն միտված էր դիվերսիֆիկացնելու նավթի արտահանման ուղիները Պարսից ծոցում ընթացող տանկերների պատերազմի ժամանակ և ունի 1.65 միլիոն տակառ/օր տարողունակություն: 1990թ.-ի Քուվեյթի նկատմամբ իրաքյան ագրեսիայից հետո իրաքյան նավթը դադարել է փոխադրվել այս խողովակաշարով: 2001թ.-ին Սաուդյան Արաբիան սեփականաշնորհեց վերջինս Իրաքի պարտքերի փոխհատուցման դիմաց: Սաուդյան Արաբիան սկսեց օգտագործել այն որպես գազատար խողովակաշար՝ երկրի արևելյան հատվածից գազը արևմտյան հատվածում գտնվող էլեկտրակայաններ տեղափոխելու համար: 2012թ.-ին Իրանի կողմից Հորմուզի նեղուցը փակելու մասին արված հայտարարություններից հետո Սաուդյան Արաբիան փորձարկեց իրաքյան խողովակաշարը սաուդական ոչ մաքրազտված նավթի փոխադրման համար [45] : Վերջին ժամանակներում սաուդա-

[43] Հորդանանը չմիացավ հակաիրաքյան կոալիցիային՝ազատագրելու Քուվեյթի Պետությունը:
[44] Analysis: Oil and Gas Pipelines in the Middle East (Exclusive), https://southfront.org/analysis-oil-gas-pipelines-middle-east/, (մուտք՝ 04.04.2019):
[45] Middle East Economic Survey, "Iraq hopes for IPSA access with Saudi opening," (Volume 60, Issue 35), September 1, 2017.

իրաքյան հարաբերությունների համեմատաբար բարելավման պայմաններում խոսվում է նաև իրաքյան խողովակաշարը Իրաքի կողմից վերագործարկելու հնարավորության մասին[46]:

Հնարավոր ուղիներ

Անդրադառնալով Հորմուզի նեղուցի այլընտրանքային գործող ուղիներին՝ կարող ենք նկատել, որ վերոհիշյալ ուղիները թե՛ հզորությամբ, թե՛ գործող տարողունակությամբ չեն բավարարում Պարսից ծոցի ածխաջրածնային պաշարների արտահանման պահանջներին: Ուստի տարածաշրջանային պետությունները, ինչպես նաև միջազգային խաղացողները դիտարկում են մի քանի այլընտրանքային ուղիներ, որոնց ծրագրերի իրականացումը մեծ ազդեցություն կունենա Հորմուզի նեղուցի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Դիտարկենք առավել հավանական ուղիներից մի քանիսը:

Օման

Օմանի Սուլթանությունն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ կարևոր դերակատարություն կարող է ունենալ Պարսից ծոցի արաբական երկրներից ածխաջրածնային ռեսուրսների արտահանման գործում, որի երթուղին կարող է շրջանցել Հորմուզի նեղուցը: Օմանը գտնվում է Պարսից ծոցի հարավ-արևմտյան մասում՝ Հորմուզի նեղուցից հարավ:

2019թ.-ի հունվարին Սաուդյան Արաբիայի էներգիայի նախարար Խալիդ ալ-Ֆալիհը հայտարարեց, որ Սաուդյան Արաբիան մտադիր է գազային խողովակաշարով իրար կապել Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Օմանը, որի նպատակն է

[46] Iraq wants to reopen old Saudi pipeline: Ex-minister, https://www.oilandgasmiddleeast.com/article-17679-iraq-wants-to-reopen-old-saudi-pipeline-ex-minister, (մուտք՝ 04.04.2019):

ապահովել ինչպես գազի փոխանակումը վերոհիշյալ պետությունների միջև, այնպես էլ արտահանումը այլ երկրներ[47]: Միևնույն ժամանակ Օմանը Իրանի հետ համաձայնության է եկել Օման-Իրան գազային խողովակաշարի կառուցման հարցի շուրջ, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2020թ.-ին[48]: Օման-Իրան գազային խողովակաշարը միտված է ինչպես դիվերսիֆիկացնելու Օմանի գազի աղբյուրները և բավարարելու էներգիայի ներքին աճող պահանջարկը, այնպես էլ ապահովելու իրանական գազի արտահանումը դեպի Արևելյան Ասիա[49]: Նախագծի կյանքի կոչումը բարդացել է Իրանի նկատմամբ նոր ամերիկյան պատժամիջոցների հետ կապված, որը, թեև, ինչպես պաշտոնապես նշվել է, վերաբերում է Իրանի նավթային սեկտորին[50] և չի անդրադառնում գազի արտահանմանը, այնուամենայնիվ Իրան-Օման գազային խողովակաշարի կառուցման աշխատանքներին միջազգային կազմակերպությունների ներգրավումը ամերիկյան պատժամիջոցների տակ հայտնվելու լուրջ սպառնալիք ունի:

Ընդհանրապես Օմանի չեզոք քաղաքականությունը տարածաշրջանում և միջազգային ասպարեզում հնարավորություն է ընձեռում տարբեր նախագծերի իրականացումը, որի ապացույց կարելի է համարել նաև

[47] Saudi Arabia plans regional gas grid to connect with UAE, Oman, Kuwait, https://gulfnews.com/business/energy/saudi-arabia-plans-regional-gas-grid-to-connect-with-uae-oman-kuwait-1.1547540613190, (մուտք՝ 04.04.2019):
[48] Iran Ready to Develop Onshore Section of Gas Pipeline to Oman, https://financialtribune.com/articles/energy/80050/iran-ready-to-develop-onshore-section-of-gas-pipeline-to-oman, (մուտք՝ 04.04.2019):
[49] Key role seen for Oman in Iran-India gas pipeline, https://neftegaz.ru/en/news/Transportation-and-storage/408384-key-role-seen-for-oman-in-iran-india-gas-pipeline/, (մուտք՝ 04.04.2019):
[50] Briefing on Iran Sanctions, https://www.state.gov/secretary/remarks/2018/11/287090.htm, (մուտք՝ 04.04.2019):

վերոհիշյալ նախագծերի քննարկումը: Այս համատեքստում Օմանը ձգտում է դառնալ անվտանգ առևտրային հանգույց Արևելքի և Արևմուտքի միջև: Հատկանշական է, որ Օմանը շարունակում է նոր նավահանգիստների կառուցման և զարգացման, ինչպես նաև ենթակառուցվածքների (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային ճանապարհների) բարեկարգման քաղաքականությունը: Այս համատեքստում կարելի է նշել Սալալահի, Սոհարի և Դուքմի նավահանգիստները, որոնք կարող են մոտ ապագայում դառնալ Մերձավոր Արևելքի առևտրային տարանցիկ կարևորագույն հանգույցներ:

Սիրիա

Սիրիայի աշխարհագրական դիրքը նույնպես նպաստավոր է Պարսից ծոցի ածխաջրածնային ռեսուրսների՝ Եվրոպա արտահանելու համատեքստում: Գտնվելով Պարսից ծոցի՝ ածխաջրածնային ռեսուրսներով հարուստ երկրների և Միջերկրական ծովի հարևանությամբ՝ Սիրիան կարող է դառնալ Եվրոպա ածխաջրածնային ռեսուսների արտահանման կարևոր օղակ: Այս հանգամանքը կարևոր դեր է խաղացել նաև Սիրիայում 2011թ.-ին սկսված իրադարձություններին տարածաշրջանային և միջազգային պետությունների ներգրավման գործում: Այս ամենը կարող ենք տեսնել Սիրիայով անցնող գազային երկու նախագծերի դիտարկմամբ, որոնք պետք է անցնեին Սիրիայով: Խոսքը Իրան-Իրաք-Սիրիա-Լիբանան և Կատար-Թուրքիա խողովակաշարերի մասին է: Առաջինը համարվում է իրանական նախագիծ, որը նպատակ ունի գազ արտահանել ինչպես Իրաք, Սիրիա և Լիբանան, այնպես էլ դեպի եվրոպական երկրներ: 2011թ.-ին Սիրիայում սկսված քաղաքացիական պատերազմը,

ինչպես նաև Իրանի դեմ կիրառված արևմտյան պատժամիջոցները խաթարեցին նախագծի իրագործումը:

Մյուս նախագիծը Կատարից գազի՝ Եվրոպա արտահանման ծրագիրն է, որը նախատեսվում էր Թուրքիայում միացնել Նաբուկկո խողովակաշարին [51] : Կատար-Թուրքիա խողովակաշարի՝ Սիրիայով անցնելու գաղափարը, ըստ տարբեր աղբյուրների, մերժվել է Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի կողմից՝ հաշվի առնելով իր դաշնակից Ռուսաստանի շահերը, որը համարվում է ԵՄ-ի՝ ածխաջրածնային ռեսուրսներ մատակարարող գլխավոր պետությունը[52]: Այս հանգամանքն իր ազդեցությունն ունեցավ Կատարի՝ Սիրիայի ընդդիմադիր խմբավորումներին քաղաքական, ֆինանսական և այլ օգնությունների տրամադրման վրա:

Այս երկու ծրագրերը, թեև մոտ ապագայում անիրատեսական են թվում, սակայն արագ վերափոխվող աշխարհում և «Երեք ծովերի համակարգում» չի կարելի բացառել որևէ նախագծի իրականացում:

Իրան

Հորմուզի նեղուցի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներում գլխավոր դերակատարություն ունեցող Իրանը նույնպես դիտարկում է մի շարք այլընտրանքային ուղիներ իր ածխաջրածնային ռեսուրսների արտահանման հիմնական ուղի հանդիսացող Հորմուզի նեղուցը շրջանցելու համար: Ինչպես արդեն նշեցինք, մեկ ուղղությունը հանդիսանում է Իրաքի, Սիրիայի միջոցով

[51] Նաբուկկո խողովակաշարով նախատեսվում էր Թուրքիայի միջոցով Իրաքից, Ադրբեջանից և Թուրքմենստանից գազ մատակարարել մինչև Ավստրիա:

[52] EU imports of energy products - recent developments, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/pdfscache/46126.pdf, (04.04.2019)

ածխաջրածնային ռեսուրսների արտահանումը դեպի Եվրոպա: Այս համատեքստում Իրանն ունի խոշոր ծրագիր՝ երկաթուղային կապ ապահովելու Իրանի և Լաթակիայի միջև և շատ դեպքերում Իրանի գործողություններն Իրաքում և Սիրիայում, իրանական ռազմական ուղղակի և անուղղակի ներկայությունն այս պետություններում միտված են նման երթուղի ապահովելուն[53]: Իրանը դիտարկում է նաև Եվրոպա գազի արտահանման թուրքական ճանապարհը, որի նախագիծը հայտնի է Իրանական խողովակաշար անվանումով: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանի ածխաջրածնային ռեսուրսների արտահանման շուկայի գերակշիռ մասը կազմում են Ասիայի պետությունները (Չինաստան, Հնդկաստան, Հարավային Կորեա և Ճապոնիա), Իրանը դիտարկում է մի շարք նախագծեր, որոնք կնպաստեն իրանական նավթի ու գազի արտահանման ծավալների մեծացմանը դեպի Ասիա: Այս համատեքստում կարևոր դեր է խաղում Չաբահարի նավահանգստի կառուցումը (1983թ.), որը իրանական միակ նավահանգիստն է Հնդկական օվկիանոսի վրա: Չաբահարի նավահանգիստը լայն հնարավորություններ է ընձեռում Իրանին Կենտրոնական Ասիայի, Պարսից ծոցի և Եվրոպայի միջև առևտրաշրջանառության մեջ կարևոր տեղ զբաղեցնելու համար: Այժմ իրականացվում է նավահանգստի ընդլայնման աշխատանքներ, որը պլանավորվում է ավարտել 2024թ.-ին[54]:

Գոյություն ունի նաև Իրան-Պակիստան գազային խողովակաշարի կառուցման նախագիծ, որի կառուցումը

[53] Տես հեղինակի Հարցազրույց իրանագետ Վարդան Ոսկանյանի հետ, Երևան, ապրիլի 14, 2019

[54] Chabahar Port Expansion, https://www.ship-technology.com/projects/chabahar-port-expansion/, (մուտք՝ 04.04.2019):

պլանավորվել էր ավարտել 2014թ.-ին, սակայն չիրագործվեց Պակիստանի վրա արտաքին ճնշումների գործադրման պատճառով: Իրան-Պակիստան գազային խողովակաշարի կառուցումը մեծ նշանակություն ունի Իրանի համար: Խողովակաշարը մինչև Չինաստան շարունակելու հնարավորության մասին Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները վկայում են վերոհիշյալի մասին[55]:

Ինչպես արդեն նշվել է, Իրանը դիտարկում է Օմանը որպես կարևոր տարանցիկ երկիր ածխաջրածնային ռեսուրսների՝ արևելյան Ասիա, Պարսից ծոցի արաբական երկրներ, ինչպես նաև դեպի Եվրոպա արտահանելու նպատակով: Ներկայումս Իրան-Օման խողովակաշարի հետ մեկտեղ քննարկվում է նաև խողովակաշարը Հնդկաստանի հետ կապելու հնարավորությունը:

Իրանը դիտարկում է նաև Պարսից ծոցը Կասպից ծովի հետ կապելու հնարավորությունները, որը կարող է անցնել ինչպես Իրան-Հայաստան-Վրաստան, այնպես էլ Իրան-Ադրբեջան-Վրաստան ճանապարհով:

Ամփոփելով Հորմուզի նեղուցի շուրջ ընթացող զարգացումները՝ կարելի է եզրակացնել հետևյալը՝

- Հաշվի առնելով Հորմուզի նեղուցի կենսական նշանակությունը Պարսից ծոցի ածխաջրածնային ռեսուրսների արտահանման համար և նեղուցին գործող այլընտրանքային ուղիների ոչ բավարար լինելու հանգամանքը՝ այն կշարունակի պահպանել իր կարևոր հաղորդակցային նշանակությունը

[55] Ahmadinejad Would Welcome Chinese Role In Gas Pipeline, https://www.rigzone.com/news/oil_gas/a/149224/Ahmadinejad_Would_Welcome_Chinese_Role_In_Gas_Pipeline/?oc=dst, (մուտք՝ 04.04.2019):

համաշխարհային ածխաջրածնային ռեսուրսների առևտրի համատեքստում:

 ԱՄՆ-Իրան հարաբերությունների լարվածության աճի պայմաններում Հորմուզի նեղուցի աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակությունն էլ ավելի արդիականություն է ձեռք բերում՝ հաշվի առնելով վերոհիշյալ պնդումը:

 Իրանական մի շարք ռազմական օբյեկտների՝ նեղուցին հարակից տարածքներում գտնվելը, պարբերաբար տեղի ունեցող իրանական զորավարժությունները, ինչպես նաև ամերիկյան ռազմական ներկայությունը Պարսից ծոցում կարող են ֆորսմաժորային իրավիճակ ստեղծել Հորմուզի նեղուցում «Երեք ծովերի համակարգում» տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում:

 Նեղուցի այլընտրանքային ուղիների ընդլայնումն ունի կարևորագույն աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական նշանակություն: Հորմուզի նեղուցի հաղորդակցային նշանակության նվազեցումն իր ազդեցությունը կունենա Պարսից ծոցում Իրանի դերակատարության վրա:

 Հորմուզի նեղուցը շրջանցող ածխաջրածնային այլընտրանքային ուղիների անվտանգության ապահովումը կարևոր նշանակություն կունենա հատկապես ամերիկա-իրանյան հարաբերությունների ներկայիս լարվածության թեժացման համատեքստում:

 Այլընտրանքային նոր ուղիների կառուցումը և դրանց իրագործման համար արհեստական խոչընդոտներ ստեղծելը կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանային և արտատարածաշրջանային խաղացողների՝ «Երեք ծովերի համակարգում» քաղաքականության ձևավորման համար:

 Հաշվի առնելով Օմանի աշխարհագրական դիրքը և նրա վարած, ընդհանուր առմամբ, չեզոք քաղաքականությունը տարածաշրջանում, հատկապես՝ ամերիկա-իրանյան հարաբերությունների և Ծոցի խորհրդի արաբական երկրներ-Իրան հարաբերությունների համատեքստում, կարելի է ակնկալել Օմանի դերակատարության բարձրացումը նեղուցի շուրջ տեղի ունեցող զարգացումների շրջանակներում, որտեղ Օմանը կարող է դառնալ անվտանգ հաղորդակցային հանգույց թե՛ Պարսից ծոցից ածխաջրածնային ռեսուրսների արտահանման, թե՛ Արևելք-Արևմուտք համաշխարհային առևտրի համատեքստում:

ВАЖНОСТЬ ОРМУЗСКОГО ПРОЛИВА В “СИСТЕМЕ ТРЕХ МОРЕЙ”

Аннотация

Андраник Арутюнян
Аспирант кафедры Арабситики, ЕГУ
a.harutyunian@mfa.am

Ключевые слова: *Ормузский пролив, “Система трех морей”, углеводородные ресурсы, альтернативные маршруты, нефтяные трудопроводы, нефтяная артерия*

В контексте транспортировки углеводородных ресурсов Ормузский пролив играет важную роль. В данной статье исследуются геополитические и геоэкономические возможности Ормузского пролива в свете теории «Система трех морей» и рассматриваются существующие альтернативные маршруты поставок нефти в обход Ормузского пролива. В статье также обсуждаются перспективы построения новых альтернативных маршрутов.

В статье утверждается, что Ормузский пролив будет играть важнейшую роль в «Системе трех морей», учитывая недостаточную совокупную пропускную способность альтернативных нефтепроводов

в обход Ормузского пролива. Рост напряженности между США и Ираном делает Ормузский пролив более уязвимым и взрывоопасным. В этом контексте можно прогнозировать эскалации новых столкновений в Ормузском проливе.

THE IMPORTANCE OF THE STRAIT OF HORMUZ IN THE CONTEXT OF "THREE SEA SYSTEM"

Abstract

Andranik Harutyunyan
PhD Student, Department of Arabic Studies, YSU
a.harutyunian@mfa.am

Key words: *Strait of Hormuz, "Three Sea System", hydrocarbon resources, alternative routes, oil pipelines, chokepoint*

The Strait of Hormuz plays a prominent role in international marine transportation of hydrocarbon resourses. The present article touches upon the geopolitical and geo-economic importance and significance of the Strait in the light of "Three Sea System" and goes along the investigation of existing alternative routes to export hydrocarbon resources by bypassing the Strait of Hormuz. The study discusses also new possible alternative routes to the Strait.

The study argues that the Strait of Hormuz will continue to play vital role in the "Three Sea System" taking into account the insufficient capability of alternative routes to the Strait. The ongoing tension between United States and Iran makes the strait more volatile and vulnerable. The escalation of skirmishes in the Strait is foreseen.

ՍԱՈՒԴԱԿԱՆ ԿՐՈՆԱՀՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ «2030 ՏԵՍԼԱԿԱՆԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արա Մաթևոսյան
ԵՊՀ Արաբագիտության ամբիոն, ասպիրանտ
ara.matevosyan@ysumail.am

Բանալի բառեր՝ *Հեղինակավոր գիտնականների խորհուրդ, գերագույն մուֆթի, վահաբականություն, սաուդցի կանայք, Ժամանցի սաուդական գլխավոր մարմին, Մուհամմադ բըն Սալման:*

2015թ.-ից սկսած Սաուդյան Արաբիայի համընդգրկուն զարգացմանն ուղղված վերափոխումների աննախադեպ ծրագիրը, որը ստացավ «Սաուդյան Արաբիա 2030 տեսլական» անվանումը, դարձավ Սաուդյան Արաբիայի հիմնադիր Աբդ ալ-Ազիզ ալ-Սաուդից սերող արքայազնների նոր երիտասարդ սերնդի արտաքին և ներքին քաղաքականության անկյունաքարը:

Ծրագրի մասին մանրամասներն առաջին անգամ հրապարակվեցին 2016թ. ապրիլի 25-ին թագաժառանգի փոխանորդ, տնտեսական հարցերով և զարգացման խորհրդի նախագահ, պաշտպանության նախարար, իսկ այնուհետև թագաժառանգ Մուհամմադ բըն Սալմանի կողմից[1]:

Ծրագիրը նպատակ ունի դիվերսիֆիկացնել Սաուդյան Արաբիայի տնտեսությունը՝ կրճատելով պետության կախվածությունը նավթից, զարկ տալով արդյունաբերությանը, զարգացնելով հանրային հատվածի ծառայությունները՝ առողջապահություն, կրթություն, ենթակառուցվածքներ,

[1] "النص الكامل لإعلان "الرؤية السعودية 2030، الشرق الأوسط، https://bit.ly/2XnSy59

ժամանցային տնտեսություն, զբոսաշրջություն՝ ներգրավելով արտաքին ահռելի ներդրումներ և այլն[2]:

Ծրագրի իրագործման ճանապարհին ոլորտային ցանկացած փոփոխության կիզակետում հայտնվում է հենց այդ շրջանակներում գործունեություն ծավալող հասարակության յուրաքանչյուր շերտ:

Սաուդական իսլամական կրոնահիրավական ոլորտի գիտնականները՝ ալիմներն ու ֆակիհները նույնպես անմիջական ազդեցություն կրեցին «2030 տեսլականի» շրջանակներում իրականացվող վերափոխումներից, ինչպես նաև արձագանքեցին դրանց:

Հարկ է նշել, որ սաուդական ալիմների դեռևս 18-րդ դարում Մուհամմադ իբն Սաուդի և Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի միջև կնքված դաշինքի շրջանակներում դիտարկվել է որպես կարևոր գործընկեր Արաբական թերակղզու տարածքում ձևավորված տարբեր կազմավորումների կառավարման համակարգում:

Սաուդյան Արաբիայի Թագավորության ձևավորումից հետո նույնպես կրոնահիրավական ոլորտի գիտնականները շարունակել են ազդեցիկ դեր ունենալ պետության կառավարման գործերում. նրանց հետ էր համաձայնեցվում կյանքի և գործունեության բոլոր ոլորտներին առնչվող հարցերը, քանի որ իրենք էին վկայում այս կամ այն օրենքի, որոշման կամ գործողության համապատասխանությունը կամ չհամապատասխանելը սուննիական իսլամի հանբալիական մազհաբի Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի մեկնաբանությամբ ամրագրված նորմերին:

---

[2] رؤية 2030 للمملكة العربية السعودية، المركز الإعلامي، https://vision2030.gov.sa/ar/media-center

Սաուդյան Արաբիայի ալիմների և ֆակիհների էլիտան կազմում են գերագույն մուֆթին և թագավորի կողմից նշանակվող Կրոնաիրավական ոլորտի գիտնականների հեղինակավոր մարմինը, իսկ ալ-Շեյխ ընտանիքը, որը սերում է Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբից, հատուկ արտոնյալ դիրք է զբաղեցնում պետության կառավարման որոշակի բնագավառներում:

Շուրջ 80 տարի թագավորության հիմնադիր Աբդ ալ-Ազիզ ալ-Սաուդը և նրա հաջորդները կենտրոնացնում էին պետության գաղափարախոսություն հռչակված վահաբականությունը՝ որպես իշխանության գործիք և օրինականության աղբյուր՝ իրենց ենթարկելով Արաբական թերակղզու բազմատարր բնակչությանը:

Սաուդական կրոնաիրավական ոլորտի գիտնականները, հիմնվելով վահաբականության վրա, քարոզում էին թագավորությունում քաղաքական հանդարտություն պահպանելու, մուսուլման կառավարչի դեմ չընդվզելու, չապստամբելու և նրան հնազանդվելու գաղափարը:

Սա քաղաքական աջակցություն էր սաուդական իշխող վերնախավին՝ մի կողմից դատապարտելով թագավորական ընտանիքի որոշման օրինականության դեմ որևէ ընդվզում, իսկ մյուս կողմից՝ բացառելով իշխող ընտանիքի վարած քաղաքականության նկատմամբ որևէ անհամաձայնություն:

Կրոնաիրավական ոլորտի ազդեցիկ գիտնականների հետ ունեցած փոխշահավետ հարաբերություններից բացի կրոնական ավանդույթի և բարեպաշտության պահպանումը կարևոր էր ալ-Սաուդների իշխանության համար, որն արտացոլված է Սաուդյան Արաբիայի թագավորի պաշտոնական տիտղոսում՝ որպես «երկու սրբավայրերի պահապան»:

Ալ-Սաուդ կառավարող ընտանիքի և կրոնաիրավական ոլորտի գիտնականների միջև համագործակցությունը, սակայն,

միշտ հարթ չի ընթացել: Սաուդյան Արաբիայի տարածքում ամերիկյան զորքերի տեղակայելու կապակցությամբ սաուդական իշխանություններն իրենց որոշումն օրինականորեն ամրապնդելու նպատակով պահանջեցին Կրոնաիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհրդից ֆեթվա արձակել: Խորհուրդը Աբդ ալ-Ազիզ իբն Բազի ղեկավարությամբ սկզբում հրաժարվեց աջակցել կառավարության դիրքորոշմանը, սակայն ճնշումների տակ հաստատեց թագավորի որոշումը[3]:

Սա հանգեցրեց նրան, որ կրոնաիրավական ոլորտի մի շարք ականավոր գիտնականներ միացան «Սահուա» («Զարթոնք») շարժմանը, որը 1990-ական թթ.-ից սկսեց ի հայտ գալ որպես Սաուդյան Արաբիայում աճող կրոնաքաղաքական շարժում: Ականավոր կրոնագետներ, ինչպիսիք են Սալման ալ-Աուդան և Սաֆար ալ-Հաուալին, սաուդական իշխանություններին մեղադրեցին կեղծ բարեպաշտության մեջ, ինչի արդյունքում 1994թ. Սալման ալ-Աուդան և «Սահուայի» 100 այլ անդամներ ձերբակալվեցին սաուդական վարչակարգի տապալման մեղադրանքով[4]:

Մուհամմադ բըն Սալմանի հռչակած «Սաուդյան Արաբիա 2030 տեսլականը» իր անմիջական ազդեցությունն ունեցավ Սաուդյան Արաբիայում իշխանության հետ համագործակցող կրոնաիրավական ոլորտի գիտնականների վրա: Սաուդյան Արաբիայի զարգացման նոր հայեցակարգում ի տարբերություն նախորդ ժամանակների՝ սկսեց նկատվել կրոնագետների և կրոնական ինստիտուտների դերի անկում:

---

[3] Andrew Hammond, The Islamic Utopia: The Illusion of Reform in Saudi Arabia, London: Pluto Press, 2012, p. 76.

[4] Thomas Hegghammer, Islamist Violence and Regime Stability in Saudi Arabia, International Affairs 84, no. 4 (2008), p. 704.

2016թ. Սալման թագավորի հրամանով ընդլայնվեց Կրոնահիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհուրդը[5], որում սաուդական իշխանությունները ներդրեցին սեփական քաղաքական գիծն ուղղորդող ու աջակցող կրոնական ոլորտի ներկայացուցիչների: Խորհրդի ընդլայնման հիմնական նպատակն էր խթանելու «2030 տեսլականի» շրջանակներում հայտարարված աստիճանական սոցիալական, տնտեսական ու քաղաքական գործընթացը և դյուրացնելու սպասվող փոփոխությունների ընթացքը:

Նվազեցվեց «Սաուդական կրոնական ոստիկանական ուժերի» դերը» (الأمر بالمعروف والنهي عن المنكر هيئة) մարմնի կամ այսպես կոչված : Այս ուժերը նախկինում ապահովում էին իսլամական շարիաթի նորմերի կատարումը . շրջում էին փողոցներով, շուկաներով, հասարակական այլ վայրերով, կանգնեցնում ցանկացած մեկին, ով խախտում էր հիջաբի օգտագործման կանոնները, ձերբակալում էին անբարոյականության, դավաճանության, համասեռամոլության, ինչպես նաև ալկոհոլի օգտագործման մեջ կասկածվող մարդկանց, պարտադրում էին մարդկանց աղոթել, փակում էին շուկաներն աղոթքի ժամանակ, կալանավորում էին նույնիսկ միմյանց հետ շփման մեջ գտնվող, սակայն անմիջական մերձավոր կապ չունեցող անձանց:

«2030 տեսլականի» շրջանակներում հռչակված բարեփոխումները հանգեցրին նրան, որ Ռիյադի փողոցներից դուրս բերվեցին վերոնշյալ ուժերը, նրանց լիազորությունները սահմանափակվեցին և դրվեցին Իսլամական հարցերով նախարարության վերահսկողության ներքո[6]: Սա իր տեսակով

---

[5] أمر ملكي بإعادة تكوين هيئة كبار العلماء، أرقام، 2016.12.02،
https://www.argaam.com/ar/article/articledetail/id/457340

[6] عامان على تجميد "هيئة الأمر بالمعروف" في السعودية، العربي الجديد، 12.04.2018، https://bit.ly/

եզակի էր Սաուդյան Արաբիայի պատմության մեջ: Իսլամական գործերի նախկին իրավագետ և Twitter-ի հանրային մեկնաբան Շեյխ Աբդ ալ-Ազիզ ալ-Տարիֆին քննադատեց սաուդական իշխանությունների կրոնական այսօրինակ քաղաքականությունը և անմիջապես ձերբակալվեց սաուդական իշխանությունների կողմից[7]:

Սաուդյան Արաբիայում շարիաթի օրենքները պահպանող կրոնական ոստիկանության մարմնի արձակումը և այն Իսլամական հարցերով նախարարության կազմում ընդգրկելը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: «2030 տեսլականի» իրագործման ճանապարհին որպես տնտեսության դիվերսիֆիկացիայի կարևոր ոլորտ Մուհամմադ բըն Սալմանը առաջնահերթություն է դիտարկում օտարերկրյա ներդրումների հոսքը դեպի Սաուդյան Արաբիա: Սաուդյան Արաբիայի թագաժառանգն այս համատեքստում խնդիր ունի վերափոխել պետության կերպարը, բարձրացնել Սաուդյան Արաբիայի միջազգային հեղինակությունը: Սրա հետ մեկտեղ, կրոնական ոստիկանական ուժերի ետ քաշումը նպատակ ունի զարկ տալ նաև Սաուդյան Արաբիայում զբոսաշրջության զարգացմանը: Այս կապակցությամբ սաուդական իշխանությունները 2019թ . սեպտեմբերին հայտարարեցին Սաուդյան Արաբիայի պատմության մեջ առաջին անգամ էլեկտրոնային զբոսաշրջային մուտքի արտոնագրերի տրամադրման մասին[8]: Սրա արդյունքում

[7] Maayan Groisman, Saudi rulers under fire after arrest of well-known Islamic preacher, The Jerusalem Post, 24.04.2016,https://www.jpost.com/Middle-East/Saudi-rulers-under-fire-after-arrest-of-well-known-Islamic-preacher-452154.

[8] السعودية تبدأ إدار تأشيرات سياحية للمرة الأولى، العربية، 27 سبتمبر 2019، https://bit.ly/2O4NYG1

10 օրվա ընթացքում շուրջ 24 հազար զբոսաշրջիկ է այցելել Սաուդյան Արաբիա[9]:

Հատկանշական է, որ Մուհամմադ բըն Սալմանի իրականացրած վերափոխումները երկրում արտացոլում են նրա հստակ մտադրությունը՝ չեզոքացնել «2030 տեսլականի» իրականացմանն արգելակող ցանկացած խոչընդոտ:

Այսպիսով, դառնալով Իսլամական հարցերով նախարարությունից կախյալ կառույց՝ իսլամական շարիաթի օրենքները պահպանող կրոնական ոստիկանական ուժերը զրկվեցին անկախ մարմնի իրենց նախկին կարգավիճակից:

Սաուդյան Արաբիայում հայտարարված վերափոխումների համապարփակ ծրագիրն ընդգկում էր նաև այնպիսի հարցեր, որոնք նախկինում իրարամերժ մթնոլորտ էին ստեղծում սաուդական հասարակության տարբեր շերտերում և որոնց մասին պատկերացումներում կրոնաիրավական ոլորտի գիտնականներն ունեին հստակ դիրքորոշում: «2030 տեսլականի» հռչակումից հետո սաուդական ալիմների և ֆակիհների ամենաբարձր օղակների՝ այդ հարցերի նկատմամբ արտահայտած նախկին դիրքորոշումները սկսեցին կտրականապես տարբերվել: Խոսքը հատկապես վերաբերում է Սաուդյան Արաբիայում կնոջ ազատություններին, ժամանցային տնտեսության զարգացմանը, տնտեսական մի շարք խնդիրների և այլն:

«2030 տեսլականը» հատուկ ընդգծում էր կնոջ դերը: Հարկ է նշել, որ Սաուդյան Արաբիայում կանայք կազմում են համալսարանական շրջանավարտների 50%-ը, և հասարակության ու տնտեսության զարգացման գործում վերջիններիս մասնակցությունը իշխանական շրջանակների

[9] السعودية: دخول 24 ألف أجنبي بتأشيرة سياحة خلال 10 أيام، العربية، 07 أكتوبر 2019، https://bit.ly/2OmeIAE

կարևորագույն նպատակն էր: Ըստ «2030 տեսլականի»՝ նախատեսվում է մինչև 2030թ. կանանց տնտեսական զբաղվածությունը 22 %-ից հասցնել 30 %-ի[10]:

Կնոջ զբաղվածությունը խրախուսելու համար Սաուդյան Արաբիայի իշխանությունները սկսել են զարկ տալ սպորտային համալիրներում կանանց համար նախատեսված մարզադահլիճների բացմանն այն պարագայում, երբ կրոնահիրավական ոլորտի գիտնականներն անցյալում դեմ էին հանդես գալիս կանանց ֆիզիկական վարժություններ կատարելուն: 2000-ական թթ. կանանց համար նախատեսված որոշ մարզադահլիճներ, որոնց մեծամասնությունը բացվել էին որպես առողջարաններ, փակվեցին, քանի որ կանանց համար նախատեսված մարզադահլիճների համար արտոնություններ չէին տրված[11]:

Կանանց հասարակական ակտիվությունը խրախուսելու համար հատկապես կարևոր էր «2030 տեսլականի» շրջանակներում կնոջը ավտոմեքենա վարելու իրավունք տրամադրելը:

2017թ. սեպտեմբերին Սալման թագավորը հրամանագիր արձակեց, որով կանանց թույլատրեց մեքենա վարել[12]: Դա Սաուդյան Արաբիայի Թագավորության մեջ աննախադեպ պատմական իրադարձություն էր: Իսկ արդեն 2018թ. հունիսին կանանց տրամադրվեցին առաջին վարորդական վկայականները[13]: Կրոնահիրավական ոլորտի հեղինակավոր

---

[10] رؤية 2030 للمملكة العربية السعودية، المركز الإعلامي، ص. 39، https://vision2030.gov.sa/ar/media-center

[11] Jane Kinninmont, Vision 2030 and Saudi Arabia's Social Contract Austerity and Transformation, Chatham House, July 2017, p. 30, https://www.chathamhouse.org/sites/default/files/publications/research/2017-07-20-vision-2030-saudi-kinninmont.pdf

[12] قرار تاريخي يسمح للنساء في السعودية بقيادة السيارة، الشرق الأوسط، 27.09.2017، https://bit.ly/2hyg2zZ

[13] احتفاء واسع ببدء قيادة المرأة للسيارة في السعودية، بي بي سي، 24.06.2018، https://bbc.in/2VSuIfi

գիտնականների խորհուրդը, որը Սաուդյան Արաբիայի կրոնական գերագույն մարմինն է, հանդես եկավ թագավորի արձակած հրամանագրի պաշտպանությամբ[14]:

«Սաուդական կրոնական ոստիկանական ուժերի» ղեկավար Աբդ ալ-Լատիֆ ալ-Շեյխը հայտարարել էր, որ «կնոջը մեքենա վարելու իրավունք տրամադրելը օգնում է ազատվել օտարերկրյա վարորդներից, և շարիաթով այն արգելելու ոչ մի նշան չկա»[15]:

Կրոնաիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհրդի անդամ և թագավորի գրասենյակի խորհրդական Շեյխ Աբդալլահ ալ-Մունիան գտնում է, որ «կնոջ մեքենա վարելը թույլատրված է, և չկա ոչ մի այլ բան՝ դա արգելելու համար»: Նրա հետ նույն կարծիքն է կիսում նաև ավագ կրոնագետների մարմնի մեկ այլ անդամ, թագավորական գրասենյակի խորհրդական Շեյխ Աբդալլահ իբն Մուհամմադ ալ-Մուտլակը: Իսկ շեյխ Աբդալլահ իբն Աբդ ալ-Մուհսին ալ-Թուրքին գտնում է, որ «կնոջ մեքենա վարելը չի հակադրվում Ղուրանին և Սուննային»[16]: Կանանց վարորդական վկայականներ տրամադրելու առնչությամբ Իմամ Մուհամմադ իբն Սաուդ իսլամական համալսարանի ռեկտոր, Կրոնաիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհրդի անդամ Սուլեյման իբն Աբդալլահը նշել է, որ այն «դրական, ճիշտ և հաջող որոշում էր»[17]:

Հատկանշական է, որ Կրոնաիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհուրդը, որը շտապեց ողջունել Սալման թագավորի որոշումը, 1990թ. ֆեթվա էր արձակել, որով կնոջ մեքենա վարելը համարել էր «իսլամական

---

[14] عبد الرحمن أبو الغلا، قيادة المرأة للسيارات بالسعودية حين يصبح الحرام حلالا، الجزيرة، 27.9.2017، https://bit.ly/30H7TPE

[15] Նույն տեղում:

[16] Նույն տեղում

[17] Նույն տեղում

շարիաթին հակասող երևույթ»[18] : Նույնիսկ թագավորական հրամանագրի արձակումից ամիսներ առաջ Սաուդյան Արաբիայի գլխավոր մուֆթի Աբդ Ալ-Ազիզ Ալ Շեյխը ֆեթվա էր արձակել, որով կանանց ավտոմեքենա վարելը համարել էր «չարի դարպասների բացում»[19]:

2017թ. հոկտեմբերի 30-ին «2030 տեսլականում» հռչակված ոլորտային վերափոխումների շրջանակներում Զարգացման ու ծրագրման սաուդական սպորտի մարմինը որոշում ընդունեց թույլատրել սաուդցիներին ընտանիքներով մուտք գործել սպորտային մրցաշարերի մարզադաշտեր սկսած 2018թ.-ից Ջիդդայում, Ռիյադում և Դամմամում[20]: Սա աննախադեպ էր Սաուդյան Արաբիայի պատմության մեջ նրանով, որ առաջին անգամ պետական մակարդակով թույլատրվեց կանանց մուտք գործել մարզադաշտեր:

Սաուդական հոգևորական շրջանակներում վերոնշյալ հարցի հետ կապված քննարկումները շատ հակասական են եղել: Կասիմ համալսարանի շարիաթի ֆակուլտետի իրավագիտության պրոֆեսոր Խալիդ ալ-Մուսլիհը գտնում էր, որ «ֆուտբոլային խաղերի դիտումը արգելված չէ, եթե դրանից չեն բխում չարիքներ, որոնք կապված են կնոջ պարտականությունների չկատարման, արգելված երևույթների մեջ հայտնվելու, մարմնի մերկ մասերին, խաղացողների միջև ծագած վեճերին հետևելու հետ, և որ կինը պետք է ուշադրություն չդարձնի դրանց վրա»[21]:

---

[18] Նույն տեղում

[19] Նույն տեղում

[20] رد فعل غير متوقع لأميرة سعودية بعد السماح للنساء بدخول الملاعب، Sputnik عربي، 30.10.2017، https://bit.ly/2Iqm97Y

[21] حكم مشاهدة النساء لكرة القدم، YouTube، 21.09.2011، https://www.youtube.com/watch?v=DfdinpF-8bI

Ում ալ-Կուրա համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անդամ, իրավագետ Հաթիմ ալ-Աունի ալ-Շարիֆը գտնում է, որ կանանց ներկայությունը մարզադաշտերում թույլատրելի է այն պայմանով, եթե վերջիններիս համար կան տղամարդկանցից և տեսախցիկներից հեռու առանձին հատկացված տեղեր»[22]:

Սաուդցի իսլամական քարոզիչ Մուհամմադ ալ-Արիֆին, որի հետևորդների թիվը Twitter-ում հասնում է շուրջ 20 մլն.[23], կտրականապես դեմ է արտահայտվել կանանց մարզադաշտեր մուտք գործելը թույլ տալու որոշմանը՝ համարելով, որ «կինը պետք է մնա իր տանը և նրան ընդհանրապես վայել չէ հաճախել մարզադաշտեր»[24]:

Հետաքրքրական է, որ Սաուդյան Արաբիայի Կրոնահիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհուրդը մինչև այժմ ոչ մի ֆեթվա չի արձակել՝ արգելելու կամ խրախուսելու Սաուդական սպորտի մարմնի կողմից ընդունված որոշումը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Սաուդյան Արաբիայում ցանկացած որոշում մինչև դրա ընդունումն ու հրապարակումը պետք է արժանանա սաուդական ղեկավարության հավանությանն ու ստանա վերջինիս գոհունակությունը, ապա պարզ է դառնում, որ վերոնշյալ որոշումն ամբողջությամբ վայելում է իշխանության աշխարհիկ ու կրոնական շրջանակների վստահությունը:

Կնոջ ազատությունների ընդլայնման տեսանկյունից ուշագրավ էր սաուդական իշխանությունների կողմից պետության թագաժառանգի մակարդակով կանանց հիջաբ և աբայա կրելու

---

[22] فتوى تجيز حضور النساء للملاعب ووجوب تخصيص أماكن بعيدة لهن عن الرجال وعدسات الكاميرات، YouTube، 24.03.2012، https://www.youtube.com/watch?v=6srkWYUQyUA

[23] الصفحة الرسمية لد. محمد العريفي على توتير، https://twitter.com/mohamadalarefe?lang=en

[24] الشيخ محمد العريفي: لايجوز دخول النساء للملاعب وسيفتح باب سوء .. حكم دخول النساء لملاعب كرة القدم، YouTube، 29.10.2019، https://www.youtube.com/watch?v=GMI0GDmXPYY

ոչ պարտադիր լինելու մասին հայտարարությունը [25] : Այս հայտարարությանը հաջորդեց նաև Կրոնաիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհրդի անդամ Աբդալլահ ալ-Մուտլակի հայտարարությունը, որում ասվում էր, որ «իսլամական աշխարհում կանանց 90 %-ը աբայա չի կրում և չգիտեն, թե ինչ է այն... աբայայով, թե այլ բանով կծածկի նա իրեն, նպատակը ծածկելն է»[26]:

Սաուդյան Արաբիայում կանանց զբաղվածությունն ու հասարակական ակտիվ գործունեությունը պետական ամենապատասխանատու պաշտոններում խթանելու տեսանկյունից աննախադեպ էր նաև այն, որ Սաուդյան Արաբիան իր պատմության մեջ առաջին անգամ արտերկրում սաուդական դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար նշանակեց կին դիվանագետի: 2019թ. փետրվարի 23-ին Սալման թագավորի հրամանագրով Ռիմա բինթ Բանդար ալ-Սաուդը նշանակվեց ԱՄՆ-ում Սաուդյան Արաբիայի դեսպան, ով մինչև այդ զբաղեցնում էր Հասարակական սպորտի սաուդական միության նախագահի պաշտոնը[27]:

Սաուդական իշխանությունները կնոջ ազատությունների ընդլայնման համատեքստում ավելի հեռուն գնացին՝ թույլատրելով 21 և դրանից բարձր տարիք ունեցող կնոջը ճանապարհորդել և անձնագիր ստանալ առանց ընտանիքի

---

[25] محمد بن سلمان: العباءة السوداء ليست شرطا والأهم الحشمة، العربية، 20 مارس 2018، https://bit.ly/2O220rN

[26] عضو بارز بهيئة كبار العلماء السعودية يعتبر أن المرأة ليست ملزمة بارتداء العباءة، فرنس 24، 10 فيراير 2018، https://bit.ly/2KyL75J

[27] بعد أن أصبحت أول سفيرة للسعودية.. منصب رياضي جديد لريما بنت بندر، بي بي سي، 2.03.2019، https://cnn.it/2VM94JP

արական սեռի անդամներից որևէ մեկի նախնական համաձայնության[28]:

Այսպիսով՝ սաուդական կառավարող շրջանակները, բարձրացնելով կնոջ դերը և նրան տալով սոցիալ-հասարակական ու քաղաքական արտոնություններ, միաժամանակ կրոնաիրավական ոլորտի գիտնականների ճնշման և նրանց դերի նվազեցման շնորհիվ կոտրում էին նախկինում ունեցած կարծր դիրքորոշումներն ու «2030 տեսլականի» շրջանակներում կնոջը դիտարկում էին որպես ապագա Սաուդյան Արաբիայի կարևոր հենք:

«2030 տեսլականի» շրջանակներում Սաուդյան Արաբիայում ժամանցային տնտեսությունը խթանելու նպատակով կառավարությունը հիմնել է Ժամանցի ընդհանուր մարմին (الهيئة العامة للترفيه)[29], կազմակերպելու և արտոնելու ժամանցային ու մշակութային միջոցառումները:

Ժամանցային տնտեսության խթանման համար 2017թ. ապրիլին Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Մուհամմադ բըն Սալմանը հայտարարեց մայրաքաղաք Ռիյադից հարավ մինչև 2022թ. կառուցել «Ժամանցային քաղաք», որը ներառելու է բաց կենդանաբանական և գրավչությունների այգի՝ կատարելագործված Six Flags ամերիկյան բրենդի կողմից՝ որպես թագավորության ապագա սերնդի հետաքրքրությունները, մշակութային և սոցիալական կարիքները բավարարող կենտրոն[30]:

---

[28] السعودية تسمح للمرأة بالسفر بدون الحصول على موافقة ولي أمرها، فرنس 24، 2 أغسطس 2019، https://bit.ly/2r43IQy

[29] الهيئة العامة للترفيه، الموقع الرسمي، https://www.gea.gov.sa/en/

[30] Sovereign fund to invest in new Saudi entertainment city, Reuters, 8.04.2017, http://www.reuters.com/article/saudientertainment-six-flags-entmt-idUSL8N1HG04I

Ժամանցի ընդհանուր մարմնի կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների անցկացումը ամերիկյան բազմաթիվ ժամանցային բրենդների էր բերում Սաուդյան Արաբիա՝ ներառյալ WWE ըմբշամարտը և Monster Jam մեքենաների մրցումները[31]: Ամենամեծ հանրային ուշադրություն գրաված միջոցառումներից մեկը, թերևս, 2017թ. փետրվարին Ջիդդայում կայացած Comic Con-ն էր՝ փոփ մշակույթի, կատակերգության և խաղերի միախառնում, որին ներկա էին մոտ 10.000 սաուդցիներ[32]: Միաժամանակ, սաուդական մասնավոր ընկերություններից մեկը ծրագրել էր արքայադուստր Նուրայի համալսարան բերել ամերիկացի ռեպեր, դերասան և կատակերգու Մայք Էպսին, սակայն այն չեղարկվեց դրա դեմ Twitter-ում իրականացրած արշավից հետո սաուդական պահպանողականների ջանքերով[33]:

Նախկինում Սաուդյան Արաբիայում ժամանցային միջոցառումների ու վայրերի նկատմամբ սաուդական կրոնագետների քննադատությունը շատ սուր բնույթ էր ստանում՝ արտահայտվելով ամենաբարձր մակարդակներով: Սաուդյան Արաբիայի նախկին գլխավոր մուֆթի Շեյխ Աբդ ալ-Ազիզ իբն Բազը[34] ֆեթվա էր արձակել, որով մուսուլմաններին արգելվում էր

[31] Նույն տեղում

[32] Paul, K., Comics and music shows in Saudi Arabia draw rebuke from clerics, Reuters, 26.02.2017, http://www.reuters.com/article/uk-saudi-entertainment-comic-con-idUSKBN16228T

[33] Fareed, A., Cancellation of Riyadh show leaves some Saudis jubilant, many others upset, Arab News, 12.12.2016, http://www.arabnews.com/node/1022761/saudi-arabia

[34] Շեյխ Աբդ ալ-Ազիզ իբն Բազը եղել է Սաուդյան Արաբիայի գլխավոր մուֆթին 1992-1999թթ.:

հաճախել կինոթատրոններ այն հիմքով, որ այն խրախուսում է անբարոյականությունը[35]:

Ժամանցի ընդհանուր մարմնի նախագահը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ շարիաթի օրենքները պահպանվում են ժամանցային միջոցառումների ժամանակ[36]: Կրոնահիրավական ոլորտի հեղինակավոր գիտնականների խորհրդի մեկ այլ անդամ՝ Աբդալլահ ալ-Մուտլակը, տեղական ռադիոյով հայտարարել էր, որ Ժամանցի ընդհանուր մարմինը պետք է հանրաքվե անցկացնի՝ որոշելու, թե արդյոք համերգներն անհրաժեշտ է արտոնել, թե՝ ոչ[37]:

2017թ. հունվարին Սաուդյան Արաբիայի գլխավոր մուֆթի Աբդ ալ-Ազիզ Աբդալլա ալ-Շեյխը հայտարարություն տարածեց՝ նախազգուշացնելով կինոթատրոններից և համերգներից բխող բարոյական վտանգների, արժեքների կործանման և սոցիալ-հասարակական ու բարոյաէթիկական առումով արատավոր այլ երևույթների մասին[38]: Սակայն ընդամենը մեկ տարի անց հեռուստատեսային հաղորդման ժամանակ երաժշտական խնջույքների և կինոթատրոնների վերաբերյալ նրան ուղղված հարցմանն ի պատասխան Սաուդյան Արաբիայի գլխավոր մուֆթին խուսափեց դրանց մասին կարծիք արտահայտել՝ «փառք

[35] Jane Kinninmont, Vision 2030 and Saudi Arabia's Social Contract Austerity and Transformation, Chatham House, July 2017, p. 29, https://www.chathamhouse.org/sites/default/files/publications/research/2017-07-20-vision-2030-saudi-kinninmont.pdf

[36] ابراهيم الهطلاني، في السعوديّة فقط حفلات الغناء تفتح أبواب الشرّ!، Al-Monitor، 20.02.2017، https://bit.ly/2HU2PyJ

[37] Նույն տեղում:

[38] مفتي السعودية: الحفلات الغنائية والسينما فساد للأخلاق ومدمرة للقيم ومدعاة لاختلاط الجنسين، بي بي سي عربي، 14.01.2017، http://www.bbc.com/arabic/middleeast-38623226

տալով Աստծուն, որ Թագավորությունն ապրում է կայունության և անվտանգության մեջ»[39]:

Մուհամմադ իբն Սալմանի հռչակած բարեփոխումների համատեքստում առանցքային տեղ է զբաղեցնում նաև սաուդական Արամկոյի արժեթղթերի առաջնային հանրային առաջարկի ներկայացնելը, որի մասին բազմաթիվ հայտարարություններից հետո 2019թ. նոյեմբերին սաուդական իշխանությունները սաուդական ներքին շուկա հանեցին ընկերության 1.5 % արժեթղթերը սահմանափակ ժամանակահատվածով[40]: Սրան անմիջապես հետևեց Աբդալլահ ալ-Մուտլակի ֆեթվան առ այն, որ «այն թույլատրելի է և օրինական», և արտահայտեց այն միտքը, որ «նա և իր գործընկերները նույնպես կարող են մասնակցել դրան»[41]:

Սաուդական կրոնական իշխանության ամենաբարձր մակարդակով վերոնշյալ հարցերի վերաբերյալ դիրքորոշումների փոփոխությունը, դրանց վերաբերյալ դիրքորոշում չարտահայտելը կամ միանգամայն կողմ արտահայտվելը վկայում է այն մասին, որ Մուհամմադ բըն Սալմանի հռչակած «չափավոր, միջին և աշխարհի առջև բաց իսլամը»[42] նոր յուրահատուկ նախագիծ է, որտեղ անհնազանդ ձայները լռեցվում են, իսկ քննադատությունները ենթարկվում են հարկադրական հնազանդության[43]: Սա նշանակում էր, որ սաուդական իշխող

---

[39] استمع الى رد مفتي السعودية الصادم على اقامة حفلة غنائية مختلطة في جدة،YouTube ، 18.03.2019، https://www.youtube.com/watch?v=Req-1bDZTXM

[40] بأرقام محبطة لـ"بن سلمان".. أرامكو تبدأ الاكتتاب المتعثر، الخليج أونلاين، 17 نوفمبر 2019، https://bit.ly/34305qT

[41] المطلق: الاكتتاب في أرامكو جائز.. وسنشارك فيه، عكاظ، 16 نوفمبر 2019، https://bit.ly/2OqZM4m

[42] محمد بن سلمان: نعود إلى الإسلام المعتدل المنفتح، الشرق الأوسط، 25.10.2019، https://bit.ly/2gC6aFh

[43] Madawi al-Rasheed, Salman's 'moderate Islam': A Disneyland for robots, not an open society, Middle East Eye, 27.10.2017, https://www.middleeasteye.net/opinion/salmans-moderate-islam-disneyland-robots-not-open-society

վերնախավը շարունակում է օգտագործել կրոնաիրավական ոլորտի գիտնականների էլիտայի ներուժը՝ ծրագրի շրջանակներում հռչակված դրույթները կյանքի կոչելու և օրինական հիմքով ամրապնդելու համար:

Չնայած վերը թվարկված ոլորտներում իրականացված մի շարք վերափոխումների, որոնք առաջին հայացքից ընկալվում են որպես բարեփոխումներ սաուդական հասարակության համար, առկա է նաև հակառակ պատկերը: Սաուդյան Արաբիայում կանանց իրավունքների համար մղվող պայքարում գործունեություն ծավալող անհատները ենթարկվում են սաուդական իշխանությունների կոշտ արձագանքին, ձերբակալվում են ու ենթարկվում են խոշտանգումների[44]:

Սրա հետ մեկտեղ, Սաուդյան Արաբիայում մեծ ճնշումների են ենթարկվում «Սահուա» կրոնաքաղաքական շարժման ականավոր գործիչները, մասնավորապես՝ Սալման ալ-Աուդան, որին առաջադրվել է 37 մեղադրանք ահաբեկչությանը աջակցելու մեջ[45]: Կրոնաիրավական ոլորտի շատ գիտնականներ փոխում են իրենց հռետորաբանությունը, որպեսզի իրենց զերծ պահեն իշխանությունների հետապնդումներից: «Սահուա» շարժման գաղափարակիցներից Աուադ ալ-Կարնին, ով աջակցում էր Սալման ալ-Աուդային, 2019 թ. մայիսին ներողություն խնդրեց սաուդական իշխանություններից «Սահուայի» անունից, իր աջակցությունը հայտնեց Մուհամմադ բըն Սալմանի «չափավոր իսլամին» և մեղադրանքներ հնչեցրեց Կատարի հասցեին[46]:

---

[44] شاهد: البرلمان الأوربي يتبنى قرارا يدين اعتقال الناشطات السعوديات، الجزيرة، 14 فبراير 2019، https://bit.ly/2qsjC7f

[45] تهمة.. محكمة سعودية تطالب بإعدام سلمان العودة، الجزيرة، 4 أغسطس 2018، https://bit.ly/37l3Jjs

[46] نشرة الرابعة |عائض القرني: يعتذر باسم الصحوة للمجتمع السعودي، يوتيوب، 7 مايو 2019، https://www.youtube.com/watch?v=yR70QEJRgYQ

Նման այլևայլ փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մուհամմադ բըն Սալմանը ներկայումս ցանկանում է տեսնել քաղաքականապես ճնշող իսլամ, որը քրեականացնում է կառավարիչների դեմ ցանկացած անհնազանդություն:

Սաուդյան Արաբիան, որը երկար տարիներ կառավարվում էր Ալ-Սաուդ ընտանիքի արքայազների և կրոնագետների իշխանության միջև եղած հավասարակշռության հիման վրա, ժամանակի ընթացքում զարգացում է ապրել, և կարող ենք ասել, որ վերջին 5 տարիների ընթացքում ուժերի հավասարակշռության նժարը աստիճանաբար սկսել է թեքվել արքայազնների կողմը: Այս ամենը Մուհամմադ բըն Սալմանի քաղաքականության արդյունքն է:

Թեև Մուհամմադ բըն Սալմանի քաղաքականությունը նպաստել է իշխանության ներսում հավասարակշռության փոփոխությանը, դա չի նշանակում, որ նա ցանկանում է ամբողջությամբ ազատվել հասարակության վրա կրոնահրավական ոլորտի գիտնականների ունեցած ազդեցությունից: Մուհամմադ բըն Սալմանի՝ թագաժառանգի պաշտոնը ստանձնելուց հետո նոր բովանդակություն է հաղորդվել սաուդական կրոնահրավական ոլորտի գիտնականների և իշխանական կառավարող շրջանակների միջև համագործակցությանը:

Սաուդյան Արաբիայի թագաժառանգը միաժամանակ քաջ գիտակցում է, որ նա մի կողմից ունի սաուդական ալիմների և ֆակիհների կարիքը՝ իր իշխանության օրինականությանը և քաղաքականությանը կրոնի տեսանկյունից աջակցելու համար, իսկ մյուս կողմից նա չի ցանկանում, որ նրանք պահպանեն հասարակության վրա ազդեցության և գերիշխանության իրենց կարողությունը: Նա ցանկանում է տեսնել կառույց, որը չունի

հատուկ ինքնիշխանություն, որի իշխանությունը սնվում է սաուդական կառավարող շրջանակներից և, որը իրականացնում է ոչ այլ ինչ, քան կառավարող վարչակարգին անհրաժեշտ աջակցության տրամադրում:

Սրա հետ մեկտեղ, Մուհամմադ բըն Սալմանը չի ցանկանում նաև ակնհայտորեն դիտարկվել որպես ապագա թագավոր, ով չի հարգում ավանդույթը: Առավել կարևոր է այն, որ կրոնական նման քաղաքականությունը չաղավաղի «իսլամի պահապանի» պատկերը, որն ավանդաբար օգտագործվում է որպես ամբողջ իսլամական աշխարհի վրա ազդեցության տարածման միջոց: Դրա շնորհիվ է, օրինակ, որ Իսլամական համագործակցության կազմակերպության, Իսլամական զարգացման բանկի կենտրոնակայանները գտնվում են Ջիդդայում, այլ ոչ թե մուսուլմանական պետության ազդեցիկ մայրաքաղաքում:

Սաուդյան Արաբիայում պետության և կրոնի, կամ ավելի ճիշտ, կրոնական ու աշխարհիկ իշխանությունների միջև միահյուսված հարաբերությունները շատ զգայուն ու խորը արմատավորված են: Այդ դաշինքը խարխլելու ցանկացած փորձ պետք է ենթարկվի բացառիկ, հաշվենկատ հանրային ու մտավոր երկխոսության գործընթացի, որը պետք է առաջ գա որպես հանրային պահանջ, այլ ոչ թե որպես վերից վար պարտադրված որևէ այլ բան[47]: Մուհամադ իբն Սալմանը ներկայումս հաշվենկատ է կրոնական իշխանության նկատմամբ, բայց միաժամանակ մարտահրավեր է Ալ- Սաուդների և Վահհաբի կրոնահրավական ոլորտի գիտնականների միջև գոյություն ունեցող գործընկերության համար:

[47] Salman's vision for Saudi Arabia may lead to popular resistance, Middle East Eye, 26.10.2017, https://www.middleeasteye.net/opinion/salmans-vision-saudi-arabia-may-lead-popular-resistance

Մուհամմադ բըն Սալմանի՝ իշխանության ղեկը ստանձնելուց ի վեր Սաուդյան Արաբիայում հոգևոր իշխանության ազդեցությունը նվազում է: Սա թույլ է տալիս ենթադրելու, որ Սաուդյան Արաբիայի երիտասարդ թագաժառանգը երկիրը տանում է դեպի այլ ծայրահեղության: Ներկայումս թագավորական հրամանագրերը հնարավորություն են տալիս շրջել հոգևոր իշխանության ստատուս-քվոն՝ պարտադրելով հասարակությանը աշխարհիկություն և հորդորելով նրանց ընդունել այն, ինչ ավանդաբար հռչակվել է օտար արժեք կամ հավատամք:

THE REACTIONS OF THE SAUDI RELIGIOUS SCHOLARS TO THE "SAUDI VISION 2030"

Abstract

Ara Matevosyan
PhD Student, Department of Arabic Studies, YSU
ara.matevosyan@ysumail.am

Key words: *Council of Senior Scholars, Grand Mufti, Wahhabism, Saudi Women, Saudi General Entertainment Authority, Muhammad bin Salman.*

Since its announcement in 2015, the "Saudi Vision 2030" proclaimed by the crown prince of the Kingdom of Saudi Arabia Muhammad bin Salman as the backbone of the country’s internal and external policy, has had its impact on the Saudi religious scholars and clerics defining their new role in the Saudi society.

The role of both religious scholars and institutions has begun to decline in the concept of development of Saudi Arabia. Extending the Council of Senior Scholars and involving supporters of their own political line besides reducing the role of the Committee for the Promotion of Virtue and the Prevention of Vice, the crown prince of Saudi Arabia intended to

neutralize any obstacle preventing the implementation of the "Saudi Vision 2030".

The different views expressed earlier by the Saudi religious scholars on women's freedom, development of entertainment industry in addition to a number of other issues in Saudi Arabia began to differ dramatically.

Muhammad bin Salman's "Moderate Islam" is a politically repressive Islam, where disobedient voices are silenced, critics are subjected to coercive obedience, and any disobedience to rulers is criminalized.

РЕАКЦИЯ САУДОВСКИХ РЕЛИГИОЗНО-ПРАВОВЫХ УЧЕНЫХ НА «ВИДЕНИЕ САУДОВСКОЙ АРАВИИ 2030»

Аннотация

Ара Матевосян
Аспирант кафедры Арабситики, ЕГУ
ara.matevosyan@ysumail.am

Ключевые слова: *Совет старших ученых, Верховный муфтий, ваххабизм, женщины Саудовской Аравии, Главное управление по развлечениям Саудовской Аравии, Муххамед ибн Салман.*

С 2015 года «Видение 2030», провозглашенное наследником престола Саудовской Аравии Мухаммедом ибн Салманом в качестве основы внутренней и внешней политики страны, оказало влияние также на саудовских религиозно-правовых ученых, определив их новую роль в общественной жизни Саудовской Аравии.

В концепции развития Саудовской Аравии роль религиозных ученых и учреждений начала снижаться в отличии от прежних времен. Расширение Совета старших ученых, привлечение в него сторонников их собственной политической линии, а также снижение роли Комитета по поощрению добродетели и удержанию от порока отражало явное намерение наследника престола Саудовской Аравии

нейтрализовать любые препятствия, мешающие реализации «Видения 2030».

Взгляды, высказанные ранее саудовскими религиозными учеными в отношении свободы женщин, развлечений и ряда других вопросов, начали резко различаться.

«Умеренный Ислам» Мухаммеда ибн Салмана - это политически репрессивный ислам, в котором оглушаются непокорные голоса, критики подвергаются принудительному послушанию, а любое неповиновение правителям криминализируется.

2019 թ.

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական համալսարան
Ալեք Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ
Հեռ.՝ (37460) 710594
էլ.փոստ՝ cccs@ysu.am
www.cccsysu.com